

**Mkrtut'iwn hayots', vrats', abkhazats' ew alanats' i Srboyn  
Grigorē / Nikoghayos Mar; t'argmaneats' i hay Husik Ark'episkopos.**

Marr, Nikolaĭ Īkovlevich, 1864-1934.

Vagharshapat : Elek'trasharzh Tparan Mayr At'oroy S. Ējmiatsni, 1911.

<http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752>

# HathiTrust



[www.hathitrust.org](http://www.hathitrust.org)


**Public Domain in the United States,  
Google-digitized**

[http://www.hathitrust.org/access\\_use#pd-us-google](http://www.hathitrust.org/access_use#pd-us-google)

This work is deemed to be in the public domain in the United States of America. It may not be in the public domain in other countries. Copies are provided as a preservation service. Particularly outside of the United States, persons receiving copies should make appropriate efforts to determine the copyright status of the work in their country and use the work accordingly. It is possible that heirs or the estate of the authors of individual portions of the work, such as illustrations, assert copyrights over these portions. Depending on the nature of subsequent use that is made, additional rights may need to be obtained independently of anything we can address. The digital images and OCR of this work were produced by Google, Inc. (indicated by a watermark on each page in the PageTurner). Google requests that the images and OCR not be re-hosted, redistributed or used commercially. The images are provided for educational, scholarly, non-commercial purposes.

GRAD  
EREN  
1254  
BUHR

C 524,188







Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅՈՑ, ՎՐԱՑ, ԱՐԽԱԶԱՑ ԵՒ ԱԼԱՆԱՑ


Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ.

Ի ուսւ հրատարակութենէ, կատարելոյ ըստ արտ-  
բերէն օրինակի յուսուցչապետ Նիկողայոսէ Մառ,

Թարգմանեաց Ի հայ

Մխարան Ս. Էջմիածնի ՅՈՒՍԻԿ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

(Արտատպելալ «ՂԱՐԱՐԱՏ» ամսագրէ)



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ելեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1911

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

Original from  
UNIVERSITY OF MICHIGAN

Grad  
Ench  
1254  
Buh



Digitized by Google

Original from  
UNIVERSITY OF MICHIGAN

KAD  
5117  
254  
1199

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ազգ. Հայ թարգմանչի . . . . . 1.
- Ս. Գրեգոր Լուսաւորչի չարչարանքը . . . . . 4.
- Հալաճանք քրիստոնեաների դէմ և Ս. Հռիփսիմեաց  
փորձութիւնը, չարչարանքն ու նահատակութիւնը . . . . . 8.
- Ս. Գրեգոր Լուսաւորչի վերապից ելնելը, քարոզչու-  
թիւնը, նահատակ կոյսերի վկայարանների շինութիւնը . . . . . 26.
- Տրդատ թագաւորը հրաւիրում է իւր տէրութեան  
իշխաններին, Աբխազների, Վրաց և Ալանաց թագաւոր-  
ներին գալ Վաղարշապատ . . . . . 48.
- Մեհեանների կործանումն . . . . . 51.
- Ս. Լուսաւորչի ընտրութիւնը և Կեոարիա գնալը Հա-  
յոց եպիսկոպոս ձեռնադրուելու համար . . . . . 55.
- Ս. Գրեգոր Լուսաւորչի վերադարձը. զօրքի, թագա-  
ւորի և աւագանու մկրտութիւնը Եփրատ գետում, Բա-  
գաւանի մօտ . . . . . 65.
- Ս. Գրեգոր Լուսաւորչի եպիսկոպոսներ է ձեռնա-  
դրում և ուղարկում վրաց, ալանաց ու աբխազաց աշ-  
խահները և Հայաստանի զանազան գաւառները . . . . . 70.
- Ս. Գրեգոր Լուսաւորչի առանձնանալը. նրա վրթա-  
նէս և Արիստակէս որդիների Հայաստան բերուելը Կե-  
օարիայից. Արիստակէսի տեղակալութիւնը . . . . . 73.
- Ս. Լուսաւորչի և Տրդատ թագաւորի Հռովմ գնալն  
ու վերադարձը . . . . . 74.
- Արիստակէսի մասնակցութիւնը Նիկիոյ ժողովին . . . . . 81.
- Յառաջաբան ուս հրատարակչի . . . . . 83.
- Վերջարան ուս հրատարակչի—  
Հայոց դարձի մասին զրոյցի զարգացումն. ազգայնա-  
կան միտումն արդի հայ Ազաթանգեղոսի մէջ . . . . . 86.
- Աղճատաբանութիւններ ու վրացական բառեր հայ  
Ազաթանգեղոսում . . . . . 87.
- Լուսաւորչի բառի նշանակութիւնը . . . . . 88.
- Ազաթանգեղոսը վիպական զրոյց է, իսկ Լուսաւորչի  
պատմական անձն, սահմանափակ շրջանակի գործիչ, և  
յայտնի է գառնում յոյն գրականութեան ու նրա միջոցով  
արար գրականութեան մէջ է. դարից սկսած . . . . . 90.
- Ս. Գրեգորի պաշտամունքը վրաց մէջ, քաղկեդոնական  
և հակաքաղկեդոնական ազգեցութիւնը. Ս. Գրեգորի, որ-

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

պէս յոյն միսիօններ, պաշտամունքի վերաբերութեամբ յու-  
նական ազդեցութիւնը. Հայ եկեղեցու սիրիական ծագումն. 92.

Ս. Լուսաւորչի պատմութեան արաբական վերսիան 97.

Արաբական վերսիայի մէջ յիշուած ազգերը . . . . 99.

Արաբական վերսիայի լեզուական աղաւաղումները 100.

Արաբական վերսիայի ծագումն . . . . . 102.

Ազգերի և ցեղերի վրացերէն յորջորջման ստուգաբա-  
նութիւնը . . . . . 105.

Յոյն եկեղեցու ազդեցութիւնը կրօնակից վրացական  
ցեղերի լեզուի մէջ . . . . . 110.

Լազերի այլասեռումն յունական և վերջը թուրքա-  
կան ազդեցութեամբ: Վրացիների առաջին մետրօպօլի-  
տը. Սեբաստիայի քառասուն մանկունք. Մատվիլի և  
Նաբալաբեվի վանքերը, Ս. Յովհաննու Կարապետի պաշ-  
տամունքը վրաց մէջ . . . . . 112.

Արաբական վերսիայի յոյն բնագրի և թարգմանու-  
թեան հանդամանքը ժամանակի և տարբերութեան վե-  
րաբերութեամբ: Տարբերութիւնը հայ Ագաթանգեղոսի և  
արաբ վերսիայի և դիտողութիւն այդ առիթով ամփոփ-  
ուած 13 կէտերում . . . . . 115.

Ս. Գրիգորի վարքի արաբական վերսիայի մշակողը  
ըստ ազգի և դաւանութեան . . . . . 123.

Հայերի ձգտումն Ագաթանգեղոսով և Ս. Մեսրոպի  
վարքով, պանծացնել իրանց ազգը հանդիսացնելով Ս.  
Գրիգորին՝ լուսաւորչ և Ս. Մեսրոպին տառերի գտնող  
նաև շրջակայ ազգերի—վրաց աղուանից, արխազաց . . 124.

Ս. Գրիգորի վարքի արաբ. վերսիայի և նրա յոյն բնա-  
գրի քաղկեդոնական թարգմանչի նպատակը . . . . . 125.

Եզրակացութիւն . . . . . 127.

Հայ թարգմանչի ծանօթութիւնները . . . . . 129.

Յատուկ անունների ցանկ . . . . . 134.

Վրիպակ . . . . . 139.





## Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայոց, վրաց, արխազաց եւ արաբաց ի սրբոյն Գրիգորէ.  
(Крещеніе армянъ, грузинъ, абхазовъ и алановъ Святѣмъ Григоріемъ)

(Արաբական վերսիա)

## Ա Ձ Դ

Աւսուցչապետ պ. Ն. Մառը 1902 թուին իւր ճանապարհորդութեան ժամանակ Սինայի Ս. Նկատարեկեայ վանքի Մտենազարանի № 460 արաբերէն ձեռագրից լուսանկարած լինելով վերև յիշուած վերնագիրը կրող հատուածը, 1905 թուին հրատարակուած է ռուսերէն թարգմանութեամբ, յառաջաբանով, վերջաբանութեամբ և մանրադննին ծանօթութիւններով:

Անկասկած հայերիս համար չի կարող հետաքրքիր չը լինել այգալիսի մի հրատարակութիւն, քանի որ այն վերաբերուած է մեր և մեր հարևան ազգերի քրիստոնեայ դառնալուն: Այս հրատարակութիւնը աւելի ևս հետաքրքիր է նրանով որ բովանդակելով հոյ Ագաթանգեղոսի պատմութեան ընդհանուր դժերը, աւելի սեղմ է և տեղ տեղ էլ բոլորովին տարբերուած է նրանից, որից պէտք է եղբակացնել, որ արաբական այս վերսիան չը լինելով հայ այժմեան Ագաթանգեղոսի թարգմանութիւնը չի կարող և նրա բնագիրը համարուել. այլ, ինչպէս պ. Ն. Մառն էլ նկատուած է, եղել է Ս. Լուսաւորչի գործունէութեան մասին մի զրոյց, որը հաւանորէն Ս. Մետրոպ թարգմանիչը մշակել է յունասիրական ոգւով և յետոյ, շատ յետոյ, հայ յունասերները ազգային միտումներով ընդարձակել են և աուել են այժմեան խմբագրութիւնը, որ յայտնի է Ագաթանգեղոս անունով: Արաբական վերսիան էլ նոյն սկզբնագրից կատարուած յունարէն խմբագրութեան մի թարգմանութիւն է, սակայն առանց հայ այգայնական միտումների: Այս մասին բանասէրների հարցասիրութեան լիովին բաւականութիւն է տալիս պ. Ն. Մառը իւր յառաջաբանով և վերջաբանով, որ հայ աշխարհաբաւ թարգմանութեամբ դնում ենք դրքիս վերջում, որովհետև այդ յառաջաբանն ու վերջաբանը բացատրելով հրատարակութեան հանդամանքը, պարզում ու լուսաբանում են բաւական խնդիրներ մեր և մեր հարևան ազգերի անցեալի և իրար հետ ունեցած առնչութեան մասին:

«Մկրտութիւն հայոց, վրաց, աբխազաց և ալանաց ի Ս. Կրիստոսէ» վերնագրով արաբական վերոհայկ ռուսերէն թարգմանութիւնը վերածեցինք գրաբառ հայերէնի որպէս զի նրանք, որ չը գիտեն արաբերէն և ռուսերէն, իմանան թէ ինչ է այդ արաբական վերոհայկ, և ինչ առընչութիւն ունի Ազաթանդեղոսի հետ: Եւ որ դիւրացնենք հայ Ազաթանդեղոսի հետ համեմատութիւնը: Բացի սրանից, գրաբառը օտարերկրեայ հայ և օտարազգի բանասէրներէ համար աւելի մատչելի է և ընտել:

Հայերէնի վերածելիս, աշխատել ենք պահել ռուսերէն թարգմանութեան բառերի և մաքերի դասաւորութիւնը, համարելով այն հարազատ արտայայտիչ արար վերոհայկ, որի մասին կատակած չի կարող լինել ի նկատի ունենալով քիանական պ. Ն. Մառի մանրագնին, և իսկական ուսումնականի յատուկ ճշգրտութիւնն ու զգուշաւորութիւնը: Այսպէս ղեկավարուելով՝ զանց արինք դնել ծանօթութիւնները, որ վերաբերում են ռուս թարգմանութեան հանդամանքներին և հայ ընթերցողներէ համար այնքան էլ կարևոր չեն, քանի որ իբրև բնագիր ծառայելու է մեզ ռուս հրատարակութիւնը: և որպէս զի ռուսերէնը որպէս բնագիր պատկերացնենք մեր թարգմանութեան մէջ, հայ ոճական գեղեցկութիւնը զոհել ենք. աշխատելով միայն չը մեղանչել լեզուի կանոններէ դէմ:

Ռուս հրատարակիչը ձեռքի առկ է ունեցել 1882 թուին Քիֆլիզում հրատարակուած Ազաթանդեղոսը, և համեմատութեան համար դրել է նրա երեսահամարն ու տողաթիւը արմատի լուսանցքում: այդպէս վարուեցինք և մենք:

Արաբական վերոհայկ սկզբում պակաս է և սկսում է 66-րդ երեսից: Ռուս հրատարակութեան երեսահամարները և աւելագրութիւնները մենք դրինք անկիւնաւոր փակագծերի մէջ իսկ մերը՝ կլոր: Մի քանի կարևոր ծանօթութիւններ կը գնենք դրքի վերջում: Լուսանցքի թուերից առաջ հմ. նշանակում է համեմատ:

Մեր թարգմանութիւնը հրատարակելու համար մի փոքրիկ նմուշ ուղարկելով խնդրեցինք պ. Ն. Մառի հաճութիւնը, և բազմ ունեցանք ստանալ հետեւեալ նամակը. «1909, մայիս 11. «...» Ձեր գիտաւորութեան իրագործումը, կարծեմ, շատերին, շատ շատերին բարարութիւն կը տայ մանաւանդ առհասարակ գրասէրներին, որոնք բնա ռուսերէն չգիտեն: Խօսք չկայ, որ ես թոյլ եմ տալիս, մինչև անգամ ուրախութեամբ իմացել եմ դորժիդ, այսինքն թարգմանութեան վերջօնալը: Ի հարկէ մանրակրկիտ բանասիրական ծանօթութիւնները արաբերէն բնագրի վերաբերութեամբ են, աւելորդ են ձեր ընթերցողներէ համար: Թարգմանութեանդ լեզուն սահուն է և հեշտալուր . . . »

Յուսիկ արեպիսկոպոս.

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

[ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ, ՀՌԻՓՍԻՄԵԱՅ  
ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՅ]

. . . . .  
. . . . .

[ԵՐ. 67] Պատասխանի ետ նմա երանելին և 72, 4.  
ասէ. «Արդարև, աներևոյթ գործ է այդ Աստուծոյ  
իմոյ, «Սերմանի անարգութեամբ և յառնէ զօ-  
րութեամբ, սերմանի տկարութեամբ և յառնէ  
ողջամբ» ։ «Լալով լայցեն, որք սփռեն զսերմն» ք,  
որ մեկնի. շարչարանօք, վշտօք և տանջանօք մի-  
անգամ կրեմք զայն վասն Աստուծոյ, բայց յոր-  
ժամ հասանեն հունձք՝ ժողովեմք զխրճունս ուրա-  
խութեան, խնդութեան և ցնծութեան» :

Յայնժամ ասէ թագաւորն. կռփեցէք զգլուխ 72, 49.  
դորաւ եւ ասէ ցերանելին. «Ա՞յս է ուրախու-  
թիւնն քո, զորմէ խօսէիր. եւ սուրբն ասէ ցնա.  
«Արդարև, այդ է ուրախութիւնն իմ. եթէ ոչ  
քրտնիցի մշակ, ոչ համբերիցէ խորշակի արե-  
գական՝ ցորենովն իւրով ոչ կարէ ցնծալ. Թա-  
գաւորն ասէ. «Վասն այդորիկ մնայ քեզ քրտնիլ  
ի ժամուս յայսմիկ և տոչորիլ» :

Եւ ասա հրամայեաց, զի բերիցեն քացախ և 73, 7.  
բորակ, և արկցեն զսուրբն ի վերայ թիկանց,  
զգլուխն ճւղիցեն ի մամուլ պրկեալ, առցեն  
փողս եղեգան և փչիցին ի ռնգունս նորա աղ  
և բորակ խառնեալ ի քացախ՝ առ ի ընուլ յուն-  
չըս. եւ կատարեցին զհրամանն :

... Ա. Կորնթ. Ժե. 43: | ք. Սաղմ. ճիե. 6.

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

73, 42. Եւ հրամայեաց բերել պարկս, և ընուլ մոխրով հնոցի, մուծանել զգլուխ նորա ի պարկն յայն և զբերան պարկին կապել շուրջ զպարանոցաւն նորա, զի մի շնչեոցէ և ի շնչելն՝ զմոխիրն ժողովեսցէ ի ռնգունս: Եւ եթող զնա յայս տանջանս զաւուրս վեց: Յետ այսորիկ հրամայեաց ածել զնա առ ինքն և քակել զպարկն ի պարանոցէն:

73, 22. [Եր. 69] Յայնժամ թագաւորն ասէ ցնա. «Ուստի եկիր: Համարիմ եթէ եկեալ իցես յարքայութենէն, զորմէ խօսէիր մեզ»: Ասէ Գրիգոր. «Եւ զարեւ եկի յարքայութենէ՝ զորմէ պատմէի քեզ. այժմիկ Աստուածն իմ արժանի արար զիս տանջանաց վասն անուան իւրոյ: Եւ յիւաւի պատրաստեաց նա ինձ զարքայութիւն, որ ոչ անցանէ: Եւ վասն մոխրոյս՝ պատրաստեաց նա ինձ անթառամ ծաղիկս, և փոխանակ քացախոյն՝ անսպառ ուրախութիւնս»:

74, 8. Յայնժամ լցաւ թագաւորն բարկութեամբ, և  
75, 4. հրամայեաց կախել զնա և քերել զերկոսին կողս նորա երկաթեայ քերչօք, Եւ լցաւ վայրն, ուր զերանելին տանջէին, արեամբ նորա: Յայնժամ ասէ նա ցտուրբն. «Հնազանդիցիս այժմ ինձ, և առնիցես զոր կամիս, ո՞վ Գրիգոր»: Ետ պատասխանի երանելին և ասէ. «Պահեմ զուխտն Աստուծոյ իմոյ, զոր ուսեալ եմ ի մանկութենէ իմմէ. Աստուծոյ, որ կարէ փրկել զիս յամենայն նեղութեանց և ի վշտաց: Իսկ դու, քանզի ոչ ճանաչես զնա, հրամայես վարիլ ընդ իս սպառնալեօք, զի հեռացեալ ի բարեպաշտութենէս և ի սիրոյս, որ առ Քրիստոս՝ մնայցեմ ի յաւիտենական տանջանս: Յայնժամ թագաւորն ասէ ցնա. «Ո՞ւր է Աստուածն քո: Եկեսցէ այժմ և փրկեսցէ զքեզ ի ձեռաց իմոց»:



Եւ հրաման ետ թագաւորն բերել և սփռել <sup>75, 18.</sup>  
տատասկա ի վերայ սալաշկին: Եւ հրամայեաց  
արկանել զսուրբն ի մերկուց ի վերայ նոցա, և  
ճնշել ի վերուստ զի տատասկքն անցանիցեն  
ընդ մարմին նորա: Եւ եղև այնպէս:

Եւ ի վաղիւն կոչեաց զնա [արքայ] և ասէ <sup>76, 3.</sup>  
ցնա. «Ձարմանամ' և յոյժ ի վարանս եմ', զի դու  
ցայս վայր կենդանի մնացեր և ոչ ընկճեցար ի  
բազում տանջանացդ զորս պատրաստեցի քեզ,  
և ոչ այոջափ միայն, այլ խօսիս դեռ յանդգնորար  
թէ ցանկաս մահուան, մինչդեռ ի բազմաց հետէ  
ի տանջանս ես»:

Յայնժամ սուրբն Գրիգոր ասէ. «Ոչ իմով զօ- <sup>76, 9.</sup>  
րութեամբ է զի տանիմ' ես այսց չարչարանացս, որ  
ի քէն, այլ զօրանամ' յԱստուած իմ' ի Յիսուս  
Քրիստոս: Նա է, որ զօրացուցանէ զիս ի սէր  
իմ' որ առ նա, զի գիտացես, եթէ ոչ որ կա-  
րէ մեկնել զիս ի սիրոյ նորա», նոյնպէս և զայ-  
նոսիկ, որք յուսան ի նա քանզի տայ նա զօ-  
րութիւն և կարողութիւն՝ որք մահուամբ չափ  
տանջին վասն նորա: Յամօթ լիցին՝ որոց ոչ  
գոն օրէնք. կեղծաւորք, որպէս ետդ, գիտացեն  
զտկարութիւն իւրեանց և ամաչեսցեն յաւուր  
գալստեան նորա:

Եւ վասն այսորիկ յոյժ զայրացաւ թագաւորն <sup>76, 23.</sup>  
Տրդատ և հրամայեաց դնել ընդ ոտիք նորա  
երկաթեայ սանս և երկաթեայ բեւեռօք պնդել.  
և կախեալ կայր գլխիվայր զաւուրս երիս: Եւ  
եղև այնպէս:

Յառաջ քան զվախճան երրորդի աւուր հրա- <sup>77, 4.</sup>  
մայեաց [արքայ] ածել զնա և ասէ ցնա. «տե-  
սանես, սկ Գրիգոր, զի ոչ փրկեաց զքեզ սնոտի  
հաւատն քո, զորմէ պատմէիր. և ոչ ազատեաց

— Հում. ք. 39.

զքեզ ի ձեռաց իմոց»։ Ասէ Գրիգոր. «Այդուիկ իսկ գիտացի զտկարութիւն զօրութեան քո, ս՛վ բռնաւոր, զի ոչ կարացեր մեկնել զիս ի սիրոյս որ առ Աստուածն իմ, և ոչ կարացեր պատիր բանիւ քով զառածանել զմիտս իմ ի սիրոյ Նորա։ Ոչ երկնչիմ ի տանջանաց քոց. քանզի զօրութեամբ [71] Աստուծոյ իմոյ Յիսուսի Քրիստոսի պատերազմեցայ ընդ թշնամւոյն, որ և մարտնչի ընդ ճշմարտութեան։ Եւ զմարմինն իմ ետու ի տառապանս և ի չարչարանս՝ քանզի գիտեմ, եթէ կամիցիմ կամ ոչ՝ ոչ զերծանիցիմ յայնմանէ, եթէ քակտելոց է եղծանելի մարմինս, և պարտի ապականիլ հնացեալ և եղծանելի մարդոյն, մինչև եկեսցէ Փրկիչ և Արարիչն ամենայնի և նորոգեսցէ միւսանգամ զհնացեալ մարդիկ՝ որք կեցին յաշխարհի ի խաղաղութեան և ըստ հոգւոյ, որբութեամբ և փառաբանելով, ճշմարտութեամբ և երկիւղիւ, զայնստիկ նորոգեսցէ զարդարեսցէ և յարուսցէ. իսկ զհեթանոս, զամբարիշտս և զկռապարիշտս, որք ոչ երկնչին յԱստուծոյ, առաքեսցէ յանչէջ և ի յաւիտենական հուրն և հատուցէ նոցա ըստ յանցանաց նոցա, մանաւանդ այնոցիկ, որք նման քեզ պաշտեն զդրօշեալս»։

78, 44. Եւ յորժամ լուաւ թագաւորն զայս, բարկացաւ յոյժ և ասէ ցնա. «Բան քո, եթէ Աստուած քո նորոգեսցէ զիս յօրն վերջին, ոչ խռովեցուցանէ զիս. այլ զայրանամ, զի նա, որպէս ասացերդ ցիս, առաքելոց է զիս ի հուրն անչէջ։ Բայց ես փութայց պատուել զքեզ յայսմ իսկ աշխարհի, շիջանելի հրով, զի տեսից, փրկեսցէ զքեզ Աստուածն քո»։

78, 48. Յետ այնորիկ հրամայեաց թագաւորն հալել արճիճ յերկաթեայ կաթսայի, և արկանել զնա անդ։ Եւ եղև այնպէս։ Եւ յորժամ ընկեցին զնա,

ճարպն ամենայն ճենճերեցաւ արտաքս, և սուրբն  
մնաց կենդանի և զգաստ՝ պատասխանն՝ առնե-  
լով բանից արքայի:

Եւ յոյժ զարմացաւ թագաւորն ընդ համբե. 78. 24.  
րութիւն նորա, և ասէ ցնա. «զիւրդ զգաս այժմիկ  
զքեզ ի հոգի և ի մարմին, զի այսքան չարչա-  
րիս յինէն զանազան տանջանօք»: Պատասխանի  
ետ սուրբն Գրիգոր և ասէ. «Ոչ սպաքէն ասացի  
քեզ, զի դու փորձես զմեզ, զձառայքս Աստու-  
ծոյ ճշմարտի, իսկ նա տայ մեզ զօրութիւն և  
համբերութիւն՝ առ ի յամօթ առնել զթշնամիս  
նորա և զհակառակորդս, որպէս ետդ: Եւ յայսմ-  
հետէ պատսպարեալ ուխտիւքս այսօրիւք և հովա-  
նաւորեալ շնորհօք, զոր նա, վասն անուան իւրոյ,  
պարգևեաց մեզ ամենեցուն սիրտոցս զնա  
ի հատուցանել մեզ յերկրորդ գալստեան Իւրում.  
Քանզի զօրութեամբ նորա տանիւք դառն չար-  
չարանաց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի»:

Յայնժամ թագաւորն հրամայեաց կապել 80. 45.  
զձեռս և զոտս Սրբոյն Գրիգորի և կախելով  
զպարանոցէ նորա շղթայ ասնել ի քաղաքն Ար-  
տասատ և ընկենուլ ի վիրապն խոր լի օձիւք և  
կարճօք, զի սողունքս այսօրիկ ուտիցեն զնա: Եւ  
եզև այնպէս: Յետ ժամանակաց թագաւորն Տըր-  
դատ չուեաց յայս քաղաք ի ձմերել:

Եւ եկաց երանելին յայնմ վիրապի զամս հնգե- 82. 4.  
տասանս Կերակուր, ըմպելի և հոգք վասն նորա  
լինէին սղորմութեամբ Աստուծոյ, իսկ սողունք  
ոչ մերձենային ամենին ի նա:

Եւ յետ այսօրիկ թագաւորն Տրդատ հրամա- 82. 20.  
յեաց պետաց և կուսակալաց իւրոց շրջել ընդ  
ամենայն երկիրն, որք ընդ իշխանութեամբ իւ-  
րով, և հրամայեաց մարդկան բերել զոհս աս-

տուածոց և երկիրպագանել նոցա, և ամենեցուն,  
 որք ոչ բերէին զոհս և ոչ երկրպագանէին աստուա-  
 ծոց, կապէին զձեռս [եր. 73] և զստս և ածէին առ  
 թագաւորն: Եւ սաստկանայր բարկութիւնն նորա  
 ի վերայ հաւատացելոց ի Քրիստոս, և ասէ. «Սոքա  
 են, որք արգելուն զժողովուրդն երկրպագել  
 կուոց»: Եւ խոստանայր պարգևս մեծամեծս իւրա-  
 քանչիւրում, որ յանդիման առնիցէ քրիստոնեայ.  
 Իսկ թագուցանողացն սպառնայր սոսկալի տան-  
 ջանս և մահ չարաչար ճրատ նմին օրինակի, որ-  
 պէս [ասէր նա] արարի ընդ սիրելին իմ՝ Գրի-  
 գոր, որ ոչ անսաց ինձ և յետ զանազան տան-  
 ջանաց արկի գնա ի վիրապ զի մեռանիցի ի սող-  
 նոց, և ոչ անխայեցի ի սէր նորա վասն երկիւ-  
 ղին՝ որ առ աստուածս: Իսկ դուք ընկալարուք  
 զփրկութիւնն յաստուածոց վասն երկիւղին ձերոյ»:

88, 5. Եւ յայնմ ամի թագաւորն Գիողղետիանոս  
 ի խնդիր կնոջ եղև զի ամուսնացի ընդ նմա.  
 և յղեաց նա առ ամենայն պատկերագործս, որք  
 յամենայն ի պետութեան իւրում և հրամայեաց  
 նոցա շրջել ընդ ամենայն երկիր իւր և ուր դտա-  
 նիցեն կոյս զեղեցիկ, նկարիցեն զնա և զպատ-  
 կերն հասուցանիցեն առ նա:

88, 18. Եւ իջին նոքա ի Հռովմ. յետ որոյ զնացին  
 ի վանս՝ որ անդ, ուր կրօնաւորէին կանայք. էր  
 նոցա, վանամայր, զոր կոչէին Գայիանէ: Կերակուր  
 նոցա յամենայն ի կեանս նոցա չէր ինչ ի ցորենոյ,  
 այլ թրջեալ ոլոռն և բոյս: Յանգ յազօթս կային  
 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ի վանսդ էր  
 կոյս մի Հռիփսիմէ անուն՝ ի զարմէ հաւատա-  
 ցեալ թագաւորաց:

88, 1. Հրեշտակք անհաւատին և պատկերագործք  
 իբրև տեսին զկոյսն և [հայեցան] ի գեղեցկութիւն  
 նորա, այս [տեսիլ, տեսարան] յոյժ զարմացոյց



զնոսա: Յայնժամ նկարեցին զպատկերս և զգեղեցկութիւնն նորա և ընդ այնմ՝ [ընդ պատկերին] գնացին առ թագաւորն:

Եւ թագաւորն իբրև հտես զպատկերս զայս, 89, 7.  
յոյժ զարմայաւ: Ուստի տռաքեաց արս բերել զնա առ ի ունել զնա ի կին: Եւ հրամայեաց ամենայն պետաց, աւագաց և իշխանաց իւրոց գալ ի հարսանիս:

Եւ իբրև հայեցան սուրբքն ի թշնամոյն չարա- 89, 20.  
կամութիւնն առ նոսա և զնետս, զորս լարէին 90, 28.  
առ ի մարտնչել ընդ նոսա, կային յազօթս արտասուօք և հեծութեամբ, խնդրելով յԱստուծոյ զօրացուցանել զնոսա և փրկել ի փորձութենէ: Եւ որպէս ի միոյ բերանոյ՝ ասէին:

«Ո՛վ Տէր տերանց, Աստուած՝ աստուծոց, 91, 8.  
թագաւոր յաւիտենից և Աստուած երկնի, որ արարեր քոյով բանիւ զլոյս, զերկինս և զերկիր, և զարդարեցեր զնոսա, որ ստեղծեր զմարդ ի հողոյ, զարդարելով զնա իմաստութեամբ և շնորհօք, և կարգեցեր ի վերայ ամենեցուն, — զօրութիւնն ապաւինելոցս ի Քեզ՝ Դու ես:

«Օգնեան մեզ, մինչ դարձեալ ի պատերազմի 91, 47,  
եմք, և փրկեան զմեզ յայսմ՝ չար փորձութենէ և յորոգայթից սատանայի, զի փառաւորեսցի անուն քո, և բարձրացի եղջիւր եկեղեցւոյ Քո. զի և մեք վերստին արժանասցուք հասանել ի նաւահանգիստ արքայութեան Քո. զի մի պակասեսցի իւղ լապտերաց մերոց. մի շիջցի լապտեր հաւատոյ մերոյ. մի հասանիցէ լուսոյ շաւղաց մերոց խաւար գիշերոյ. մի դարձուցուք զոտան մեր ի նշուլից լուսոյ Քո. մի կուրասցուք աչօք և մի լիցուք օտար ի ճառագայթից ճշմարիտ լուսոյ քո. մի յափշտակեսցէ մահաբեր արծուին

զսերմն», զոր սերմանեաց ի մեզ միածին Որդին՝  
Քո Տէր մեր [Եր. 75] Յիսուս Քրիստոս մի  
աղարտեացէ պատառող գաղան զամբռութիւն  
հօտի Քո. մի զօրասցի յափշտակիչ գայլն ի վե-  
րայ գառանց քոց. մի ապականեացէ զնոսա և  
մի ցրուեացէ զհօտ եկեղեցւոյ Քո»:

92, 16. «Դու, Տէր Աստուած, որ առաքեցեր զմիա-  
ծին Որդի Քո վասն վրկութեան տիեզերաց, և  
իբրև եկն՝ լցոյց խնդութեամբ զաշխարհ, և վա-  
մենեսեան կոչեցեր Իսրայէլ ըստ անուան. Եւ  
մեք պահեցար զպատուիրանս Քո, զորս պա-  
տուիրեցեր: «Եւ յորժամ հալածիցին զձեզ ի  
քաղաքիս յայսմիկ փախիջիք յայլ. ոչ կարիցեն  
սպառել զքաղաքս Իսրայէլի, մինչև եկեսցէ Որդի  
մարդոյ ք»:

92, 24. «Պահեան, Տէր, զանձինս յուսացելոց ի Քեզ-  
զի մի անօրէնք պղծեցեն զմեզ: Մի տար շանց-  
իշխանութիւն ի վերայ սրբութեան մերոյ, և ա-  
րանց, որք որպէս զխոզս են,—ի վերայ մար-  
գարտի կուսութեան մերոյ ք: Մի շարժեացէ հեղեղ  
մեղաց զհիմունս եկեղեցւոյ Քո սրբոյ, որ շի-  
նեալ է յառաքելոց քոց հաստատուն հաւա-  
տովք ի վերայ անշարժ վիմի ք, և ի գլուխ ան-  
կեան որոյ կայ Տէր Մեր Յիսուս Քրիստոս» Ե:

93, 17. «Եւ Դու, ով Տէր, նայեաց յերկնից ի սրբու-  
թենէ Քումմէ, և հաստատեն զմեզ ի ճշմար-  
մարտութեան Աւետարանի Քո, և տնօր մեզ գնալ  
ըստ կամաց Քոց: Եւ եղիցի մեզ մասն, որպէս  
խոստացար, ի լոյս հարսանեաց յարկի Քո: Ա՛ւ  
զմեզ ընդ հովանեալ թևոց Քոց: Հաճոյ եղեալ  
Քեզ, արժանի լիցուք ըմպել ի բաժակէն մար-

«. Մատթ. 14. 4.

բ. Մատթ. 23

գ. Մատթ. 5. 6:

դ. Մատթ. 5. 24.

ե. 1. Պետր. ր. 6:

տիրուցեան առ ի ընդունել զպսակն արդարութեան յաւուր գալստեան Քո փառօքս:

Եւ յորժամ կատարեցին նորա զաղօթս, երա- 94, 9.  
նելի կոյսն Հռիփսիմէ, մայր վանիցն Գայիանէ  
և ժողով կուսանաց ուխտս եղին պահպանել  
զկուսութիւն իւրեանց ի պղծութենէ: Յայնժամ  
փախեան և եկին ի Հայաստան աշխարհ ի տե-  
ղին կոչեցեալ Արարատ: Չև ևս մտեալ ի քա-  
ղաք՝ մերձեցան յայգի խաղողոյ, ուր կայր հըն- 95, 5  
ձան և թաքեան անդ: Գործովք ձեռաց իւրեանց  
հոգային զաւուրն պարէն. առաքէին զձեռա-  
գործս և ի փոխարէն գնէին ի քաղաքի կերա-  
կուրս:

Եւ եղև ի Հռովմ, յամենայն կողմանս Հռով- 96, 15.  
մայ և ի մէջ այլ ազգաց խռովութիւն մեծ ի  
պատճառս նոցա: Եւ արքայ ի ձեռն հրեշտակաց  
իւրոց յլեաց թուղթ փան սրբոց առ արքայն  
Հայաստանի Տրդատ, որ ընկալաւ զթուղթն մե-  
ծաւ խնդութեամբ. և ի թղթի [գրեալ] էր այս ինչ:

«Ի Դիոկղետիանոսէ կոյսերէ, աշխարհակալ 97, 1.  
արքայէ, Տրդատայ, բարեկամի իմում և եղբոր,  
Ողոյն ի մերմէ տէրութենէ [մեծութենէ]:

«Գիտակ առնեմք զքեզ ամենայնի, որ ինչ գոր- 97, 5.  
ծեցաւ ի մէնջ առ քրիստոնեայս, որք պաշտեն  
զխաչեցեալ այր մի, երկիրպագանեն փայտի և  
պաշտօն մատուցանեն ոսկերաց մեռեալ մարդ-  
կանց: Ձմահ, որ վանն հաւատոյ, համարին փառս  
և պատիւ: Հետեալ են ի կրօնից մերոց. սուրբ  
մեր արդէն բթացան ի վերայ նոցա, բայց նոքա  
ի մահուանէ ոչ սարսեցան: Մոլորեալ են հաւա-  
տով առ այր մի հրէայ. անգուշեն զտեարս. ար-  
համարհեն զամենազօր աստուածս:

«Առ ոչինչ համարին զգորութիւն լուսաւորացն 97, 28.  
մեծաց, այսինքն արեգական, լուսնի և այլ աս-  
տեղաց. և ասեն ստեղծուածք են խաչելոյն: Եւ

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

փութանակի մուրեցուցանեն զմարդիկ աշխարհի  
ի կուսն պաշտամանէ, Բաժանեն զարս [Եր. 77] և  
ի կանանց և զկանայս յարանց, բազմանան ի  
պատճառս անսահման համբերութեանն ի տան-  
ջանս, անչափ կամակորութեանն և բարեպաշտու-  
թեան, Հեղուճն արեան նոցա առաւել ևս հաս-  
տատէ զնոսս ի հաւատս իւրեանց:

98, 14. «Եւ ահա տեսի ի մէջ նոցա կոյս մի գեղեցիկ  
յոյժ, որ պաշտէր զհաւատս նոցա, և ի մտի  
եդի ածել զնա ի կին. բայց նոքա յանդգնե-  
ցան փախուցանել զնա յինէն. ոչ երկեան յար-  
քայական մեծութենէս և ոչ սարսեցան բնաւին  
ի սպառնալեաց իմոց և ի վրիժուց. փախուցին  
զկոյսն, ընդ նմա և զայլս բազումս, որք և չոգան  
ի տէրութիւն քո:

99, 4. «Զհետ լեր, ջանս գտանել զնոսս, սպան զայ-  
նոսիկ, որք ընդ նմա են, իսկ զկոյսն յղեա՛ առ  
ինս եթէ սիրիցես, առ զնա քեզ. քանզի ար-  
դարև չեմ տեսեալ յերկրիս Հռովմայ գեղեց-  
կութիւն նման նմա: Եւ խաղաղութիւն ընդ քեզ»:

99, 14. Եւ իբրև ընթերցաւ Տրդատ զթուղթ արքա-  
յի, փութանակի հրամայեաց խնդրել զմատաղ  
կոյսն յամենայն ի տէրութեան իւրում, և խոս-  
տացաւ բազում շնորհս այնմ, որ զնա բերիցէ:

99, 20. Եւ եղև խռովութիւն մեծ յերկրին Հայոց ի  
պատճառս կուսին: Սակայն սուրբ հօտն Քրիս-  
տոսի թաքուցեալ էր ի հնձանս՝ մերձ ի Վաղար-  
սապատ քաղաք, բայց յետ սակաւ առուրց գտան  
նոքա:

100, 3. Զէր անկ թաքչիլ ճշմարիտ գանձուն, և ոչ լու-  
սոյ ճրագի գտանել ընդ գրուանաւ. այլ արժան  
էր ճշմարտութեան յայտնել յաշխարհի զկոյս  
իւրս: Որպէս ասաց Տէրն սշակերտաց իւրոց:

• Մատթ. և. 43:

«Այսպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցի Հայր ձեր, Որ յերկինս է» —

Հայեցաւ այր ոմն ի հնձանն, յորում էին նորա 101, 43.  
(կուսանք). գնաց և յայտնեաց զնոյանէ. և ժողովուրդն եկն առ նոսա, կալան զնոսա և հսկէին զաւուրս երիս.

Եւ իբրև տեսին սուրբքն զպաշտօնեայս չարին, 102, 9.  
զի հսկէին, դիտացին զի հասեալ է առ նոսա փորձութիւն. համբարձին զաչս յերկինս մեծաւ ողբով և ձեռս յերկինս կարկառեալ՝ կական բառնային աղաչելով զԱյն, Որ փրկեացն զնոսա յառաջին փորձութենէ. Իսկ յետ երից աւուրց եհաս բանն առ թագաւորն. Եւ իբրև առաւօտ եղև՝ ետ հրաման վասն Գայիանեայ և որոց ընդ նմա էին կուսանք, զի լիցին ի դիպահոջ ի միասին. իսկ առ երանելին Հռիփսիմէ յղեաց երիվար յիւրոյ մեծութենէ և հանդերձս թանկագինս, զի մտցէ ի քաղաքն մեծաւ պատուով. Եւ զի լուեալ էր զհրաշալի գեղեցկութենէ նորա, արկ ի միտս ունել զնա կին:

Եւ իբրև երանելին Գայիանէ ետես՝ որ ինչ 103, 48.  
եղևն՝ ասէ յՀռիփսիմէ. «յիշեա, որգեակ իմ, զի թողեր զժառանգութիւն հօր քո և սիրեցեր զլոյս ճշմարտութեան թագաւորին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի, որ խոստացեալ է զանճառ բարիս սիրելեաց իւրոց. Յիշեա, զի գուարհամարհեցեր զանցաւոր թագաւորն և ընտրեցեր զգովութիւն երկնաւոր թագաւորին, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և մի տար զամբժութիւն կուսութեան քո շանցս այսօցիկ, այսինքն չար [եր. 79] ամբարշտացս Մի պղծեր, որգեակ իմ,

— Մատթ. Ե. 46.

զսուրբ տաճար քո, այլ լիցի այն տաճար Տեառն մերոյ, Որ ուսոյց մեզ զճանապարհն ճշմարտութեան ի մանկութենէ մերմէ մինչև ցայսօր ի փառաւորեալ արքայութեան իւրում:

104, 44. Եւ իբրև ետես Հռիփսիմէ զամբօխն, շուրջ պատեալ զինքեամբք, և լուաւ զբանս Գայիանեսայ, զօրացաւ հոգևով սրբով և հաւատով, յորում հաստատեալ էր ի մանկութենէ, նշանաւ խաչին կնքեաց զինքն և ասաց.

104, 49. «Տէր իմ և Աստուած իմ ամենակալ, Որ բանիւ Քով ածեր յէութիւն զերևելիս և զաներևոյթս, որք ոչ էին, և հրամանաւ Քով կայ երկիր. Դու, Որ յութերորդ ազգս ածեր ջրհեղեղ ի վերայ ամբարիշտ և չար մարդկան, և զօրեղին Քո զնոյ ազատեցեր տապանաւ, որ է օրինակ խաչին Քո.

105, 44. «Դու, Որ փրկեցեր զԱբրահամ ի մէջ ամբարշտացն Քանանու, և զաղախին Քո զՍարրա անմեղութեամբ իւրով ազատեցեր ի մահաբեր թունոյ. Դու, Որ սիրեցեր զժառայն Քո զԻսահակ. Որ ազատեցեր զաղախին Քո զՌեբեկա ի փղշտացուց, — պահպանեալ չմեզ յուղիղ հաւատս որ ի Քեզ, և մի մատնել չմեզ, Տէր, վասն անուան Քո՝ զոր ուսուցեր մեզ, վասն բանին Քո՝ զոր աւանդեցեր շրթանց մերոց յազագս վրդկելոյ զմեզ յորոգայթից թշնամւոյն. Դու եղեր զանուն Քո ի վերայ մեր և արարելու մեզ տաճար վասն աստուածութեան Քո. և Դու ասացեր, եթէ անուն Քո սուրբ օրհնաբանեսցի ի սիրտս մեր և օրէնք Քո հաստատեսցին ի միտս մեր. Ահաւասիկ ժողովեալ են չարք՝ անարգել զսուրբ անուն Քո, որ դրոշմեալ է ի մեզ, և պղծել զտաճար սրբութեան Քո. Եւ յիրաւի, տկարք և անարժանք եմք. բայց Դու, առատ սիրով քով պահպանեա զանձինս մեր ի պղծութենէ չարաց:



«Ո՛վ փրկիչ և մարդասէր, շնորհեա մեզ յաղ- 106, 7.  
թութիւն, զի յաղթեսցուք անուամբ Քով սըր-  
բով փորձութեանս, որ շուրջ պատեալ է զմեօք,  
և պահպանեան զանբժութիւն կուսութեան մե-  
րոյ, զի յորժամ հասանիցեմք ի ժողով սրբու-  
թեան Քո, ընկալցուք զհատուցումն, զպատրաս-  
տեալն ամենեցուն, որք գողան յերկիւղէ Քու-  
մէ և պահեն զպատուիրանս Քո»

«Դու Տէր, որ փրկեցեր զնոյ ի ջրհեղեղէ, 106, 16.  
ազատեան և զմեզ յայնցանէ, որոց ոչ գոն օրէնք,  
ի հեղեղէ աստի՛ որ շուրջ զմեօք պատեալ է:  
Դու, Որ ի տապանի ապրեցուցեր զգազանս,  
զկենդանիս, զթռչունս և զսողունս, ևս առաւել  
ազատեան զՔո պատկեր, որ Քեզ երկիրպագանէ  
և պաշտէ սրբութեամբ»:

Եւ իբրև աւարտեաց զաղօթս՝ շուրջ պատեցին 106, 24.  
զնովաւ նախարարք և պետք առ ի ածել զնա  
փառօք առ արքայ, զի լինիցի նմա կին:

Եւ իբրև տեսին սուրբքն զի զինուորք պա- 107, 9.  
տեցին զնոսա շուրջանակի, ամբարձին զձեռս,  
սկսան ողբալով աղաղակել յերկինս և խնդրել  
փրկութիւն յամենակալէն Աստուծոյ. զի ապրե-  
ցուցէ զնոսա ի գայթակղութենէ հակառակոր-  
դին [եր. 81]. լալով գոչէին ասելով. «Չիք ի  
մեզ, Տէր, ցանկութիւն. անցաւոր գանձք ոչ  
զառածանեն զսիրտս մեր: Չիք ի մեզ սէր ի  
ի հրապոյր քաղցր կերակրոց նորա և ոչ տա-  
րակուսեմք յերկիւղէ, ի հալածանաց և ի տան-  
ջանաց նորա, և եթէ չարչարիցիմք ևս բիւր  
անգամ, ոչ զարհուրիցուք և ոչ փոխանակի-  
ցուք զյաւիտենական կեանս և զանճառ բարիս  
ընդ անցաւոր և թշուառ կենացս այսոցիկ: Եւ  
արդարև, ոչ խորութիւն, ոչ բարձրութիւն, ոչ  
խստութիւն, ոչ տանջանք, ոչ հարուածք, ոչ

սպառնալիք, ոչ խոստմունք, ոչ պէս պէս չարչարանք, ոչ հուր, ոչ ջուր, ոչ սուր, ոչ վայելք, ոչ յսլովութիւն մթերից, ոչ սր այժմ և յապայն, ոչ կեանք, ոչ մահ—ոչ կարեն մեկնել զմեզ ի սիրոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ քանզի վասն Նորա պահեցաք զկուսութիւն և զանբծութիւն մեր. ի Նա յուսամք, սիրոյ Նորա ըղձամք, զի կացցուք առաջի Նորա գահութեամբ և օրհնութեամբ»։

108, 14. Եւ իբրև աւարտեցին զաղօթս իւրեանց՝ լուան զսաստիկ որոտումն յերկնից, մինչ զի ամենայն ժողովեալքն զարհուրեցան և հարան զգետնի։ Եւ լուան ձայն յերկնից, որ ասէր. «Քաջալերեցարձք, պինդ կացէք. զի ես ընդձեզ եմ՝. ես եմ, Որ պահեցի զձեզ և ի սրբութեան ձերում. հասուցի զձեզ յայս աշխարհ, զի փառաւորեսցի անուն իմ ի մէջ ժողովրդեանս այսմիկ. Ուրախ լերձք և մի երկնչիք, և եկայք ի տեղի խնդութեան և հրճուանաց, զոր պատրաստեցի ձեզ և ամենեցուն որք սիրէքդ զանուն իմ»։

109, 5. Եւ որոտումն յերկարեցաւ ժամս ձիգս։ Իշխտներ և նախարարարք, որք խնդրէին զկոյսն, լուան զայս և անկանէին յերիվարաց. երիվարք առաթուր կոխէին զնոսա, և նոքա անկանէին որպէս զմեռեալս։ Մարդիկ յարհաւրացն ընդհարկանէին ընդ իրեարս և հոսէր արիւն նոցա։ Եւ որք կացին ի նոցանէ, զմտաւ ածէին զամենայն, որ դիպեցաւ և զաղօթան, զորս կատարեցին կուսանքս և գնացին, պատմեցին թագաւորին։

109, 24. Իսկ թագաւորն իբրև լուաւ զայս, բարկացաւ յոյժ և ասէ. «Փոխանակ զի ոչ կամի գալ

« Հոովմ. ք. 55, 58, 59. »

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

(Հոփօսիմէ) փառօք, ածէք զնա անարգութեամբ  
ընդ քարչոյ:

Սուրհանդակքն գնացին, կալան զերանելին 110, 4.  
Հոփօսիմէ և սկսան բռնի քարչել և տանէին առ  
նա, եւ նա (կոյւն) բարձր ձայնիւ գոչէր ասե-  
լով. «Տէր Յիսուս Քրիստոս, օգնեան ազախնոյ  
Քուսմ»: Եւ գնացին ընդ նմա (ընդ կուսին) փու-  
թանակի յապարանս, և կացուցին զնա ի սրահի  
նորա: Այլ երանելին ազաղակէր առ Աստուած  
և ասէր.

«Տէր իմ կարող և Աստուած ճշմարտու- 110, 45.  
թեան, Որ պատուեցեր զժովն Կարմիր յորժամ  
փրկէիր զժողովուրդ. Քո. Որ բղխեցեր ջուր  
յանպտուղ, այսինքն յապառած վրմէ, և արբու-  
ցեր զժողովուրդն ծարաւի. իջուցեր զժառայ Քո  
զժովնան ի խորս ծովու և պահեցեր զնա ան-  
վտանգ, զի գիտասցէ զզօրութիւն Քո. Որ փրկե-  
ցեր զԻանիէլ ի բերանոյ ամեհի առիժուց և կա-  
ցուցեր աւետարանիչ թշնամեացօրք չարախօսք  
եղեն զնմանէ. Որ ընդ երիս մանկունսն կա-  
ցեր ի բորբօքեալ հնոցի և վասն սիրոյ նոցա ի  
պաշտել զՔեզ՝ անվտանգ ապրեցուցեր ի տապոյ  
հրոյն. Իու գարձուցեր զբռնաւոր և զանօրէն  
թափաւորն Բաբելոնի ի կերպարանս անասնոյ,  
և սկսու թափառել յանապատի ընդ գաղանս,  
և Իու պատուիրեցեր նմա ճարակել խոտ նման  
եղանց, քանզի ետես նա զսքանչելիս քո և ոչ  
կամեցաւ փառաւորել զԱստուած ճշմարիտ. Որ  
փրկեցեր զաղախին Քո զՇուշան ի կրկնակի մա-  
հուանէ, [եր. 83] կորուսեր զթշնամիս նորա ա-  
նօրէնս, և վասն ապաւինելոյ նորա (Շուշանայ)  
առ Քեզ, զարդարեցեր զնա պսակաւ ողջախո-  
հութեան, և յայնմհետէ Իու նոյն ես, Տէր, և

«աւուրք քո ոչ անցանեն» և ոչ տաս զփառս Քո  
այլում» ք: Փառաւորեալ եսյամենայն տիեզերս:  
Եւ հեթանոսքս այսօրիկ մի պղծեցեն զանուն  
Քո, զի դու կարես փրկել զիս: Մի մերձեցի  
ոք առ իս, և մի արատեցէ զիս, և արն զիս  
արժանի սրբութեան, զի կեցից և մեռայց վասն  
անուան Քո սրբոյ»:

112, 4. Յորժամ կատարեաց սուրբն Հռիփսիմէ զա-  
ղօթս իւր, եմուտ արքայ ի ննջարան իւր, և ածին  
զկոյսն առ նա, և ժողովուրդն որ յապարանս և  
ի փողոցի՝ խմբեցաւ ի հարսանիս արքայի երգով,  
միօք, եռաղեօք (ՅԱՄԱՄԱՌՈՒ), քնարօք, թմբկօք և  
ամենայն երաժշտական նուագարանօք: Եւ Տէր  
լուաւ ձայնի աղօթից նորա (կուսին), հայեցաւ  
ի փրկել զնա, զի մի ապականեսցի սրբութիւն  
կուսութեան նորա, և զօրացոյց զնա որպէս զՅայէլ,  
զՌեբեկա, զՆոթեր, զի փրկեսցէ զնա ի պղծու-  
թենէ անհաւատից»:

112, 22. Եւ իբրև մերձեցաւ թագաւորն առ նա, առ  
ի յագեցուցանել նովաւ զցանկութիւն իւր, սուրբն  
Հռիփսիմէ զօրացաւ Հոգևով սրբով և սկսաւ  
մարտնչել ընդ արքայի յերրորդ ժամէ ցտանե-  
րորդն և զօրութեամբ Քրիստոսի յաղթեաց նմա,  
որ թուէր կարկամեալ: Որ անպարտելին էր ի  
պատերազմունս, նուաճեալ զամենայն ժողովուրդս  
և հնազանդս արարեալ զնոսա ինքեան, որ ձեռամբ  
իւրով պատառ պատառ յոշոտեալ էր զառիւծ և  
զարջ, որպէս տեսանես՝ յաղթեցաւ ի մատաղ  
կուսէ զօրութեամբ Քրիստոսի և մեկնեցաւ ի  
նմանէ կորացեալ»:

113, 14. Յառաջ քան զայս հրամայեաց ածել առ  
ինքն զերանելին Գայիանէ կապեալ շղթայիւր և  
կացուցանել զնա առ դրան սենեկին, զի յորդո-

•• Երրայ. ա. 42:

| ք. ես. խր. 8:

րեսցէ զՀռիփսիմէ հնազանդել նմա (արքայի)  
որպէս նայն կամիցի:

Եւ իբրև եկաց նա (Գայիանէ), լցաւ Հոգւով 113, 22.  
սրբով, կանգնեցաւ առ դրան սենեկին յանդիման  
գահոյից և, դարձեալ առ նա (առ Հռիփսիմէ)  
ի լեզու հոովմայեցոց ասէ ցնա. «Հռիփսիմէ,  
սրգեակ իմ, պահեսցէ Քրիստոս զանբժութիւն  
քո, ազատեսցէ զքեզ յամենայն պղծութենէ և  
տասցէ քեզ զօրութիւն և կար, զի մի զրկիցիս  
ի ժառանգութենէ Նորա»:

Եւ իբրև գլխացին, եթէ յորդորէր հաստա- 114, 7.  
տուն մնալ ի հաւատոս, առին վէմս և հարկանէին  
ընդ բերանն մինչև թափել ատամանց, և բռնա-  
տատէին զնա, զի հրամայեսցէ կատարել զցան-  
կութիւն թագաւորին:

Բայց նա (Գայիանէ) առաւել ևս հաստատէր 114, 44.  
զնա ասելով ցնա. «Քաջալերեաց և պինդ կաց.  
[ . . . ] դուտար իմ, այժմ տեսանիցես զՔրիստոս,  
որում անձկացերդէ Յիշեան, զի սնուցի զքեզ կե-  
րակրով Սրբոյ Հոգւոյն: Յիշեան գաւանդս իմ, զոր  
աւանդեցի քեզ սրբութեամբ պահել զհաւատսն  
ի Քրիստոս: Յիշեան զհալածանսն, զոր հալածե-  
ցաքս, որում համբերեցաք Յիշեան զբաժակ մա-  
հու, յորմէ ըմպելոց եմք անխուսաբար: Յիշեան  
զյարութիւն ամենայն երկրի: Յիշեան զօրն յորում  
յայտնելոց են գաղտնիք: Յիշեան զհեղեղ անշէջ  
հրոյն: Յիշեան զանանց բարիսն, պատրաստեալս  
այնմ, որ զհեա լինի սրբութեան և ժուժկալու-  
թեան: Յիշեան զբանն զոր [85] լուար յերկնից,  
Որ զօրացոյցն այսօր զքեզ և զմեզ, զի արժանի  
լիցուք պսակին և հանգստեան, զոր պատրաս-  
տեալ է նա վասն սիրելեաց իւրոց: Նա օգնեսցէ  
քեզ և մեզ վերաբնակիլ յաստուածային և ի լու-  
սեղէն յարկս՝ ի յաւիտեանս»:

«Տէր մեր Յիսուս Քրիստոս թագաւոր յար- 115, 9.



գարեցէ ճանապարհ քեզ և մեզ, Այն, Որ խոնարհեցաւ և յանձն էառ զանարգութիւն վասն մեր և ոչ եթող զմեզ, զի սիրեցաք զնա . . . որպէս զՓրկիչ, և արժանի արար լսել զձայն բարբառոյ իւրոյ, և փրկեաց զմեզ յամենայն պղծութենէ և յապականութենէ, որպէս տեսաք զայն այսօր, վասն զի կարող աջովն պահպանեաց զքեզ և ազատեցէ զմեզ յաւիտեանս։ Եւ մի մեկնեացուք ի սիրոյ Նորա, զի զօրութիւն Նորա փրկեացէ զմեզ, «երևեցոյց մեզ զերեսս իւր և փրկեաց զմեզ» —, քանզի Նա է Աստուած մեր և Տէր մեր և «վասն Նորա համբերեմք այսմ ամենայնի»։

116, 5. «Յիշեա զՏէր, Որ խոնարհեցաւ զի բարձրացուցէ զմեզ, եհնզ զարիւն վասն փրկութեան որդւոց մարդկան, և յաղագս մերոյ փրկութեան ապտակեցաւ։ Եւ Նա այժմ՝ եղիցի ի մտի քում, և փութաւ առ Նա ի բոլոր սրտէ և յանձնէ, և Նա եկեացէ փրկել զքեզ և զօրացուցանել զձեռն քո ըստ ծառայի իւրում Դաւթի, որ սպանանէր զառիւծ և զարջ որպէս զուլ (այծեաց) ք Եւ Նա ապրեցուցէ զքեզ . . . ի բռնաւորէ . . . զի կացցուք առաջի Նորա առանց ամօթոյ»։

116, 24. Զայս բան խօսէր Գայիանէ, կացեալ առ դրան, ի լեզու հռովմայեցւոց և ուսուցանէր զկոյսն։ Իսկ թագաւորն ի ներքուստ տոչորէր վասն նորա (Հռիփսիմեոյ)։ Ոմանք ի զօրականաց, որ ըստ պատահման գիտէին զբարբառ հռովմայեցւոց, յարձակեցան ի վերայ նորա (Գայիանեոյ) ի դրանէ, հարկանէին քարամբ զբերան նորա և զայս առնէին ընդ երկար, փշրեցին զակապս (սեղանատամն) հանդերձ ծնօտիւք, բայց նա ոչ դադարէր ուսուցանել զկոյսն, զի նա պահեցէ

ա. Թիւր գ, 25:  
բ. Սաղ. 104, 25:

գ. Թագ. 14, 25:

զկուսութիւն իւր:

Իսկ երանելին Հռիփսիմէ սկսաւ զմարտն 117. 47.  
ընդ թագաւորին ի տասներորդ ժամէ աւուրն  
ցերրորդն (ժամն) առաջնոյ գիշերոյ: Պատառեաց  
զհանդերձս նորա (թագաւորին) և յաղթեալ  
Հոգևով Սրբով՝ եթող զնա որպէս զմեռեալ յան-  
կեան գահայիցն:

Յետ այնորիկ եբաց զդուռն սենեկին, ել 118. 5.  
արտաքս յանդիման զօրացն վազս առեալ, փախ-  
չէր անցեալ ընդ քաղաքն և ոչ գտաւ որ զի  
համարձակեսցի ունել զնա: Եւ յորժամ ել նա  
արտաքս յարևելեան դրանց քաղաքին, մերժե-  
ցաւ ի հնձանն, ուր կուտանքն յառաջագոյն թա-  
քուցեալ էին, յայտնեաց նոցա զուրախարար  
համբաւն, եթէ պահեալ է զկուսութիւն, և ասաց.  
«հաւաստիկ իսկ և իսկ ելի յարքունի ապարանից»: Եւ  
եւ ել ի բարձրավանդակ տեղի՝ եղ ծուներ և ասէ.

«Արարիչ իմ՝ և Աստուած ամենեցուն: Ո՛ր 118. 48.  
կարիցէ հատուցանել Քեզ փոխանակ բարեացն,  
զորս շնորհեցեր մեզ: Զի զհաւատն իմ, որ ի Քեզ,  
պահեցի որպէս զբարձր և զապառաժ վէմ. և  
Դու ապրեցուցեր զմեզ յատմանց մարդկանց  
չարաց և ի տղմոյ, որով կամէին ազտեղել զիս . . .  
Քեզ մատուցանեմք զանձինս մեր վասն շնորհաց,  
զորս ցուցեր ի մեզ, զի արժանացուցեր զմեզ  
զամենեսին սուրբ անուան Դոււմ, որ վասն փրկ-  
կեցեր զմեզ. քանզի բաց ի Քէն, Տէր, զայլ ոք  
ոչ գիտեմք:

[87] [«Այս համարեցաք՝ զմահ ողջախոհու- 119. 6.  
թեամբ, և ոչ ձգիցեմք զձեռս, բաց ի Քէն, առ այլ  
աստուած: Այնորիկ, որոց ծառայեն հեթանոսքն,  
չեն աստուածք. քանզի Դու ես արարիչ Աստուած  
ճշմարիտ և Արդին Քո . . . միածին, չորով ա-  
մենայն ինչ եղև, և առանց նորա լինի և ոչ

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

ինչ առ, և Հոգի քո սուրբ ընտրեալ, Որ առաջնորդէ մեզ ի ճանապարհս արդարութեան, և տանի զմեզ ի կեանս յաւիտենականս, զի կացցուք առանց ամօթոյ յաջմէ միածնի Որդւոյ Քո, Որ ի վերջնունն գալոց է դատել զաշխարհ: Դու, ով Տէր, ստեղծեր զսիրտս մեր և գիտես զգործս մեր, վասնզի աղախինք Քո եմք և խաշն հօտի Քո: Արժանի արն, Տէր, հանգստեան, զոր պատրաստեցեր սիրելեաց քոց: Քանզի սպասեմք ելիցի մարմնոյ աստի առ ի մտանել ի ժողովս արքոց Քոց և դասաւորել ընդ սիրելիս Որդւոյ Քո և պալատեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Դու, ով Տէր, գիտես . . . . .

121, 6. և իշխանք լապտերօք և մոմովք ի տեղին, յոր հասեալ էր կոյսն կալով յաղօթս: Կալան զնա, յետս ոլորեցին զձեռս նորա և կամէին հատանել զլեզուն և երանելին յօժարակամ եհան զայն:

121, 45. Եւ ահա անհաւատք վարեցին ի գետին ցիցս չորս, տարածեցին զսուրբն ի մէջ ցցացն և առեալ լապտերս եղին ի ներքոյ կողից նորա յուրով ժամս. մինչև խանձեցին զմարմին նորա ողջոյն: Եւ էին ի ձեռս նոցա քարինք սուրք, որովք հարկանէին զկողս նորա: Եւ իբրև տեսին, եթէ կոյսն հատատեալ է ի Քրիստոս, հանին զաչս նորա կենդանւոյն, յետ որոյ յօշօշ պատառեցին զնա ասելով. «այս է հատուցումն այնմ, որ ոչ հնազանդի թագաւորին»: Եւ այսպէս կատարեաց նա զկեանս իւր հաւատով ի Տէր մեր Յիսուս Քրիստոս:

ճմ. 122, 1. Իբրև գիտացին ընկերք նորա, եթէ կատարեցաւ նահատակութիւն նորա, զնացին առնուլ զմարմին նորա: Եւ յորժամ չարագործքն տեսին

•• Յովն. աւետ. ա. 5:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

զնոսա, առին սուր և սպանին ի նոցանէ կուսանս  
երեսուն և երկուս:

Եւ յորժամ կոտորէին զնոսա, նորա աղօ- 122, 8.  
թէին ասելով. «Այս, սիրեցաք զՔեզ, Տէր, զի  
լուար ձայնի աղօթից մերոց և ըստ առատ սի-  
րոյդ խոնարհեցուցեր առ մեզ զունկն Քո, զի  
փափագէաք Քեզ, Աստուած փառաւորեալ. և Դու  
ոչ մերժեցեր զմեզ զանարժանսս ի շնորհաց քոց,  
Տէր, այլ պահեցեր զմեզ որպէս բիբ ական»,  
ընդ հովանեաւ թեոց Քոց է ապրեցուցեր զմեզ  
ի ժողովոյ չարաց և արժանացուցեր զմեզ մահ-  
ուան վասն անուան Քո Սրբոյ: Եւ կատարեցաւ  
նահատակութիւն երանելեաց:

Մի ոմն ի պահապան զինուորաց վազելով 122, 48.  
դնաց ի հնձան, եգիտ զմի ի կուսանաց մեացեալ,  
և եզնն զնա ի հնձանին, և կոյսն զենոյր որպէս  
զգառն փառաւորելով [զԱստուած] և ասելով.  
«Քոհանամ զՔէն, Տէր իմ և Աստուած իմ, քանզի  
տկար էի և Դու ոչ մերժեցեր զիս ի նահատա-  
կութենէ ընդ ընկերս իմ: Այժմ, Տէր իմ, ընկալ  
զհոգի իմ, դասաւորեան ընդ սուրբ կուսանս Քո:  
Եւ աւանգեաց զհոգին և կատարեցաւ նահատա-  
կութիւն նորա:

[89] Եւ թագաւորն հզօր քաջամարտիկ ի պա- 123, 9.  
տերազմի, որ պատառէր զառիւծ և զարջ, որ նուա-  
ճէր զամենայն Պարսկաստան, յանձն առնոյր զա-  
մօթն, զի էր պարտեալ յաղջկանէ միօջէ զօրու-  
թեամբ Աստուծոյ, և սկսաւ հեծել ողբալով և ասել.

«Հայեցարուք ի կախարդութիւն քրիստոնէից, 124, 5.  
որպէս կորուսանեն զոգիս մարդկան և յետս  
կասեցուցանեն ի պաշտամանց աստուածոց: Ար-  
համարհելով զմահ՝ հանին յինէն զՀռիփսիմէ,  
գեղ որոյ իսպառ ոչ գտանիցի ի մէջ ամենայն

... Բ. Օրէնք Թ. 10: | Բ. Սաղմ. Կ. 5:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

կանոնց, Գնացեալ է իմ ի Հռոմ քննաք և յա-  
մենայն քաղաքս աղգաց, և չէ տեսեալ զոր նման  
նմա. և ոչ յամենայն ի Հայաստան տեսի զնմանու-  
թիւն պատկերի նորա: Սակայն կախարհութիւն  
նոցա յաղթահարեաց զմեզ և նորա կորզեցին  
զնա (զՀռիփսիմէ) յինէն»:

124, 25. Ընդ առաւօտն եկն առ նա դահիճ և ասէ  
ցնա. «հրաման տուք, տէր, սպանանել զԳոյնիանէ»:  
Լուեալ զբանս նորա համարեցաւ թագաւորն,  
եթէ կենդանի է Հռիփսիմէ. և ասէ ցնա (ցդա-  
հիճն). «եթէ ամիցես զնա առիս կենդանի տաց  
քեզ մեծութիւն»։ Դահիճն պատասխանի ետ և  
ասէ. «Ապրեսցի արքայ ի թշնամեաց իւրոց այն-  
պէս, որպէս կորուսաք զամենեսին, որ անգոսնէին  
զաստուածս և անարգէին զկամս քո: Արդարև,  
կենդանի մնացեալ է կախարհն այն (Գոյնիանէ),  
որ մոլորեցոյց զմատուղ կոյսն իւրով ուսմամբ, և  
նա է, որ զրաւեաց զՀռիփսիմէ ի կենաց, և ընդ-  
նմա այլևս երևբ»:

125, 45. Եւ իմացեալ զմահ երանելոյն Հռիփսիմեայ,  
յարեաւ թագաւորն յաթոռոյ. նստաւ ի վերայ  
հողոյ և սկսաւ ողբալ վասն նորա: Եւ վասն սրբոյն  
[Գոյնիանեայ] հրամայեաց ասելով. «առաջին զոր  
առնիցէք՝ հանէք զլեզու նորա ընդ ծործորակս և  
ապա սպանէք. քանզի նա սագրէր զկոյսն ընդգի-  
մանալ ինձ և արհամարհել զկուռս, որք տուեալ  
էին նմա [Հռիփսիմեայ] զայնպիսի գեղեցկութիւն»:

126, 4. Եւ իբրև թոյլ ետ դահճապետին սպանանել  
զնոսա, ինդութեամբ ել նա, էառ զսուրբն, ընդ նմա  
և զերեսին կապեալս շղթայիւք, և հան ի քաղաքէ,  
չոգաւ ի գետն կոյս, առ որով էր կամուրջ, ուր  
սպանանէին զմահապարտս, և հրամայեաց վարել  
ի գետին ցիցս չորս չորս վասն իւրաքանչիւրոյ  
ի նոցանէ:



Եւ մինչ զբաղեալ էին նորա այնուիկ, երանելին 126, 10.  
 Քայիանէ հանդերձ երիւրն եղելովք ընդ նմա եկաց  
 յաղօթս առելով: Բոհանամք զՔէն, Տէր մեր և  
 Աստուած մեր, զի արժանի արարեր զմեզ մահուան  
 վասն անուան Քո սրբոյ: և հաղորդս արարեր  
 զմեզ մահու սրբոց Քոց, զմեզ, որք փափագիմք  
 վաղվադակի հասանել սիրողացն զՔեզ: Եւ յիրաւի,  
 մեծ է ուրախութիւն իմ սակս դատերն իմոյ և  
 այլ քերց իմոց, որք վասն անուան Քո սրբոյ  
 արժանի եղեն մահուան: Եւ այժմ, յիշեալ զմեզ,  
 Տէր մեր և Աստուած մեր, զի վասն զո մեռա-  
 նիմք այսօր: և Յիրաւի, նման եմք մեք ոչխարաց,  
 զորս վարեն ի սպանդ: Արի, Տէր մեր և մի մեր-  
 ժեր զմեզ յաւիտեան, այլ փրկեալ զմեզ վասն  
 անուան Քո և շնորհեալ մեզ զկատարեալ յաղ-  
 թութիւն Քո, զի նշաւակ լինին, որք առ ոտն  
 հարկանեն զօրէնս:

Եւ իբրև կատարեցին զաղօթս, պահապանք 127, 3.  
 առին զնոսա, ի բաց հանին զհանդերձս ի նոցա-  
 նէ, տարածեցին ի վերայ ցցաց, հատին զձիւս,  
 անցուցին ընդ այնս փողս եղեգան և վքացուցին  
 ընդ այնս, մինչդեռ կենդանի էին, ի ստորին մա-  
 սանց [91] ցստինս և բարձրացաւ մարթ նոցա,  
 որպէս առնէ սպանդաբորժն ընդ ոչխար, յորժամ  
 կամի հանել ի նմանէ զմարթն: Եւ ցելին զպարա-  
 նոցս նոցա ի թիկանց կուսէ և հանին անտի զլեզուս  
 նոցա: Եւ յետ այնորիկ առին քարինս սուրս և սկսան  
 մխել ի կուրծս նոցա մինչ դեռ կենդանին էին: Եւ  
 յետ այնորիկ հատին սրով զպարանոցս նոցա:

Եւ կատարեցաւ նահատակութիւն Հռիփսի- 127, 23.  
 մեայ և երեսուն և երից երանելի ընկերաց ի  
 25-որդում աւուր ամսեանն հոկտեմբերի, իսկ  
 երանելոյն Քայիանեայ ընդ երից կուսանաց ի  
 28-որդում աւուր նորին իսկ ամսոյ,

• Սաղ. խգ. 25:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

- 128, 6. Իբրև կատարեցաւ նահատակութիւն արքայ կուսանաց, թագաւորն զաւուրս վեց սուգ էառ վասն երանելոյն Հռիփսիմեայ: Յետ վեց աւուրց նախարարք աղաչեցին զնա դադարել ի սգոյ: Եւ ահա հրամայեաց նա զօրաց գալ՝ առ ի ելանել յորս:
- 128, 14. Եւ իբրև այս եղև, և բերին երիվարս, նստաւ (Տրդատ) յարքայական կառս: Յայնժամ վաղվաղակի պատուհաս ի Տեառնէ հասանէր նմա: Եմուտ ի նա ոգի պիղծ և ընկէց զնա ի կառաց: Եւ սկսաւ ուտել զմիս իւր: Եւ որպէս դիպեցան հարուածք արքային նաբուգոդոնոսորայ, յորժամ խելագարեցաւ և դնաց յանապատ արածել ընդ գաղանս, այնպէս եղև և արքային Տրդատայ: Փոխեցաւ նա ի վարազ վայրի և անկաւ յանտաւախիտ վայրս արածել ընդ խոզս: Որք ընդ նմայն էին, առին զնա՝ զի դարձուցեն ի քաղաք, բայց ոչ կարացին ընկճել զնա յաղագս ուժոյ նորա, հանդերձ դիւանն, որ մտեալ ի նա, առաւելոյր զվայրագութիւն նորա: Եւ ոչ միայն նմա միայնոյ դիպեցաւ այս, այլ և բազմաց ի մեծամեծաց և յաւագաց: Եւ բազումք յընկերաց նորա մոլեգնեալ ստէին զմիս իւրեանց: Եւ բազմաց, որք յարքունի տանէ, եհաս հարուածս այս: Եւ ահ մեծ անկաւ ի վերայ Հայաստան աշխարհի:
- 129, 14. Եւ իբրև անցին աւուրք երեք, էր արքային Տրդատայ քոյր Կուսարդուկտա (Խասրովիգուխտ) կոչեցեալ: Եղև նմա տեսիլ ի Տեառնէ, զոր յայանեաց նա ոմանց ի մեծամեծաց և յաւագաց ասելով. «Տեսի յայսմ՝ գիշերի յերազի զայր, որ փայլէր որպէս զլոյս, և նա ասէ ցիս. «ոչ կարեն ազատիլ եղբայր քո արքայ և գործակիցք նորին ի հարուածոյն, որ դիպեցաւ նոցա, բայց եթէ ասաքիցէք յԱրտասատ քաղաք և ամիցէք զսուրբն Գրիգոր, զոր կապեցիք և արկիք ի վիրապն խոր: Նա ցուցցէ ձեզ հնարս օգտաբերս»:

Իբրև լուան զբանս նորա, սկսան ծաղրել 130, 4.  
զնա, ասելով. «Թուի, որ դիպեցաւն նոցա, դի-  
պեցաւ այն և քեզ, զի ոչ գիտես զինչ խօսիս: Եթէ  
լեալ էր քո առողջ, ապաքէն գիտէիր, զի այժմ  
հնգետասան ամբ են յօրէ, յորմէ հետէ Գրիգոր  
արկաւ ի վիրապն խոր, յորում են ջուր, օձք,  
լիժք և կարիճք. այնպէս զի և սակերք նորա կո-  
րուսեալ իցեն»:

Յայնժամ երևեցաւ նմա վերստին նոյն տե- 130, 40.  
սիլ և պատմեաց նոցա բայց ոչ հաւատացին նմա-  
մինչ զի հնգիցս երևեցաւ նմա տեսիլն [93],  
և սպառնայր նմա ասելով. «Եթէ ոչ ասիցես  
նախարարաց, աւագորերոյն և մեծամեծաց, չա-  
րագոյն ևս քան զայն դիպեցի քեզ, արքայի և  
համօրէն բնակչաց կողմանցս: Երկիւղ մեծ կալաւ  
զկուսարողուկտա. գնաց վերստին առ գործա-  
կալս արքայի և առ նախարարս և ծանոյց նոցա  
զամենայն, որ ինչ ասացաւ նմա իբրև սպառնա-  
լիս նմա և ամենայն բնակչաց կողմանցն»:

Եւ իբրև լուան զբանս նորա և զսպառնալիս 130, 48.  
առ նոսա և առ ամենայն բնակիչս կողմանց  
իւրեանց, եթէ չհանիցեն զերանելին Գրիգոր ի  
վիրապէ,— փութանակի ընտրեցին զայր մի յա-  
ւագաց Օտա անուն և առաքեցին ի քաղաքն  
Արտասատ, առ ի հանել զերանելին Գրիգոր ի խոր  
վիրապէ: Եւ իբրև եհաս Օտա ի քաղաքն Ար-  
տասատ, ընդ առաջ ելին նմա մեծամեծք, առ  
ի գիտել զպատճառս գալստեան նորա առ նոսա:  
Եւ Օտա ասէ ցնոսա. «Եկի վասն Գրիգորի, որ  
փակեալ է ի վիրապի»: Իբրև լուան զբանս նորա՝  
զարմացան և ասեն. «Ո՞վ հաւատայցէ, եթէ նա  
կենդանի իցէ. զի բազում ամբ են՝ յորմէ հետէ  
ընկեցաւ նա ի վիրապ: Գիտեմք, զի նա, ի շնչոյ  
օձից եղելոց ի վիրապին, ոչ կարէր ապրիլ: Ո՞ր-

պէս ասես, եթէ եկիր վասն կապեալն Գրիգորի Յայնժամ՝ Օտա յայտնեաց զերազան, զորս տեսեալ էր քոյր արքայի Կուսարօգուկտա, և անկաւ երկիւղ ի վերայ նոցա:

131, 6. Եւ կապեցին պարան առ պարան և թողին զպարանն ի վիրապ, ուր էր երանելին Գրիգոր: Եւ կոչեաց առաքեալն առ նա Օտա բարձր ձայնիւ ասելով. «Գրիգոր, եթէ իցես կենդանի ի վեր ել ի վիրապէ, վասն զի Տէր Աստուած քս, զոր պաշտեա, նա ինքն հրամայեաց քեզ ելանելոյ: Եւ նոյն ժամայն կալաւ նա զպարանէն, շարժեաց զնա, զի գիտասցեն ամենեքին եթէ կենդանի է, և շուրջ պատեաց զիւրև զպարանն և նոքա հանին զնա. և յորժամ հայեցան ի մարմին նորա, որ փոփոխեալ էր ի բաղմութենէ ամաց, չգտին ի նմա բնա ին հետս ինչ: Յայնժամ Օտա ողջոյն ետ նմա, և զգեցուցին նմա հանդերձս, քանզի մերկ էր ընկեցեալ նա ի վիրապն: Եւ առին զնա խնդութեամբ մեծաւ և զնացին ընդ նմա ի քաղաքէն:

82, 4. Արտաստայ [ի Վաղարսապատ քաղաք] 1: Եւ մինչ էր նա ի վիրապին՝ կին մի այրի հասուցանէր նմա յարքունեաց միշտ սակաւիկ մի հաց և ջուր: Եւ իբրև եհտս սուրբն ի քաղաք, դեք ընդ քարջ վարեցին զթագաւորն վարադակերպ ի հանդիպել սրբոյն: Եւ յորժամ արք արքունեաց նորա և նախարարք նորա գիտացին, եթէ սուրբն եհտս առ նոսա, ելին ընդ առաջ նորա արտաքս քան զբաղաքն:

131, 24. Եւ իբրև տեսին զնա, զի գայր ընդ Օտայի և բաղմութեան ժողովրդեան, որք զկնի նորա եկեալ էին յԱրտասատ քաղաքէ, սկսան դիւահարել, ուտել զմարմինս իւրեանց, պատասել զհանդերձս իւրեանց և վաղել ընդ առաջ:

132, 6. Երանելին Գրիգոր եղ ծուներ Աստուծոյ և աղաչեաց վասն նոցա, որք նոյն ժամայն սխալի-

փեցան ի դիւանհարութենէ: Եւ հրամայեաց նոցա  
զգնուել հանդերձս: Եւ որք յարքունի տանէ էին  
ի մեծամեծաց և յայլ արանց, ամենեքեան զգաս-  
տացեալ, ճշմարտիւ երկրպագէին նմա, անկանէին  
առ ոտս նորա, տակով. Վնդաչեմք զքեզ, թող  
մեզ զանիրաութիւնս մեր. զոր ցուցաք քեզ»:

[95] Եւ երանելին ասէ զնոսա. «Ես մարդ 132, 45.  
եմ իբրև զձեզ: Միայն հաւատացէք յԱստուած,  
յարարիչն երկնի և երկրի, արևու, լուսնի և  
աստեղաց, ցամաքի և ծովու և աղաչեցից զԱս-  
տուած զի դժասցի ի վերայ ձեր»:

«Իսկ այժմ յայտնեցէք ինձ. ուր են մարմինք 132, 22.  
սրբոց վկայուհեաց և սուկերք նոցա»: Ասեն զնա.  
«Ո՞րպիսի վկայուհեաց կամիս: Ասէ զնոսա. «Մյնց,  
որք վասն Աստուծոյ նահատակեցան ի ձէնջ ի  
կուսութեան իւրեանց»: Յայնժամ ամին զնա  
ցուցանել զտեղին: Եւ նա զնաց առ նոսա, և ժո-  
ղովեաց զմարմինս նոցա անդ, ուր նահատակեալ  
էին: Զօրութեամբ Աստուծոյ մարմինք քոցա՝ պա-  
հեալ էին: Անցեալ էին ինն տիւ և ինն գիշեր  
յորմէհեաէ անկեալ կային, բայց չէր մերձեցեալ  
ի նոսա դազան, շուն կամ թռչուն: Եւ ըստ  
զուարթութեան իւրեանց նման էին մարդկան  
բերկրելոյ ի գիւնոյ»:

Բերէին հանդերձս անիւս և թանկադինս 133, 45.  
վասն պատանաց. բայց երանելին Գրիգոր արհա-  
մարհեաց զհանդերձս բերեալս յարքայէ և ի մե-  
ծամեծաց նորա և ոչ հաճեցաւ և ոչ առ մի  
ինչ յայնցանէ վասն վկայուհեաց, այլ պատեցին  
զնոսա ի պատառօտուն հանդերձս եղեալս ի վերայ  
նոցա: Եւ ժողովեաց զամենայն մարմինս նոցա  
և երեր ի հնձան, ուր ի սկզբան ժողովեալ էին  
կուսանք: Երանելին Գրիգոր ոչ մեկնեցաւ ի տեղ-  
ւոյն մինչև կազմեաց նոցա դազալ ի փայտէ և  
փորեաց վասն նոցա տապան ի թաղել զնոսա



ի միասին: Եւ զգիշերն զայն ողջոյն աղօթէր վասն  
փրկութեան արքայի և ժողովրդեան նորա, զի  
մաքրեացին . . . , և բժշկիցին ապաշխարութեամբ:

134, 5. Ընդ առաւօտն եկին ի միասին առ սուրբն  
ամենայն արք պալատան ի նախարարաց, մեծա-  
մեծք և այլ բազմութիւն քաղաքին, երկրպագին  
նմա և մարմնոց սրբոց և ասացին յնա. «Թող  
մեզ զյանցանս, զոր մեղաք առաջի քո և կուտա-  
նացն, և աղօթեան առ Աստուած քո, զի մի կո-  
րիցո՞ք»:

134, 42. Ասէ յնոսա Գրիգոր. «Ձայն զոր կոչէրդ Աս-  
տուած իմ, է նա արարիչ տիեղերաց և նախա-  
խնամող նորա: Նա կեանս կամի տրարածոց:  
Վասն զի ի թօթափել ական ստեղծ զամենայն և  
արար զոչ էս, զերկիր և զորս ի նմա: Նա է Տէր  
տիեղերաց: Հաւատացէք ի նա. Որ պատուհասեացն  
զձեզ, ըստ մեծի սիրոյ իւրում և գթութեան,  
զի գտիք բժշկութիւն ցաւոց՝ դիպելոց ձեզ.  
որպէս ասեն գիրք. «Ձամենայն, զոր սիրէ Տէր,  
խրատէ ք. հարկանէ զմանկունս իւր և յինքն  
յանկուցանէ զնոսա: Ըստ մեծի սիրոյ իւրում  
կոչէ զձեզ, զի լինիջիք ի նորա որդիս»:

135, 4. «Իսկ Որդին Աստուծոյ, ոչ համարի ամօթ  
կոչել զմեզ եղբարս: Եւ զամենայն, որ հաւատայ  
ի նա, կոչեմք յերկրպագութիւն նորա, և նա  
յառհաւատչեայ սիրոյ իւրոյ տացէ ձեզ զսուրբ  
Հոգին է, և լուսաւորեսցէ զսիրտս ձեր անանց  
խնդութեամբ: Եւ եթէ դարձիք և ըստ կամաց  
նորա գնասիք՝ ապաքէն պարգևեսցէ կեանս  
յաւիտենականս»:

135, 42. Եւ որպէս ասացերն, թէ նա է Աստուած  
իմ, զստոյցն ասացեր: Արդարև, է նա Աստուած

ա. Բ. Մակ. է. 28: Հոով. դ. 17: |  
բ. Առակ գ. 12:

գ. Բ. Կորնթ. ա. 22:

վասն ամենայնի, որք խոստովանին զՆա: Եւ ամենայն, որ ոչ խոստովանի զՆա, օտար է ի սիրոյ և ի խնամոց Նորա, թէև իցէ ստեղծուած Նորին: Մերձ է առ ամենայն ոք, որ երկնչի ի Նմանէ և յուսայ ի Նա:

«Եւ եթէ ասիցէք, վասն էր և զիւրդ պահէ 135, 20. զյուսացեալս իւր, մինչդեռ ամենայն, որ անկաւ ի ձեռս մեր՝ մեռաւ ի տանջանս, [97] և վարեցաք ընդ նմա ըստ ցանկութեան մերում. — ապաքէն իմացարուք այժմ, զի և զև այն, քանզի Աստուած կամեցաւ զհանգիստ մարդոյ զի բերկբեսցի ի գալստեան Նորա, յորժամ՝ յայտնեսցէ Նա զբարիս զոր պատրաստեալ է սիրելեաց և գնացողաց ըստ հաճոյից Նորա»:

Եւ իւրև կատարեաց զբանս, սկսաւ ուսուցանել զնոսա և ասել ցնոսա զայն, որ ինչ ի սուրբ գիրս. զի մարդ արհամարհիցէ զբերկբաւորս՝ և զմիտս իւր համբառնայցէ յերկինս՝ «Եւ յորժամ՝ սրբեսցին միտք Նորա, ծանիցէ նա զերկնայինսն և զերկրայինս և պահելով զանձն իւր ի պատերազմէ դիւին, ընկալցի փոխարէն զաստուածայինն, քանզի բանք մեր ճշմարիտ են, և քննեմք զխորս և ուսուցանեմք ձեզ, և Աստուած զօրացուցանէ զկար մեր, վասն զի առատագութն Տէր կամի դարձուցանել զձեզ ի կռապաշտութենէ գիտելովն զՆա և տալ ինձ զբան և զգիտութիւն առ ի ուսուցանել ձեզ զճշմարտութիւն՝ որ վրկեաց զիս ի բռնութենէ և ծանր տանջանաց, զամս հնգետասան պահեաց զիս ի վիրապի զերժ ի թունոյ սողնոց եղելոց ի նմին (վիրապի), և ետ ինձ զայս շնորհ ի հրահանգել զձեզ ի քրիստոնէական հաւատս և դարձուցանել ի պաշտելութենէ կուսց, որք առաջնորդէին զձեզ ի մուրութիւն մինչև ցայս վայր: Եւ եդեալ էիք զյոյս ձեր ի վերայ

նոցա, թէև շահ ինչ ոչ բերէին նոքա ձեզ, եւ  
 ուսուցի ձեզ զփրկութիւն ձեր՝ քանզի կուռք  
 մատնեցան ի կորուստ: եւ մեր յուսով մերով առ  
 Աստուած մտաք ի տանջանս և ազատեցաք ողջան-  
 դամ: Որ ինչ վասն իմ՝ ես ապրեցայ, զի ուսուցից  
 ձեզ զճանապարհն ճշմարտութեան, իսկ կուսանքն  
 այնքիկ որ մեկնեցան յաշխարհէ աստի սպանեալ  
 սրովք ձերովք՝ ժառանգեցին զյաւիտենական  
 կեանս վասն միոյն Աստուծոյ, որ յառաջ քան  
 զյաւիտեանս է: նա Ամենակալ է, որպէս ասեն  
 153, 1. Գիրք. Տեառն է երկիր լիւս իւրով: Հայր է Աս-  
 224, 2. տուած. և միակ Բան Նորա՝ է Որդին Աստուծոյ:  
 Աստուած ի նմա՝ անվախճան և է ի նմա ի  
 սկզբանէ: «Ամենայն ինչ նովաւ եղև և առանց  
 Նորա եղև և ոչ ինչ», որպէս ասէ Յովհաննէս Աս-  
 տուածաբան «. զի սկզբանէ էր Բանն և Բանն էր  
 առ Աստուած և Աստուած էր Բանն», «Եւ առանց  
 Նորա եղև և ոչ ինչ». նմա երկիր պագանեմք  
 և փառաւորեմք զնա — զՀայր, և զՈրդի և զՍուրբ  
 Հոգի: Մի է Աստուած, մի օրէնք, կատարեալ յե-  
 րիս անձնաւորութիւնս: Չնա քարոզեմ, ուսուցա-  
 նեմ զձեզ, և աղօթեմք վասն ձեր, զի հաւատք  
 ձեր ճշմարիտ իցեն: Երկրպագէք միասնական  
 երրորդութեան, Աստուծոյն ամենեցուն: Մի լինիք  
 զՏեա այնմ, որ ինչ յաշխարհի ասա է: Մին  
 Աստուած է Արարիչ և Ստեղծող ի ձեռն Որդւոյն  
 իւրոյ և Բանին, և կեցուցանէ զամենեսեան  
 Հոգւով սրբով: Լուարնք իմաստնոյ և մարգարէի  
 Բանին, տեսանողի փառացն Աստուծոյ, այսինքն  
 մարգարէին Մովսիսի, որ ասէ ք. «Ի սկզբանէ  
 ստեղծ Աստուած զերկին և զերկիր և երկիր էր  
 աներևոյթ և երկինք՝ ոչ յստակ տեսանելի և  
 Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջրոց»: Եւ Աստուած

«. Յովն. աւ. ա. 4—5: | ք. Ծննդ. ա. 4: 44. 45. 46:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

Բանիւն իւրով և աստուածութեամբն ստեղծ և  
 Հոգին կենդանացուցանէ պայծառութեամբս  
 Ստեղծ զերկինս և զերկուս լուսաւորս մեծամեծս և  
 զարդարեաց զերկինս աստեղօք զի լուսաւորես-  
 ցեն ի տունջեան և ի գիշերի, և լինիցին ի նշանս  
 դարուց, ամաց, ամարան, ձմերան, գարնան և  
 աշնան: Նա արար զերկինս: Հրամայեաց զօրու- **հմ. 155, 44.**  
 թեամբ և ստեղծ զհրեշտակս, զհրեշտակապետս,  
 զքերովբէս և զսերովբէս որք փառաբանեն զաս-  
 տուածութիւն Նորա: Զգեաց զերկիր | [99] և  
 զարդարեաց լերայք, բլրովք, հովտօք, քա-  
 րամբք և ծառովք պտղաբերօք և անպտղովք,  
 դաշտօք, ամենայն բուսովք և զանազան երփն-  
 երանգ ծաղկօք: Զայս ամենայն ստեղծ Աստուած  
 ի միթարութիւն մարդոյ: Ըստ այսմ օրինակի  
 ստեղծ զծով՝ ամենայն ջուրք իւրովք և կոչեաց **159, 6-10.**  
 զայն ծով. և հրամայեաց նմա չելանել ըստ ա-  
 փուենս: Զայս (արար) ի պատճառս իմաստութեան, **հմ. 163, 8.**  
 զոր շնորհեաց մարդոյն, զի կաղմեսցեն նաւս. և  
 մարդիկ շրջիցին ի վերայ ծովու: Երթիցին ոմանք  
 յերկիրն Հնդկաց ի բերել անտի վաճառս ճոխու-  
 թեան վասն ամենայնի, որ ցանկայ ճոխու-  
 թեան, և ոմանք՝ յեգիպտոս ի բերել ցորեան  
 այնմ՝ որ առաքեացն զնոսասել յաճիցին ի տեղւոջէ  
 ի տեղի մինչև յազենալ մարդկան լիութեամբս:  
 Զայս ամենայն ետ մարդոյն, զի այլք ուսանիցին  
 ի նորա իմաստութենէ: քանզի Աստուած ի ստեղ-  
 ծանելն զմարդն փառաւորեաց զնա, այնպէս  
 առնելով զնա, զի մերձեսցի յաստուածութիւն  
 Նորա՝ ծառայելով նմա: Թողցուք այժմ յիշել  
 զչար ծանօթութիւն [զանկումն ի մեզս] և երթի-  
 ցուք առ դիս սրբոց կուսանաց, թաղեսցուք զնոսա  
 և շինեսցուք նոցա վկայարանս, և արասցուք  
 այնպէս, քանզի տեսի յայսմ գիշերի երազ, որ  
 զկնի, որ և սարսափեցոյց զիս:

- հմ. 429, 2. «Տեսի զերկինս բացեալ որպէս զկամար,  
հմ. 430, 8. ջուրք նորա հեղունին որպէս զանձրև յերկնից  
ի վերայ երկրի, և ի մէջ քաղաքին Արտասատայ 2.  
կայր վրան յոսկւոյ վասն արքայի, ի վերայ վրա-  
նին սիւն որպէս զհուր, շառաւիղք նորա ճառա-  
գայթէին յամենայն կողմանց՝ լուսաւորելով, և  
ի վերայ սեանն՝ ամպ, և ի վերայ ամպոյն՝ նշան  
խաչին, որ իբրև զփայլակ փայլատակէր: Եւ այս  
ամենայն էր՝ ի մէջ քաղաքին: Իսկ ի միւսում  
տեղւոյ՝ երեք վրանք վասն թագաւորաց, գոյն  
վրանաց՝ նման արեան, և հրեղէն սիւնք ան-  
նմանք հաստատեալ սեանցն, կային մին՝ յարևե-  
լից կուսէ, երկրորդն՝ յարևմտից և երրորդն՝  
ի հարաւոյ, և երեքին այնքիկ շաղկապեալ էին  
ի մի պատկեր իսկ և իսկ նշան խաչի՝ ի վերայ երկ  
կամարաց արձակելով ճառագայթս և լուսաւո-  
հմ. 433, 19. բերով: Եւ տեսի զայր մի հզօր, զորոյ զգօրութիւն  
և զգեղեցկութիւն ոչ որ կարէ ընդ գրով արկանել,  
և էր ի ձեռին նորա գաւազան օսկի, որով հարկանէր  
զերկիր, զլերինս և զբլուրս, որք սկսանէին փշրիլ  
որպէս զանօթ կաւեղէն, անկանէին և հաւասա-  
հմ. 431, 20. բէին ընդ դաշտավայրս: Եւ տեսի բազմութիւն  
յարդարեալ սեղանոց, գոյն նոցա՝ գոյն օսկւոյ, և  
սեղանքս այսօրիկ ընուն զերկիր զհաւատարեալն  
ընդ մարգագետինսն ի վերայ իւրաքանչիւր սեղանոյ  
հմ. 432, 1. կանգնեալ կայր խաչ: Յետ այսօրիկ տեսի բազմութիւ-  
հօտ [այծեաց], գոյն նորա էր սեաւ, անցանէին  
նոքա ընդ ջուրսն, որք տեղային յերկնից, և նոյն  
ժամայն փոխէին յօդիս և ի գառինս և փայլէին  
որպէս զլոյս և ասր նոցա լինէր նման ձեանս  
ի հօտիցս յայսցանէ բաժանեցաւ խումբ մի և վեր-  
ստին դարձաւ յառաջին գործն իւր, եղև սեաւ  
որպէս էրն յառաջ և փոխեցաւ ի դայլս: Եւ  
յափշտակեաց ի սուրբ հօտէ ոչ սակաւս յառաջին  
կերպարան, և խաբեաց զնոսա, առ ի յանկու-

շանել զնոսա առ ինքն և ուսուցանէր զնոսա զի  
անցանիցեն յիւր կողմն:

«Իբրև տեսի զտեսիլդ, սկսայ եռանդեամբ հմ. 432, 19.  
ազօթել առ Աստուած, և տեսի | [101] զայր մի, տե-  
սիլ որոյ էր լուսափայլ երկոքումբք հրեղէն թևովք:  
Գոչեաց նա առ իս և ասէ. «Մի երկնչիր, ո՞վ Գրիգոր:  
Մատիր և մեկնեցից քեզ զերազդ, զոր տեսեր:  
Եւ արդ, տեսիլն, զոր տեսերդ ի մէջ քաղաքին, հմ. 434, 7.  
որ է, սիւնն հրեղէն՝ նշանակէ եթէ ի տեղւոյդ  
կառուցի մայր եկեղեցի և յարիցէ հովիւ հան-  
դերձ խաչիւ սրբով յուսուցանել զմարդիկ և ի հաս-  
տատել զժողովուրդն ի հաւատս Երրորդութեան.  
Իսկ երեքին սիւնքն ի գոյն արեան՝—այնոքիկ հմ. 434, 20.  
են սուրբ կուսանքն Հռիփսիմէ, Գայիանէ և այլք. հմ. 433, 8.  
որք վկայեցին արեամբ, ընկալան զպսակն և  
մահուամբ զկեանս ժառանգեցին: Եւ պատկերն, հմ. 435, 6.  
զոր տեսեր յորժամ միանային սիւնքն այնոքիկ՝ է  
առ միասնական Երրորդութիւնն հաւատն այնց՝ որք  
արժանաւորեցան հազորդի ընդ Քրիստոսի Աս-  
տուծոյ չարչարանօք նորին: Իսկ երեքին խաչքն, որք  
կանգնեալ էին, են օրինակք Խաչին յորոյ վերայ  
բարձրացեալ եղև Քրիստոս ի մէջ երկուց աւազա-  
կաց, վասն փրկութեան ազգի մարդկան, զի  
համբերիցեն մարդիկ տանջանաց՝ սակս Քրիս-  
տոսի, հազորդք լինիցին նմա ի տառապանս,  
ժառանգիցեն ի կենդանութեան, և յերկինս՝ ար- հմ. 433, 3.  
ժանի լինիցին հաշգերձեալ ուրախութեան և յա- հմ. 437, 3.  
ւիաննից արքայութեան: Իսկ ջուրն, որ տեղայր  
յերկնից որպէս զանձրև, է օրինակ մկրտութեան,  
որով մկրտին ամենայն մարդիկ, և որ լուանայ զամե-  
նայն ազտեղութիւնս հակառակորդաց [հաւատոյ]:  
Իսկ որ ինչ վասն մաքուր հօտին յասր սպիտակ՝ հմ. 438, 1.  
այնոքիկ են, որք փայլին մկրտութեամբ և  
հօգւով սրբով ի ձեռն հովուաց իւրեանց: Իսկ



- այնորիկ, որք յետս դարձան ի ճշմարտութենէ, եղեն անօրէնք, վոխեցան և դարձան ի գայլս՝ այդորիկ են առաջնորդքն, որք հետին և զհետ իւրեանց զառածանեն զայլս և տանեն ուր և
- հմ. 437, 14.** կամին: Իսկ ոսկեղէն սեղանք, զորս տեսերդ հանդերձ խաչիւք հաստատելովք ի վերայ նոցա, ցուցանեն, եթէ ընդ ամենայն Հայաստան աշխարհ հաստատեսցին եկեղեցիք և խաչն փայլելով յիւրաքանչիւր երկրի, փառաւորեսցի Երրորդութիւն յազթութեամբ խաչին, և բարձցին ի միջոյ ամե-
- հմ. 438, 19.** նայն կուռք: Եւ այրն հզօր, զոր տեսերդ, է զօրութիւն Ամենակալին, իսկ գաւաղանն, զոր տեսեր ի ձեռին իւրում, որով հարկանէր զլերինս, զբլուրս, և զժայռս և հարթ հաւասար առնէր զնոսա, ցուցանէ, եթէ կորուսանելոց է նա զամենայն աստուածս ձեռագործս մարդկան, և բանիւ Նորա մեծասցի պաշտօն Աստուծոյ, միոյն, ճշմարմարտին Հօր և միածին Որդւոյ Նորա և Սուրբ
- հմ. 439, 9.** Հոգւոյն: Եւ այժմ, ի միտ ան, ո՞վ Գրիգոր, զբանս զայս, և հաստատեսցի այն ի մտի քում: Համբեր՝ յուսուցանելն զնոսա, առաջնորդեան ի ճառնապարհս ճշմարտութեան, երթ և հաստատեան զնոսա ի հաւատս առ Երրորդութիւնն:
- հմ. 439, 24.** «Եւ ընդ աւարտելն զբանս, որ խօսէրն ցիս՝ ծածկեցաւ յինէն, թողլով զիս ի մեծի երկիւղի՝ Եւ յայնժամ՝ լուսաւորեցան միտք իմ»
- 137, 5.** Արդ խօստովանեցէք զայն, «Որ կոչեացն զձեզ յիւր սքանչելի լոյսն», որ յատուկ է Իւրումնս աստուածութեան, զի կացլիք առաջի աթոռոյ բարերարութեան Նորա և ընկալլիք ի նմանէ զողորմութիւն: Թօթափեցէք ի ձէնջ [...] և զամենայն մեղս, և զամենայն աղտեղութիւն:

և լուացէք զսիրտս ձեր ջրով կենաց, զի արժա-  
նասջիք լուսաւոր զգեստուց, պատրաստեցէք  
զանձինս:

[103] «Գիտէք դուք զգործս սրբոյն Հռիփ- 137, 44.  
սիմեայ, որ փառաւորեալն է ի մարդկանէ. որպէս  
փրկեաց զնա Աստուած և ազատեաց ի ձեռաց  
ձերոց և յամենայն անօրէն պղծութեանց և  
բռնութեանց արքային ձերոյ Տրդատայ: Գիտէք  
ապաքէն, զի օգնութեամբ Աստուծոյ աղջիկն  
անոր յաղթեաց նմա: Նոյնպէս գիտէք և զիս, զի  
և ես յիմում կարգի զամս հնգետասան մնացի  
ի խոր և ի մթին վիրապի ի մէջ օձից, ի ժից և  
կարճաց և բնակակից եղէ նոցա: Յերկիւղէ Աս-  
տուծոյ իմոյ սողունքս այսօրիկ ոչ յարձակեցան  
ի վերայ իմ և վնաս ինչ ոչ հասուցին ինձ ամե-  
նին: Ոչ սարսեցայ ի նոցանէ, և ոչ երկեալ  
սիրտ իմ, վասն զի ապաւինեալ էի ի Տէր Աս-  
տուած իմ յԱրարիչն ամենից:

«Սակայն գիտեմ, զի ամենայն, զոր արարիք 138, 4.  
ընդ իս, ի տգիտութիւնէ եղև: Յայսմհետէ դար-  
ձարուք և ծաներո՞ք զՏէր, զի դժասցի և ապրե-  
ցուսցէ զձեզ: Այնօրիկ, զորս սպանիք, որպէս թէ  
չիցեն այլևս կենդանիք, աղաչեցէք զնոսա, քանզի  
յետ մահուան իւրեանց կենդանի են առաջի Աս-  
տուծոյ, առ ի աղօթել վասն ձեր. զի Աստուած  
ողորմութեան է նա: Ի բաց ընկեցէք ի ձէնջ զպղծ-  
ութիւն, որ է պաշտօն քարանց, ծառոց, ոսկւոյ,  
արծաթոյ, պղնձոյ և ամենայն իրաց կռոց, զի  
խաբուսիկ են այնօրիկ. և սուտ:

«Եւ ես յառաջագոյն իսկ պատուիրեցի ձեզ 138, 42.  
վասն սնտի իրացս, զի մինչ սակս այսօրիկ ի  
վերայ աչաց ձերոց գոյ խաւար թանձր, ոչ կարէք  
հայիլ և ճանաչել զիմաստուն Արարիչն Ամենակալ:  
Քանզի տեսանէի զձեզ, որպէս հեռանայիք ի  
ծառայութենէ ճշմարտին Աստուծոյ. եւ մինչ ի

դառն տանջանս էի, և ես ոչ դադարէի զտիւ և զգիշեր աղօթել առ Աստուած, զի մի կորիցեն ոգիք ձեր:

- 138, 21. «Ըստ առատ գթութեան, մարդասիրութեան և մեծանձնութեան իւրում ստեղծ նա զմարդն ի սկզբանէ, զի գնասցէ ըստ կամաց իւրոց: Եւ ահաւասիկ կոչէ զձեզ այժմ ի փառաբանութիւն Իւր ի յաւիտենական կեանս:
- 139, 9. «Ուստի առաքեաց առ ձեզ զսուրբ կուսանս Իւր, զի վկայեսցեն վասն Նորա, եթէ նա է Աստուած ամենեցուն և թագաւոր յաւիտենից և տէրութիւն Նորա ոչ անցանէ: Ընտրեցին նորա (կուսանքն) զմահ ի սէր իաչին և հաւատոյն իւրեանց առ ճշմարիտն Աստուած:
- 139, 24. «Եւ վասն աղօթից սրբոց կուսանաց ծանեւ ընդ զԱստուած և մահուամբ արժանի լերնոք միածնի Որդւոյն Աստուծոյ, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ մեռաւ վասն մարդոյ, զոր ստեղծ ձեռամբ իւրով, առ ի տալ նմա կեանս: Ոչ եթէ ոչ կարէր փրկել զմարդն առանց Իւրոց մահուան, այլ զի բարձրացուցէ զորդիս մարդկան իւրովք չարչարանօք:
- 140, 40. «Եւ նա ապաքէն կարէր առանց վկայութեան սրբոց կուսանաց հաստատել զճշմարտութիւն, եթէ ինքն Աստուած է, բայց արար զայն, զի պսակեսցէ մեծաւ փառօք զայնօսիկ, որք սիրենն զնա ցմահ: Յայսմհետէ գիտասջիք որպիսի բազում և զանազան հարուածովք և տանջանօք չարչարեցիք զիս, յետ այնորիկ արկիք զիս ի վիրապ, ուր կեցի ընդ օձս և ընդ կարիճս, բայց գթութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի վեր է քան զամենայն միտս, ապրեցոյց զիս ի միջոց նոցա և արժանի արար բանի Նորա զի տաց զդեզ փրկութեան ոգւոց ձերոց և մարմնոց ձերոց, զի

փրկեցիք և խոստովանեցիք զճշմարիտն Աստուած :

[105] «Յայսմհետէ լուարո՞ք զբանս արդարութեան, որք Արարչին ամենեցուն էք սեպհական. ապրեցարո՞ք, և փրկեցարո՞ք յաւիտեան, և արժանի լերո՞ք երկնից արքայութեան :

«Եւ եթէ որբեցիք և ջնջեցիք զսուտն, յայնժամ արժանի գտջիք շնորհաց ի մարդասիրէն Աստուծոյ, յայնժամ՝ և սուրբ կուսանքն, զորս սպանիք դառն տանջանօք, վերստին գոհացին և աղօթս արասցեն վասն փրկութեան ձերոյ : Իսկ յիմմէ քարոզութենէս և ի վարդապետութենէս լիցի ձեզ շահ մեծ, երկայնակեացք լինիցիք, լցջիք երկրաւոր բարեօք և յետ աստեացս մտանիցէք յարքայութիւն երկնից :

«Իսկ եթէ ոչ ընկալջիք զքարոզութիւն և զվարդապետութիւն իմ՝ հացէ անվրէպ ի վերայ ձեր բարկութիւն չար քան զառաջինն. խնդրեցէ ի ձէնջ զարդար կուսանաց զարիւն, զորս հեզիք յանիրաւի, մասնեցէ ի ձեռս օտար թշնամեաց և ամենեքեան մեռանիցիք դառն մահուամբ :

Եւ մինչ երանելին մտադիւր ուսուցանէր զնոսա, յարեան ամենեքին ի միասին, եղին ձեռս ի վերայ պարանոցի իւրեանց և պատառեցին զհանդերձս իւրեանց. իսկ նախարարք և մեծամեծք նստէին լքեալ, և ասէին ցերանելին. «Լինիցի մեզ արդեօք փրկութիւն առաջի Տեառն, մինչ կորուսեալ եմք արդէն զաւուրս մեր ի մօլորութեան, և գնացեալ ընդ ճանապարհս խաւարի թողցէ՞ արդեօք զբազմութիւն մեզաց մերոց » :

Ասէ ցնոսա Գրիգոր. «Արդարև Աստուած ողորմած է, մարդասէր, անխակալ, բազմագութ և դթած առ ամենեսեան, ոյք կարդան առ Նա ճշմարտութեամբ, և թողու զմեզս իւրաքան-

չիւրում, որ աղօթէ առ Նա ի բոլոր սրտէն:

142, 22. Եւ նորա ողբալով ասեն. *«Երեսաւորեան զմեզ և հաստատեան զմիտս մեր, զի խոստովանեցայք զԱստուած, զԱրարիչն մեր: Եւ եթէ է մարդասէր, ընկալցի զմեզ ըստ զգժմանս. եթէ իցէ մեզ հնար ապաշխարելոյ՝ մի դատեսցի զմեզ վասն անձնապատան գոլոյ մեր, և մի յիշեցէ զմեզս մեր զառաջինս. իսկ եթէ ոչ, թող զի կորուսցէ զմեզ վասն մեղաց մերոց: Ոչ. փրկեսցէ Նա զմեզ ըստ առատ սիրոյ Իւրում: Սմին նման և դո՛ւ թող մեզ. ուսո՞ մեզ զարդարութիւն և հաստատեան զմեզ ի ճանապարհի ի ճշմարտութեանն:»*

148, 9. Բանիւս այսուիկ դարձան նորա առ սուրբն. *զաղաղակ բարձին ողբովք. անկանէին առ ոտս նորա և ոչ համարձակէին հեռանալ ի նմանէ և ոչ քայլ մի վասն հարուածոց դիւաց և պատուհասից, որք հասին նոցա ի թշնամոյն: Քանզի ընդ հեռանալն նոցա ի նմանէ սակաւիկ մի, դեք մտանէին ի նոսա և բռնադատէին ուտել զանձնիւր մարմին:*

143, 49. Եւ իբրև սուրբն Գրիգոր լուաւ զբանս նոցա, *որ առ ինքն՝ ելաց և ասէ ցնոսա. «Ի՞նչ արդէն գիտէք. զոր արարիք ընդ իս և զիարդ չարչարէիք զիս զանազան տանջանօք սրպէս զմարդասպան որ, մինչ ես ոչ զոր ի ձէնջ խուեալ էի: Եւ մինչ բազմաց ի մարդկանէ անհնարին էր կեալ ժամ մի ընդ սողունս ընդ այնոսիկ՝ դուք թողիք զիս ընդ նոսա զամս հնգետասան. բայց շնորհիւ Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի կացի անդ ողջանդամ և անվտանգ ի նոցանէ:»*

144, 6. «Ըստ հրաշիցս այսոցիկ ծաներուք զզօրութիւն Աստուծոյ իմոյ. զի է Նա Արարիչ. կարէ թափանել զչար միտս ամենեցուն, սրպէս խափանեաց յինէն զթշնամութիւն այնց սողնոց [107], որք էին ի խոր վիրապին և ընկերացեալ էին ընդ

ծառայի Իւրում: Թէև չէի արժանի առատ գթոյ  
Նորա, բայց ազատեցայ վասն փրկութեան ձերոյ,  
զի խոստովանեսցիք զՆա ինև, ընկալլիք զբազ-  
մութիւն հրաշից Նորա ըստ իմուժս քարոզու-  
թեան:

«Եւ անշուշտ հարկ ի վերայ իմ կայ յայտնել <sup>145, 12.</sup>  
ձեզ, զոր պատուիրեաց ինձ Տէր. եւ մինչ ի վի-  
րապին էի, տեսանէի միշտ տեսիլս: Տեսանէի, զի  
հրեշտակ Նորա քաջալերէր զիս, և որպէս այժմիկ  
տեսանեմ զհրեշտակս, որ ցանգ ասեն ցիս. «Քա-  
ջալերեաց, զօրացիր, զի Տէր Աստուած փրկեաց  
զքեզ, արժանացոյց քարոզելոյ զբան Նորա, և  
չնորհեաց քեզ գիտութիւն վասն փառաբանու-  
թեան Նորա, զի ընկալցիս զհատուցումն ընդ  
այնոսիկ, ուք փառաբանեն զՆա:

«Բան իմ չէ վասն այնորիկ զի պարծեցայց, <sup>146, 2.</sup>  
այլ զի ոչ կարեմ թագուցանել զհրաշս Տեառն,  
յայտնելով ձեզ, եթէ Նա փրկեաց զիս ի մահ-  
ուանէ, իսկ ես առաջի ձեր էի որպէս մե-  
ռեալ, այսմ վկայք իմ դուք էք. և որպէս ի մեզս  
մեռայք՝ այժմ կենդանացէք ինև, որ առաջի  
ձեր համարեալս էի ընդ մեռեալս: Քանզի հրա-  
մայեաց ինձ Տէր պատմել ձեզ վասն ամենայն  
հրաշից Նորա մեծամեծաց, առ ի դարձուցանել  
զձեզ ի պաշտամանէ սին կռոց և առաջնորդել ողոր-  
մութեամբ իւրով ի ճանապարհ ճշմարտութեան,  
առ Աստուած կենդանի, առ Արարիչն երկնի և երկրի  
և ամենայնի, որ ի նոսա, և առ միածին Որդի  
Նորա և առ Սուրբ Հոգին ամենակեցոյց, զի  
ապաշխարութեամբ արժանասցիք հանդերձեալ  
բարեաց:

«Յայսմհետէ հայեցարհւք ի մեծ քարոզիչն <sup>377, 14.</sup>  
Յովհաննէս. որ խօսէր բարձր ձայնիւ առ ժողո-



- փուրդն Աբրահամու և ասէր. «Արարէք պտուղ արժանի ապաշխարութեան և մի ասիցէք թէ Աբրահամ է հայր մեր ։ Ասեմ ձեզ, զի Աստուած կարօյ է յարուցանել ի քարանցս սերունդս Աբրահամու ։ Ձայս ասէր, ոչ եթէ հրաժարէր ի պատուելոյ զԱբրահամ, այլ զի յորդորիցէ զնոսա յապաշխարութիւն, և հոգայր զնոցանէ, զի ճշմարիտ գործովք լինիցին սրգիք Աբրահամու ։ Արդարև, զամենայն, որ առնիցէ զպտուղ բարի, ընկալցի Աստուած և շնորհեացէ նմա զբարի հատուցումն, իսկ որ ոչ բերիցէ զպտուղ բարի, ոչ լինիցի նմա պարգև, այլ չորացուցէ զնա և արասցէ կերակուր հրոյ ք, որպէս ասաց Յսայի մարգարէ ։ «մեղաւորք լինիցին նմանք տատասկի, որ անկանի ի հուր և այրի» ։ Իսկ այնոցիկ, որք տացեն պտուղ բարի, հատուցէ պարգևս յարքայութեան Իւրում և լուսաւորեացէ յերկրորդում՝ զալստեան Իւրում ։ Ամենայնի որ բերէ պտուղ հատուցէ նա, որպէս ասացն. «Ընդ միոյ՝ երեսուն, վաթսուն և հարիւր ք» ։ Հատուցումն գործոց իւրաքանչիւրոյ ի նոցանէ լինիցի ըստ չափու հաւատոյ նորին ։
- 379, 5. «Եւ յայսմհետէ, եղբարք, փութացուք ամենեքեան ի միասին առ փրկութիւնն զի զերժանիցիք ի բարկութենէ, որ սլատեալ է զձեօք, և գտնիք հանգիստ ի դիւաց, սրք բազում՝ վնասուց եղեն ձեզ պատճառք, և որպէս զի վասն փրկութեան՝ դարձցի առ ձեզ զգօնութիւն, որ յափշտակեալն էր ի ձէնջ ։ Իսկ որ ինչ վասն իմ, ապաքէն աւանդեցի ձեզ զպատուիրանս աստուածութեան՝ նորա ի սկզբանէ ցվախճան, ոչ թագուցանելով ինչ, յորում էր շահ օգտի վասն ձեր ։
- 419, 1.

ա. Մատթ. գ. 8. 9 ։ Գուկ. գ. 8 ։  
 բ. Մատթ. գ. 40. է. 49 ։ Գուկ.  
 գ. 5 ։

է. ես. ա. 54. լդ. 42 ։ Մատթ.  
 ժգ. 50 ։  
 զ. Մատթ. ժգ. 25 ։

[109] «Արդ, եկայք ամփոփեսցուք զմարմինս 420, 1.

սրբոց կուսանաց, զի ի պատճառս նոցա շնորհեսցի ձեզ թողութիւն: Շինեսցուք ի վերայ նոցա եկեղեցիս, զի հեռացին ի ձէնջ տանջանք և բարկութիւն, որ պատեալ է զձեօք, աղօթիւք նոցա յորժամ՝ ապաշխարիցէք և խոստովանեսցիք զմեզս ձեր [մեծ աւ] խոնարհութեամբ և ուղիղ հաւատով պահօք հանդերձ՝ գիտութիւն նորա սերմանեսցի ի սիրտս ձեր և իմասցիք զհաճոյս նորա, արժանի լիջիք սրբոյ մկրտութեան հանդերձ ժառանգութեամբ սիրելեաց նորա. հասցիք ճառագայթից լուսոյ և գիտասցիք զզօրութիւն և զփառս խաչին՝ որով դառնան. որ է վասն կորուսելոց՝ յիմարութիւն, իսկ մեղ հնազանդելոցս և փրկելոցս՝ զօրութիւն Աստուծոյ և, վասն այնորիկ զի արժանասցիք լինել որդիս նորա աստուածութեան, 421, 5.

զի սրբեսցին մեզք ձեր, և կորիցեն չար դործք ձեր, զի տացէ նա ձեզ շահիլ զպսակն ընդ սուրբս Իւր, դասեսցէ ընդ փառաբանիչս Իւր և արժանի արասցէ աթոռոյ, յորժամ սրբիցիք յամենայն դիւական պղծութենէ, առ ի ընդ ոտիք կոխել զթշնամին ձեր դե, այնպէս, զի յորժամ մերձ լինիջիք աթոռոյ հարսանեաց աստուածութեան նորա՝ կցորդք լինիցիք փառաց սրբոց նորա՝ ճաշակողաց զմարմին Զոհի, միածնի Որդւոյ, քմպիջիք զանարատ արիւն նորա և արժանապէս հաղորդակից լինիջիք Քրիստոսի, զի ի ձեռն նորա լինիջիք ընդ Սրբոյ Հոգւոյն»:

Եւ այսոքիւք և սոցին նման բանիւք քարոզէր և 422, 5.

ուսուցանէր զնոսա: Այո, աղօթէր երանելին վասն նոցա և ասէր ցնոսա. «Գարձարհւք ի տունս ձեր առանց երկիւղի»: Եւ էր այն ընդ երեկս: Եւ նա ասէ ցնոսա. «Ընդ առաւօտն եկայք առ իս և շինեսցուք

... Ա. Կորնթ. ա. 18:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

վկայարանս վասն մարմնոց սրբոց կուսանաց, զի  
ի շնորհս երկրաւոր շինուածոյս այսորիկ շինեսցին  
ձեզ յերկինս բնակարանք, զորս յուսամք ժա-  
ռանդել աղօթիւք սրբոց կուսանաց և արժանա-  
ւորիլ արքայութեան Քրիստոսի. «և նմա փառք  
և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից» Ամէն «»:

422, §16. Եւ աւարտեալ զբանս՝ արձակեաց զժողո-  
վուրդն. իսկ թագաւորն և մեծամեծք ոչ կամէին  
մեկնիլ ի նմանէ և ոչ ժամ մի. քանզի դեռ յայն  
տանջանս էին. այլ զտիւ և զգիշեր կային ի միա-  
սին ընդ նմա ի նմին հնձանի, որ էր ի մէջ այդեաց:  
Նստէին որպէս զգերեալս, պահս պահէին յեօթ-  
նեկէ յեօթնեակ: Երանելին Գրիգոր անցոյց  
զաւուրս վաթսուն և հինգ ուսուցանելով զնոսա,  
սաստելով նոցա և խրատելով զնոսա զամենե-  
սեան՝ և հրահանգէր ի ճշմարիտ և ի հաստա-  
տուն հաւատս, այսինքն, ի հաւատս Տեառն մերոյ  
Յիսուսի Քրիստոսի:

424, 21. Բայց յառաւօտէ վաթսներորդի վեցերորդի  
աւուր ժողովեցան իշխանք, նախարարք և ամե-  
նայն մեծամեծք և այլ մարդիկ ի միասին կա-  
նամբք և տղայովք հանդերձ և աղաչեցին զսուրբն  
Գրիգոր, զի աղօթեոցէ վասն նոցա առ ի գտանել  
նոցա դիւր յայնմ, յորմէ տառապէին:

425, 8. Նախ քան զբժշկութիւն իւրեանց՝ խնդրէին  
վասն բժշկութեան թագաւորին. քանզի տեսիլ նորա  
նման էր դեռևս կերպարանաց և պատկերի խողի:

425, 25. Երանելին Գրիգոր, նահատակն Աստուծոյ,  
ընդ ելանելն ի վիրապէ, գնաց ի տեղի մարմնոց  
սուրբ կուսանաց: Տէր առաջնորդեաց զնա առ  
նոսա ժողովեալ էին արդէն ամենայն մարդիկ

• I, Պետր. ե. 11:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

ի տեղին յայն, և դիւահարեալ՝ [111] ուտէին  
զմարմինս իւրեանց, իսկ արքայն ի կերպարանս  
խոզի հալածեալ լինէր ի դիւէ մինչև եհաս յայն  
տեղի:

Եւ երանելին Գրիգոր աղաչեաց զմարդա- 426, 9.  
սէրն Աստուած դարձուցանել առ արքայ միայն  
զմարդկային միաս և զլսելիս յականջս, առ ի  
խմանալ զղորութիւն բանից: Զաւուրս վաթսուն  
և վեց մնաց նա ի կերպարանս խոզի:

Եւ նորա կրկնէին զաղաչանս առ սուրբն 426, 22.  
Գրիգոր յազագս արքայի, զի դարձուցէ ի նա  
զմարդկային պատկեր, եւ ասէ ցնոսա երանելին  
Գրիգոր, «Մարդ եմ ես իբրև զմի ի ձէնջ, Յա-  
ռաջագոյն հասին ինձ չարչարանք ի ձէնջ, Սակայն  
խնդրեցից յԱստուծոյ փրկութիւն վասն ամենե-  
ցուն: Նոյնպէս և դուք խնդրեցէք ի բոլոր սրտէ  
վասն բժշկութեան, զի նա է Աստուած մարդասէր  
և ողորմեցի ձեզ: Եւ յայսմհետէ մի երկնչիք, այլ  
խնդացէք, զի նա քննող է սրտից և երիկամանց,  
գիտէ զոր թագուցանէքն [ի միտս], և շնորհեցէ  
ձեզ փրկութիւն: Բայց փութացարձք շինել եկե-  
ղեցիս վասն հանգուցանելոյ զմարմինս սրբոց կու-  
սանացն Աստուծոյ, զի և նորա փութացին  
խնդրել վասն ձեր և դուք աղատիցիք ի բարկու-  
թենէ, զի նա փրկեցէ ի խիստ երկիւղէ դա-  
տաստանի Իւրոյ և արժանաւճիք մահուան Տեառն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի: Լուան նորա և ասեն,  
«յամենայնի, զոր հրամայես, ստուգիւ անսամբ  
և հնազանդիմք: Միայն հրամայեա՛ զոր ինչ 443, 18.  
առնել պարտ իցէ մեզ»: Երանելին Գրիգոր ասէ.  
«Եկաք դուք ամենեքին ի միասին, ի շինել [եկե-  
ղեցիս] վասն հանգստեան ոսկերաց սուրբ կու-  
սանաց:»

Յայնժամ թագաւորն որպէս էր յայն կեր- 443, 21.

պարանս, բայց մարդկային զգօնութեամբ և լսելեօք՝ մերձեցաւ առ սուրբն Գրիգոր խնդրելով աղօթել վասն ձեռաց և ստից իւրոց, զի կարասցէ գործակից լինել այլոց՝ ի շինելն տաճարս կուսանաց:

444, 10. Եւ երանելին Գրիգոր խոնարհեցաւ յերկիր, աղօթեաց և դիմեաց խնդրուածով առ ամենազօրն Աստուած զի տացէ բժշկութիւն թագաւորին: Եւ վաղվաղակի լուաւ ձայն յերկնից, որ ասէր. «Գրիգոր, պինդ լեր և զօրացիր. ես ընդ քեզ եմ մինչև իսպառ. շինեա՛ զտաճարս և բարձրացի՛ եղջիւր նոցա: Աղօթք քո լսելի եղեն. և շնորհեցի՛ քեզ՝ զոր խնդրեցերն: Լուեալ զայս՝ զօրացաւ սուրբն, դարձաւ ի թագաւորն կոյս, մերձեցաւ ի ձեռս և յոտս նորա յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և տեառնագրեաց զնոսս և նոյն ժամայն փոխեցան յիւրեանց մարդկային բնութիւնս:

444, 22. Եւ թագաւորն սկսաւ ասել ցերանելին. «զինչ հրամայիցես ինձ»: Եւ սուրբն ետ նմա զչափ դադաղաց սրբոց զի բրեցէ վասն նոցա և վասն մարմնոց սրբոց կուսանաց [դամբարանս]: Յայնժամ ասէ թագաւորն ցսուրբն. «հրամայեա, զի կոչեցից զկին իմ՝ զԱսիխէն (Աշխէն) և զքոյր իմ՝ զՆուսարուղուկտա (Խոսրովիղուկտ): զի նոքա ևս վաստակեացին ի շինելն զտեղիս սուրբ կուսանաց»: Եւ երանելին թոյլ ետ նմա:

445, 12. Յայնժամ առ թագաւորն բահ և բրէր գուբս վասն դադաղաց, յորս եղեալ էին զմարմինս սրբոց կուսանաց, Ընդ նմա ի միասին էին [113] ի բրելն կին նորա և քոյր, որք փոխանակ կողովոյ, ի հանդերձս իւրեանց ի բաց տանէին զհօղս: Յետ այնորիկ բերին զմարմինս սուրբ կուսանացն— երանելոյն Հռիփսիմեայ և երեսուն երկուց՝ նա-

հատակերոցն ընդ նմա—ի տեղին, ուր նահատակեալ էին, [և շինեցին անդ եկեղեցի]: Եւ շինեցին զայլ եկեղեցի ի տեղւոջ, ուր վկայեցին երանելին Գայիանէ և երեք կուսանք ընդ նմա, և բերին զմարմինս նոցա ի տեղին, ուր սպանեալ եղեն: Եւ շինեցին ևս եկեղեցի ի հնձանին, ուր սպանեալ եղև միւս կոյսն, որ տանջեցաւ ի հարցափորձսն:

Եւ իբրև կատարեցին զշինութիւն եկեղեցեաց <sup>հմ. 446, 7.</sup> և փոխադրեցին ի նոսա զմարմինս սրբոց կուսանաց, [թագաւորն խնդրեաց զսուրբն Գրիգոր [թոյլ տալ նմա գնալ ի լեառն, որ կոչի Արարատ, ի գաւառն, որ կոչի Մասիս, և բերել անտի ի վերայ ուսոց իւրոց գերանս և սրունս վասն դրանց եկեղեցեաց, զի բարձեալ լիցի ի նմանէ պատկեր խոզի: Եւ նա հրամայեաց նմա առնել այնպէս: Յայնժամ ի վեր ել նա ի լեառն, որ ի վերայ Մասեաց և եհատ անտի երկոտասան մեծամեծ քարինս վասն երկց սուրբ եկեղեցեաց, յորս փոխադրեալ էին զմարմինս կուսանաց, վասն իւրաքանչիւրոյ տաճարի՝ մի մի դուռն և վասն իւրաքանչիւր դրան՝ քարինս չորս—չորս, զորս բերէր ի վերայ ուսոց իւրոց, զի էր հզօր հսկայ, և զօրութիւն նորա յոյժ առաւելոյր հաւատովն:

Եւ իբրև շինեալ աւարտեցին զայսոսիկ երիս <sup>հմ. 447, 17.</sup> եկեղեցիս, կանգնեաց ի վերայ նոցա երիս խաչս յարևելից կուսէ. բայց սեղանս ոչ հաստատեաց, քանզի դեռ ևս չէր քահանայացեալ նա:

Յայնժամ երանելին Գրիգոր երկիր եպագ և <sup>449, 1.</sup> հրամայեաց ժողովելոցն երկիրպագանել և աղօթել արտասուօք և հայցուածովք վասն [թագաւորին, զի գազանային կերպ նորա դարձցի յառաջին պատկեր մարդկային: Եւ յայնժամ երանելին, ի միասին ընդ ժողովրդեան և յառաջակայութեան



Թագաւորին, տղօթեաց. ի մարմնոյ թագաւորին սկսաւ ի վայր անկանիլ ինչ՝ որպէս, զխորխ, որովք արձաւ գազանային կերպն հանգերձ սուեռլն և տղմաւն: Զգաստացաւ նա և փոխեցաւ ի կերպարանս մարդկային:

Յայնժամ գոհացան նորա զԱստուծոյ, որ ապրեցոյց զնոսա և ուսոյց ըստ իւրում առատ սիրոյ: Եւ նորա փառաւորեցին զԵրրորդութիւնն և մեկնեցան ի սուրբ կուսանաց և ընդ նոսա Գրիգոր՝ որ չարչարեալն էր վասն Քրիստոսի: Եւ նա դարձոյց զամենեսեան, որ ի Հայաստան աշխարհի, ի ճշմարիտ գիտութիւն Աստուծոյ, և նորա խոստացան որբոյն և ասեն, «յորժամ կարգեսցին քահանայք յեկեղեցիս՝ մեք, այո, զարդարիցեմք զայնս զիւրդ և կարիցեմք»: Յայնժամ երանելին հրամայեաց պահապանաց և պաշտօնէից պահպանել զեկեղեցիս և սպասաւորել նոցա այնու՝ զի թոշակ նոցա տացի յարքունի ապարանից: Եկն արքայ ի Վաղարսապատ քաղաք Յ: Ընդ նմա էր նահատակն Քրիստոսի Գրիգոր, և ընդ նոսա երկուսին՝ ամենայն նախարարք: Այսպէս փրկեցան նորա յամենայն տանջանաց իւրեանց և ի ծառայութենէ կոոց և յայնմհետէ դարձան ի գործս բարեպաշտութեան և արդարութեան:

Տմ. 461. 19. Եւ արքայ Տրդատ իբրև ևհաս ի քաղաքն Վաղարսապատ պատուիրեաց դպրաց թագաւորութեան գալ և հրամայեաց նոցա գրել թուղթս առ ամենայն բնակիչս տէրութեան իւրոյ, զի յանդիման լիցին արքայի ի Վաղարսապատ քաղաքի պետք, նախարարք, առաջնորդք և իշխանք [115],—թուղթ [առ արքայն Աբխաղաց և] առ արքայն Վրաց, [թուղթ առ արքայն Ալանաց, և յայտնեաց նոցա ի թուղթսն զամենայն, որ ինչ անցք անցին ընդ նոսա և ասէ, «Վասն սյսորիկ

հարկ է, զի գայեք առ իս վաղվաղակիս, Եւ ընդ հասանել թղթոցն՝ եկին առ նա երեքին թաղա- 461, 22.  
 ւորքն, թագաւորն արխազաց, թագաւորն վրաց  
 և թագաւորն ալանաց, ընդ նոսին և ժողով իշ-  
 խանաց, առաջին՝ իշխանն Գիպսի 4 [Ангела — Ան-  
 գելայ] ^երկրորդ՝ իշխանն Արտանուջի, զոր կոչէին <sup>^ Վնգել</sup>  
 մեծ Բդեաշխ, [Витакъ — Բիտաքս], երրորդ՝ իշ-  
 խանն Արմաթանայ, չորրորդ՝ իշխանն Ասպետաց,  
 ըստ կոչմանն ասպետ, որում յանձն էր պահպա-  
 նութիւն լերանցն Կօսեաց և «Մ-տ-զ-ն-ն-անց  
 [М-Т-З-Н-ОВЪ], հինգերորդ՝ իշխանն Մամիկոնեան  
 ըստկոչմանն սպարապետ։ Նա էր պետ զօրաց ամե-  
 նայն Հայաստանի, որպէս հեծելոց նոյնպէս և հե-  
 տեակաց և ոչ մեկնէր ի մեծէ արքայէն Հոյասս-  
 տանի։ Ամենքին, զորս յիշեցաք յիշխանաց և զորս  
 յիշելոց եմք, ի պատերազմունս էին հնազանդք  
 նմա, միայն իշխանն «Կ-մ-ր-դ-լ» ի [К-М-Р-Д-Л], մերձ  
 յամուրս Կորդուտաց [Кордутов], չէս բնդ նորա իշ-  
 խանութեամբ։ Եօթներորդ՝ տէրն մեծի աշխարհին  
 Մոփաց [Софенъ] որ մերձ ի կողմանս գետոց (Միջա-  
 գետաց), ութերորդ՝ իշխան աշխարհին Գուգա-  
 րաց [Гургаръ], իններորդ՝ իշխանն Ռչտունեանց  
 [Рустиновъ], տասներորդ՝ իշխանն «Մ-ֆ-ն-ս  
 [М-ф-н-с-овъ]. մտասաներորդ՝ տէրն Սիւնեաց և  
 պաշտպանն, երկոտասաներորդ՝ իշխանն Գես-  
 պօտեաց [Деспотин] երեքտասաներորդ՝ իշխանն  
 Ուտեաց, չորեքտասաներորդ՝ իշխանն Զաւեանդայ  
 [Зуридонъ] մերձ ի Կորդիս, հնգետասաներորդ՝  
 իշխանն Խորխոռունեաց, առաջնորդ և տէր Մաղ-  
 խազունեաց, վեշտասաներորդ՝ տէրն Տարօնոյ,  
 Եւ ամենայն բազմութիւնք խմբեալ էին ըստ  
 արժանեաց իւրեանց։

Ահա այսօրիկ են վեշտասան նախարարք, հմ. 462 17.  
 զորս թուեաց արքայ և յղեաց առ նոսա՝ շնորհ

արարեալ նոցա: Եւ նոքա խորհուրդ կալան թէ  
ո զինչ առնելոց իցէ և որոշեցին գնալ առ նա,  
և արարին:

Եւ իբրև հասին նոքա առ նա, թագաւորն  
Տրդատ ասէ ցնոսա. «Աւագք պետութեան, տեսաք  
աշխարհաց, զճոք արքունի, պետք և իշխանք, դի-  
տէք արդեօք զանցս, որք դիպեցան մեզ, զկորուստ  
ուսման մագուց և զայն, զոր արարաք ընդ-  
այրս այս սուրբ և ընդ անբիծ կուսանս: Քանզի ի  
մոլորութեան և ի կորստեան էաք երկրպագելով  
կուց և նոցին քրմաց, որք պաշտօն մատուցա-  
նէին նոցա: Պատուհասէաք զսիրելիս Աստուծոյ  
կենդանւոյ: Եւ Աստուած կամեցաւ պատժել զմեզ  
դիւօք՝ որոց երկիրպագանէաք. զորս փառաւորէաք  
և մեծացուցանէաք՝ նոքօք եղաք պատուհասեալ:  
Եւ զոր շարչարեցաք, նա ապրեցոյց զնա, յա-  
մենայն տանջանաց և ի մահուանէ, յոր մղէաք  
զնա. զի ուսուցէ և գիտակս արասցէ զմեզ ճա-  
նապարհին ճշմարտութեան»: Եւ այսպէս պատմէր  
զամենայնէ, որ դիպեցաւն նոցա: Եւ ասէ ցնա-  
խարարս. «զինչ խորհիք վասն իրիս»: Յայնժամ  
նախարարք և ամենայն հայք լցան երկիրդիւ և  
խնդութեամբ, և նոյն հետայն գոչեցին. «յօժա-  
րութեամբ լուիցուք Գրիգորի, հաւատայցեմք ի  
հաւատս նորա և բանից նորա ունկնդիր լինիցիմք:  
Անսայցեմք նմա, հնազանդեսցուք նմա, արասցուք  
զամենայն, զոր պատուիրեսցէ մեզ սուրբն, և ի բաց  
ընկեսցուք զպաշտամունս կուց»: Եւ յերաւի,  
ամենեքեան հայէին ի սուրբն, [117] և նա սկսաւ  
ճԺ. 450, 6. ուսուցանել զնոսա, որպէս յառաջն և առաւել  
եւ 450, 19. քան զայն, և հաստատել ի միտս նոցա զմեկնու-  
թիւն սուրբ և աստուածային գրոց և զամենե-  
սեան բժշկեաց հաւատովն որ առ Երրորդու-  
թիւնն. կրթէր զնոսա, առ ի հաւատալ ի մի  
Աստուած Հայր Ամենակալ, և ի միածին Որդին՝

Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ, բայց ոչ ստեղծեալ, և ի Սուրբ Հոգին՝ բղխեալ [ի Հօրէ]։

Եւ նա պահանջէր ի նոցանէ յառհաւատչեայ հմ. 451, 8. հաւատոյն կործանել՝ զմեհեանս կռոց։

Եւ նախ քան զամենայն Տրդատ սկսաւ կործանել զտաճարն, զոր շինեալ էին յԱրտասատ քաղաքի։ Եւ էառ ոսկիս, արծաթո, քարինս թանկագինո և զամենայն անօթս պաշտամանց աստուածոց այնքան, զորս անհնար է ընդ գրով արկանել։ Յետ այնորիկ ել արքայ Տրդատ և ընդ նմա երանելին Գրիգոր և ժողով նախարարաց, և չոգան ի քաղաքն Կ-սատ-ն [K-CAT-NB] 5. և հրամայեաց կործանել զտաճար Արտեմիդեայ։ Եւ յետ այնորիկ գնացին առ պատգամախօս նոցին, այսինքն ի տաճար Ապօղղոնի 6. և առին անտի ոսկի, արծաթ և զամենայն անօթս սպասուց։ հմ. 454, 7. Եւ [արքայն] զայն ամենայն ետ ի գանձարան, առ ի պահել վասն զարդուց եկեղեցեաց՝ զորս կամէր շինել։

Իսկ դեք իբրև տեսին, որ եղևն, և զհա- 452, 16. մարձակութիւն թագաւորին հանդերձ նախարարօքն իւրովք ի գրաւելն զայսոսիկ [զգանձս], երևեցաւ նոցա դև ի մէջ այրուծիոյ հեծելոյ յերիվարս, և հետեակաց՝ վառելոց անթերի սպառաղինու-թեամբ տիգօք, սլաքօք, նետիւք և քարամբք։ Արձակէին զնոսա ի բագնաց, բայց զէնք նոցա վայրապար անկանէին չպատճառելով ումք քլասս։ Եւ անկաւ երկիւղ ի վերայ այնոցիկ, որ դեռ ևս պնդութեամբ չէին հաւատացեալ յԱստուած։ Իսկ սուրբն Գրիգոր տեսանա-գրեալ նշանաւ մեծի խաչին, էառ տէգ երկայն և եմուտ ի մէջ գնդին դիւաց, որք, ընդ երևելն նորա, պատառեցին զհանդերձս իւրեանց և ի

տեղւոյն խափանեցան, որպէս թէ չէր իսկ լեալ  
 հմ. 453, 4. նոցա բնաւին: Եւ միայն ձայն նոցա լսելի լինէր,  
 453, 13. զի ասէին. «վայ մեղ ի Քրիստոսէ. նա, Որ ծնաւ  
 ի Մարիամայ կուսէ, ի դոտերէ մարդոյ, հալածեաց  
 զմեղ յամենայն տեղեաց: Այժմիկ ահա և  
 աստի հալածիմք ի պատճառս առն, որ կապեալն  
 էր և փակեալ ի վիրապի: Թէև ածաք ի վերայ  
 նորա զանազան տանջանս, բայց այն բնաւ իսկ ոչ  
 օգնեաց մեզ: Այժմ՝ դնասցուք ի լերինս Կով-  
 կասու, և բնակեսցուք ի կողմանս հիւսիսոյ:»

Եւ սուրբն Գրիգոր կործանեաց զամենայն  
 մեհեանս զայսոսիկ, իսկ արքայն Տրդատ հրա-  
 մայեաց պաշտօնէից մեհեանաց դառնալ ի քրիս-  
 տոնէական հաւատս: Եւ վասն անօթոց պաշտո-  
 հմ. 454, 7. մանց հրամայեաց զմասն բաշխել յաքատաց իսկ  
 456, 2. զմասն մի առնուլ ի դանձ արքունի:

Այսպէս արարին և յերկրին լազաց, վրաց  
 և ալանաց: Եւ թագաւորքն ամենայն եղեն միա-  
 բանք լինել կատարեալ ի հաւատս որ ի Տէր  
 մեր Քրիստոս, և յետս դառնալ ի պաշտմանէ  
 կռոց: Եւ թագաւորն փութայր կործանել զմե-  
 հեան Զևսի, առնուլ զոսկի և զարծաթ զեղ-  
 եալս ի նմին և տանել ի գանձարան: Եւ եղև  
 այնպէս: Եւ նա պատուէր տայր յիւրաքանչիւ-  
 րում՝ քաղաքի կործանել մեհեանս և պահել  
 զկարասիս նոցին, մինչև կարգեսցի ի վերայ նոցա  
 գլուխ և տնօրինեսցէ, որպէս և կամիցի:

454, 17. [119] Իսկ սուրբն Գրիգոր պատուիրէր նոցա  
 կանգնել խաչս և պատել պատնչաւ զմեհեանս:  
 Եւ նա հրամայեաց նոցա, այսինքն արքայից և  
 ամենայն նախարարաց շինել եկեղեցիս առանց  
 սեղանոց, վասն զի չունէր նա զքահանայութիւն  
 և պատուիրէր կանգնել խաչս ի վերայ հրապարա-  
 կաց, ճանապարհաց և յամենայն տեղիս, առ ի հա-

լածել ի տեղեացդ զդևս. Եւ նա քարոզէր յամե-  
նայն տեղիս, և էր մեծ բանիւն Աստուծոյ և ամե-  
նայն գիտութեամբ, և Հոգին սուրբ էր ընդ նմա,  
զօրաւիզն գոլով նմա՝ ըստ ցանկութեան նորա:

Անտի գնացին ի գաւառն Դարանաղեաց. հմ. 455, 17.  
ընդ նոսա էին և թագաւորքն և իջին ի գիւղն  
Միթրոդան [Թորդան]: Ի տեղուջս յայսմիկ էր  
տաճար Զևսի, Կործանեցին նոքա զայն տա-  
ճար և նա [թագաւորն] էառ զամենայն, որ  
ինչ էր ի նմա և բաշխեաց ի կարօտեալս: Եւ  
զկուռս յոսկւոյ, յարժաթոյ և ի թանկագին քա-  
րանց հրամայեաց պահել վասն եկեղեցւոյ, որ  
չինելոց էր յանուն Քրիստոսի, և կանգնեաց  
անդ խաչ:

Եւ գնացին խնդութեամբ յայլ գիւղս: Եւ ար- 456, 9.  
քայ նախանձայուզութեամբ և վութով դարձուցա-  
նէր զամենայն մարդիկ ի պաշտամանէ կռոց և մեր-  
ձեցուցանէր գնոսա առ Քրիստոս Աստուած վար-  
դապետութեամբ սրբոյն Գրիգորի: Եւ գնացին  
նոքա ի քաղաքն Ափրուջիա [Αφρυσκία] 7: Ի տեղ-  
ւոջն յայնմիկ կայր ամրոց և ի մէջնորա էին գերեզ-  
մանք նախնի թագաւորաց: Եւ ի նմա թաղէր թա-  
գաւորն Հայաստանի: Եւ անդ էր տաճարն Դիոսի  
մերձ առ թագաւորս, և այն նման առաջնոյ  
տաճարին էր յոսկւոյ, յարժաթոյ և ի թան-  
կագին քարանց: Եւ արարին ընդ այն որ-  
պէս արարեալ էին ընդ առաջին տաճարն և կանգ-  
նեցին անդ զնշան Քրիստոսի:

Եւ գնացին յայլ կողմն, ուր էր մեծ տա- 457, 6.  
ճարն Արտեմիդեայ: Եւ իբրև հասին ի տա-  
ճարն Արտեմիդեայ ի մեծի քաղաքի, որոյ  
անուն Արգէն (Երէզ) էր, ուր ժողովէին թա-  
գաւորք և տօնէին, և ուր Գրիգոր սկսաւ զչար-  
չարանս կապանօք և զանաղան տանջանօք. և արդ



իրբւ ւերձեցաւ արքայն, երանելին և ամենայն զօրքն, ինորոյ երևեցան նոցա դէք ի միասին ընդ զօրախումբս և սկսան ածել սոսկումն ի վերայն ոցա-  
Բայց սուրբն Գրիգոր հալածեաց զնոսա նշանաւ խաչին: Եւ զօրն իրբւ ետես, զի նա հալածեաց զթշնամին նշանաւ խաչի, յայնժամ սիրտք մարդ-  
կան բացան վասն հաւատոյ սիրով առ Աստուած կենդանի: Եւ իսկևիսկ ինքնին կործանեցան որմք տաճարին, և ժողովուրդն ետես զայն: Յայնժամ երանելին գնաց անդ խաչիւ:

44. 457, 20. Յետ այնորիկ արքայն, Գրիգոր և ամենայն զօրք գնացին և, անցեալ ընդ Եփրատ, չո-  
գան ի քաղաքն Թիլ անուն: Յետ այսորիկ կործանեաց զտաճար Աթենայ և զամենայն սպասս հրամայեաց պահել ի Թիլ քաղաքի առ ի նուիրել եկեղեցւոյն՝ որ շինելոցն էր:

458, 5. Եւ ըստ սմին օրինակի պատուէր տային յիւրաքանչիւր տեղիս, ուր հասանէին, և հաստատէին զքրիստոսական հաւատս, և սերմանէր ի մարդիկ բանն Աստուծոյ: Եւ ամենայն ոք փութայր, ոմանք՝ առ ի տեսանել զթագաւորն, այլք՝ յաղագս հրաշխցն, զորս գործէր սուրբն Գրիգոր: Բանիւ և աղօթիւք նորին [121] կործանէին տաճարք պարսպօք և ինքնին անկանէին և նա բժշկէր զամենայն հիւանդութիւնս հինս

458, 24. և նորս: Իսկ թագաւորն Տրդատ ոչ դադարէր քարոզել յիւրաքանչիւր քաղաքի, և ասէր ջընակիչս. «առաջին հաւատք ձեր արհամարեալ են և կորստական»: Եւ նա պատմէր վասն հիւանդութեանց դիպելոց նմա և աւագանւոյ իւրում, և վասն ողորմութեանն շնորհելոյ յԱստուծոյ ի ձեռն Գրիգորի, զոր ապրեցոյց Աստուած ի զանազան տանջանաց և ի վիրապէն, որ լի էր սողնուլք:

459, 7. Եւ չոգան ի գաւառն, որ Դերզան (Դերջան)

կոչիւ էր անդ տաճար Զեսի. ՆԵ [արքայ] կոր-  
ծանեաց զայն վասն վարդապետութեան սրբոյն  
և փութանակի սկաւ դարձուցանել զնոսա  
[զբնակիչս] ի գիտութիւն Աստուծոյ:

Յետ այսորիկ գնաց արքայն Տրդատ ի կող- հմ. 460, 5.  
մանս Արարատայ խորհել ընդ կնոջ և ընդ քեռն  
և ընդ ամենայն նախարարս, առ ի կարգել ի վերայ  
իւրեանց հովիւ. մատչիլ ի մկրտութիւն և արժանի  
լինել նմա. Ընդ նմա ի միասին ել Գրիգոր ի  
քաղաքն Արտասատ յարարատեան գաւառ:

Եւ [Թագաւորն] խորհուրդ կալաւ ընդ ամե- 460, 5<sup>18</sup>.  
նեօինս Ասէ նա. «Եկաք այժմ, առցուք մեզ զայն,  
որ ուսոյց մեզ զճանապարհն ճշմարտութեան, որ  
ուսոյց մեզ զԱրեգակն արդարութեան, դարձոյց  
զմեզ ի ծառայութիւնէ խաւարի և ժահահոտու-  
թեան և եհան զմեզ ի միջոյ նոցա. Այժմ աղա-  
չեսցուք զԳրիգոր հովուել զհօտն Քրիստոսի, զի  
արժանասցի (հօտն) մկրտութեան և մերձեցի ի  
հաղորդութիւն սուրբ խորհրդոյ, և այրեսցին մեզ-  
սամած խորհուրդք մեր ի նորա վարդապետու-  
թենէ. քանզի չեմք դեռ արժանացեալ լրութեան  
շնորհաց, և վասն այսորիկ յերկբայս եմք: Յայն-  
ժամ սուրբն Գրիգոր ասէ ցարքայ և ցնախա-  
րարս. «չեմ արժանի բեռինս այսմիկ: Եւ չէ ինձ  
մարթ լինել միջնորդ ի մէջ Աստուծոյ կենդանւոյ  
և ժողովրդեանս: Եւ ասեն. «դու արարեր զմե-  
ծամեծ հրաշս զայսոսիկ և հաստատեցեր զմեզ  
յուզիդ հաւատս ի շնորհս վարդապետութեան,  
իմաստութեան և հաճոյական բանից քոց, և  
զիմրդ չիցես արժանի լինել միջնորդ ի մէջ  
Աստուծոյ և մարդկանս: Զփորձ առեալ եմք,  
եթէ զոր ինչ խնդրես յԱստուծոյ բուժմէ կեն-  
դանւոյ, շնորհի քեզ»: Եւ մինչ նա խորհէր վասն  
իրիս, եհաս ի վերայ երեկոյ և ժամ ընթրեաց ար-  
քայի և բազմութիւն մեկնեցաւ ի տեղիս իւրեանց:

461, 8. Յայնմ՝ իսկ գիշերի հրեշտակ Աստուծոյ երեւեցաւ արքայի նման կայծական փայլատակելոյ և ասէ ցնա. «նով Տրդատ, քանզի մտեր ի ճանապարհ ընտիր և հաստատուն, ապաքէն փութա՛ կատարել, զոր ի մտի ունիս, վասն զի որ հաստատեաց ի ձեզ զհիմն, նա իսկ ի յանգ հանելոց է ի ձեզ զխորհուրդ Երրորդութեան: Փութով այժմ՝ զԳրիգոր կացուցէք գլուխ ի վերայ ձեր, տարայք ի քաղաքն Կեսարիա, ուր ուսաւ նա զբանն ճշմարտութեան և զամենայն իմաստութիւն, և անդ տացի նմա քահանայութիւն: Եւ անա երեւեցայց նմա ևս, զի մի հակառակեցինա քեզ: Եւ թագաւորն զայն գիշերն եկաց յաղօթս և ի հսկումնս: Եւ ընդ առաւօտն գումարեցան ամենայն մարդիկ, Եւ յայնմ՝ իսկ գիշերի հրեշտակ Աստուծոյ երեւեցաւ Գրիգորի և ասէ ցնա. «նով Գրիգոր, մի համարձակիր հակառակիլ Տրդատայ, զի նա աղաչելոց է զքեզ հովուել զժողովուրդն, որ ժառանգեաց զփրկութիւն ի ձեռն քո»

[123] Եւ իբրև եղև առաւօտ, ժողովեցան ամենեքեան առ թագաւորն, և նա առաքեաց կոչել զԳրիգոր: Մինչ այս մինչ այն՝ թագաւորն պատմեաց բաղձութեան զտեսիլն, որ երևեալն էր նմա: «Եւ իսկ և իսկ, [ասէ] «արժանի եղէ տեսանել զհրեշտակն»: Եւ էր նա լցեալ երկիւղիւ և խնդութեամբ: Եւ ասէ ցնասա. «հրեշտակն ասաց ցիս պատուէր տաց Գրիգորի, զի մի հակառակեցի նա քեզ: Եւ նա փութայր դումարել բաղձութիւն, զի կատարեցեն քայն, զորմէ խորհէին: Եւ անա Գրիգոր ևս սթափեցուցանէ զնոսա

461, 17. տեսլեամբ իւրով և հաստատէ զբան թագաւորին: Եւ ասէ ցնոսա. «Որպէս հրամայեաց Աստուած և որպէս [հրամայէ] կամք ձեր, այնպէս առնիցեմ ...»

• Մատթ 1, 21: Գործք իս. 44:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

Եւ հանգերձեցան նախարարք ամենայն ի հմ. 465, 24. գնալ ընդ Գրիգորի ի Կեսարիա քաղաք, որ ի հմ. 462, 17. Թարգմանելն ի հայ կոչի Մազակա (Մաժակ), եւ արքայն Տրդատ առաքեաց ընդ նոսա ի միասին ընծայս մեծամեծս և պաշար վասննոցա ի ճանապարհի, պարգևս՝ առ ի մատուցանել պատրիարքին, պաշտօնէից եկեղեցւոյ և իշխանաց կողմացն, իսկ զդրամոն [տառացի՝ ծախք] և զպաշար՝ վասն նոցին ինքեան ի Կեսարիա և վասն վերադարձի նոյնպէս և նախարարք առին ընդ ինքեանս ի կարաւանի իւրեանց պարգևս առատութեամբ, առ շահել նոքօք զմարդիկ:

Եւ համբարձին զԳրիգոր յարքայական կառս 466, 4. զարդարեալս ոսկով և թանկագին քարամբքս նախարարք հանգիսիւ ուղեկից լինէին սրբոյն ի Կեսարիա: Եւ առաջնորդութիւն ամենայն զօրաց էր ի ձեռս Արտաւազդայ իշխանին Մամիկոնեան, եւ սպարապետի, ընդ որոյ իշխանութեամբ էր ամենայն Հայաստան: Երկոքին սոքա 8 էին հաստարիմք արքայի կարգեալք յառաջնորդութիւնն ամենայն զօրաց: Եւ սորա երկօքին առաքէին յառաջապահ գունդ, ի պատրաստել իջևանս և զանհրաժեշտ պէտոս, էր այն քաղաք եթէ գիւղ: Էին նոքա արք երեք հազար հեծեալ, բաց ի հետևակաց, ի սպասաւորաց և ի համհարզից: Ընդ նմա էր և թուղթ արքային Տրդատայ առ արքեպիսկոպոսն Ղևոնդիոս: Եւ յիւրաքանչիւրում քաղաքի կամ ի գեղջ իբրև լսէին, եթէ Գրիգոր, նահատակն Քրիստոսի, գնայ ի քաղաքն Կեսարիա, զի կացցէ դուրս ժողովրդեան և բնակչաց Հայաստանի, զորս դարձուցեալ էր յաստուածգիտութիւն՝ արք, կանայք և տղայք մովսէր և լապտերօք ընդ առաջ ելանէին Գրիգորի և իշխանաց, որք էին ընդ նմա: Սոյնպէս և քահանայք ելանէին խնդութեամբ ընդառաջ սրբոյն, առ ի

**Ք. 468, 14.** *ընդունել ի նմանէ զօրհնութիւն և փառաբանէին զԱստուած վասն դարձուցանելոյ զժողովուրդն զայն ի քրիստոնէական հաւատս ի ձեռն սրբոյն Գրիգորի:*

Եւ յայնժամ եպիսկոպոսն Սեբաստիոյ ընդ ամենայն ժառանգաւորս եկեղեցւոյն աղաչեաց զսուրբն մնալ առ նոսա աւուրս ինչ: Երանելին պատասխանի ետ և ասէ. «Ի դարձի մերում արասցուք զայդ, այլ ոչ այժմ»: Եւ եկաց առ նոսա միայն աւուրս երկուս: Եւ նա մեծաբանօք ընկալաւ զնոսա յայս երկուս աւուրս:

Յետ այնորիկ ելին նոքա ի Կեսարիա: Համբաւ զնոցանէ յառաջէր քան զնոսա յամենայն տեղիս ցհասանել սպասաւորաց նոցա, որք հանդերձէին զկարևորս վասն նոցա: Եւ ամենայն բնակիչք քաղաքաց և գիւղից ելանէին ընդ առաջ նոցա. զարմանային ընդ նոսա. գովաբանէին զԱստուած և փառաւորէին զայն, որ ազատեաց զնոսա ի պաշտամանէ կռոց:

[125] Եւ իբրև մերձեցան նոքա ի քաղաքն Կեսարիա, առաքեցին առ սուրբն Ղևոնդիոս ծանուցանել նմա. նոյնպէս և առ քաղաքապետն՝ զի տնօրինեսցեն, թէ ո՛ւր իջևանելոց և բնակելոց իցեն: Եւ յղեցին ոսկի բազում առ Ղևոնդիոս պատրիարք և առ քաղաքապետն: Եւ սուրբ հայրն պատրիարք, իբրև գիտաց զայս, կոչեաց զքաղաքապետն և պատրաստեաց նոցա տեղիս, զի լինիցի յարմար վասն բնակութեան նոցա: Զմեծամեծս բնակեցոյց ի մեծաչէն յարկս. իսկ սրբոյն Գրիգորի հրամայեաց մնալ առ ինքն յեպիսկոպոսական տան: Եւ ասա, ամենայն բնակիչք քաղաքին արք և կանայք և տղայք ի միասին ընդ քաղաքապետին ընդ առաջ ելին նմա չորիւք մղոնօք արտաքս քան զքաղաքն և ողջունէին զսուրբն: Տև-

սեալ զնոսա՝ էջ յարքունի կառաց և մեծաւ ուրախութեամբ և խնդութեամբ հետի գնայր ընդ նոսա, մինչև մտին ի քաղաքն: Եւ իբրև մերձեղեն յեկեղեցին, յայնժամ ել հանդէպ նոցա արքեպիսկոպոսն հանդերձ ամենայն ժառանգաւորօք (կղեր) իւրովք, քահանայիւք և պաշտօնէիւք սրբոյ եկեղեցւոյն Աստուծոյ և ողջունեաց զերանելին Գրիգոր և զվեշտասան իշխանս զայնոսիկ: Եւ ի միասին մտին յեկեղեցին և արարին աղօթս: Եւ հրամայեաց նոցա մնալ յեպիսկոպոսական տան: Եւ իրազեկ եղև ամենայն նորութեանց նոցա և սկսաւ ուսուցանել նոցա զճանապարհ աստուածգիտութեան: Յետ այնորիկ ասէ ցԳրիգոր և ցվեշտասան աւագս եղեալս ընդ նմա, առնուլ ի նմանէ որ ինչ պիտոյ իցէ: Իսկ առ այլս յղէր իւրաքանչիւրում՝ ի տեղի բնակութեան նորա, ուր իջևանս կալեալ էր և լցուցանէր զպէտս նոցա: Եւ լցաւ քաղաքն ամենայն ցնծութեամբ և ուրախութեամբ. և լուցանէին ջահս յաղագս սրբոյն՝ հասելոյ առ նոսա, և յաղագս ժողովրդեան, որ վրկեալ էր ի ձեռն նորին:

Ընդ այն ժամանակս արքեպիսկոպոսն Ղևոն հմ. 467, 44, դիոս (առաքեաց), յղեաց առ եպիսկոպոսունս, և միարոպօլիտս, որք ընդ իւրով իշխանութեամբ, զի ժողովեացին առ ինքն: Եւ իբրև եկին նոքա ամենեքին, յայնժամ ետ նոցա զթուղթ Տրդատայ արքայի, և ի թղթին էր [գրեալ] այս.

«Ի Տրդատայ արքայէ Հայոց մեծաց. ի կնոջէն հմ. 468, 4, իւրմէ Ասիխենայ (Աշխէն) թագուհւոյ և ի քեռէ իւրմէ Կուսարօդուկտէ (Խոսրովիդուխտ) և յամենայն բնակչաց Հայաստանի առ Ղևոնդիոս, տէր մեր և պետ պետաց Կապադովկիայի և Պոնտոսի, ամենայն հօտի նորա, աւագաց և իշխանաց նորա և ամենայն քրիստոնէից բնակելոց ի Կեսարիա:

«Ամենայն սիրով, հեղութեամբ և յարգա-  
նօր արժան է, ով երանելիք, որ զօրութեամբ  
կենդանւոյն Աստուծոյ բժիշկդ էք տկարաց, զի  
խոստովանեսցուք և ծանուցուք ձեզ զառաջին  
վէրս մեր և յայտնեսցուք ձեզ զառատ սէր  
մարդասիրին Աստուծոյ և զհարուածսն, զորս արկ  
Նա ի վերայ մեր: Քանզի յառաջագոյն ի խաւարի  
էաք ընդ մթին մառախղովք, և մէդ ծածկեալ  
էր զաչս մեր և ոչ կարէաք ճանաչել զճշմարտն  
Աստուած և ոչ զօրէաք հայել ի Քրիստոս—յԱրե-  
գակն արդարութեան, քանզի ի մուսրութեան  
ունայն կռոց էաք, որպէս էին հարքն մեր: Զա-  
մենայն, որ չէր ի մուար հաւատս մեր, նեղէաք  
և տանջէաք: Յայնժամ՝ մարդասիրին Աստուծոյ  
հաճոյ եղև դարձ մեր ի ճանապարհն ճշմա-  
րիտ և առաքեաց առ մեզ զվկայուհիս Իւր, չար-  
չարեցան նորա ի մէնջ և եղեն սուրբք ի Քրիստոս:  
Բայց մեք ոչ կամէաք ճանաչել [127] զմի ճշմարտն  
Աստուած, և զայս Գրիգոր, որ ոչ կամեցաւ լի-  
նել կցորդ մեզ ի չարիս ամբարշտութեան և  
ի պաշտաման կռոց, տանջեցաք զանողան չարչա-  
րանօք և նա յաղթեաց մեզ իւրով համբերու-  
թեամբ. յետ այնորիկ պատուիրեցաք, վասն չա-  
րաչար մահուան՝ արկանել զնա ի խորս վիրապին  
ընդ սողունս, ուր արկանէաք զմահապարտս,  
որք մեռանէին ի շնչոյ սողնոց՝ չև ևս հասեալ  
ցյատակ, և նոյն ժամայն անզգայ լինէին: Սակայն  
երանելիս այս եկաց անդ պահպանեալ ամս հնգե-  
տասան, և այսուիկ ցուցաւ մեզ, եթէ ողորմութիւն  
և օգնականութիւն Աստուծոյ ի վերայ նորա է, զի  
փրկիցուընորս վարդապետութեամբն: Եւ կանայք,  
կուտանք, փախեան ի Հռովմ՝ քաղաքէ ի Գիոկ-  
ղիտիանոսէ արքայէ և եկին յերկիրս մեր: Եւ  
յարքայէ եհաս առ մեզ թուղթ, որ գիտակս  
առնէր մեզ զայնմանէ, կալաք զնոսա, բայց նորա ոչ



համաձայնեցան ընդ մոլորութիւնս մեր: Եւ չար-  
չարեցաք զնոսա զանազան տանջանօք և յետ  
այնորիկ սպանաք: Եւ Քրիստոսի կամ եղև պա-  
տուհասել զմեզ վասն չարեաց մերոց և պատու-  
հասեաց ըստ մեծի գթութեան իւրում: Զիս,  
զթագաւորս, դարձոյց ի կերպարանս խողի և  
յանձնեաց այնց դիւաց, զորս պատուէի: Իսկ որ ինչ  
վասն նախարարաց իմոց և աւագանւոյ,—ապա-  
քէն նորա ուտէին զմարմինս իւրեանց և պատուէին  
զհանդերձս իւրեանց: Իսպառնք իմ՝ յայտնեցեն  
քեզ զանցս, որ ընդ Քրիգորի շնորհս տեսեան, որ  
երևեցաւ քեռն իմում, զսուրբն հանին յօձալիցն  
վիրապէ: Եւ մեք աղօթիւք նորա փրկեցաք ի բար-  
կութիւնէ հասելոյ մեզ, և նա ուսոյց մեզ զհաստա-  
տուն հաւատս, զի ծանիցուք զկենդանին Աստուած  
և զՍրբի նորա և զՍուրբ Հոգի: Զնա իսկ ընտրե-  
ցաք, զի լիցի մեզ զլուխ. բայց նա ոչ համա-  
ձայնէր այնմ, որ վասն պաղատէաք զնա: Յայն-  
ժամ ինձ, որ անարժանս եմ, երևեցաւ հրեշտակ  
որ փայլէր որպէս զփայլակն և հրամայեաց ինձ  
առնել այնպէս: Եւ [հրեշտակն] ասէ ցիւ. «Երե-  
ւեցայոյ նմա ևս, զինա մի [մերժեսցէ քեզ], զոր  
հրամայես նմա, այսինքն ընդունել զառաջնոր-  
դութիւն: Եւ առէք զնա, զի լիցի ձեզ հովիւ և  
տարայք ի տեղին, ուր ուսաւ զգիրս: Եւ մեք աղա-  
չեմք զքեզ, փութան ձեռամբ քով սրբով տալ նմա  
զկնիք քահանայութեան և առնել զնա մեզ հովիւ  
և ուրախացն այդուիկ զդեսպանս իմ: Եւ մեք լի  
նախանձաւորութեամբ խորտակեցաք զկուռս ի  
մասունս, կործանեցաք զտաճարս և կանգնեցաք  
խաչս յամենայն տեղիս. իսկ նահատակն Քրիգոր  
հրամայեաց մեզ շինել եկեղեցիս: Եւ այժմ ըստ  
խնդրոյ մերում, թող զի փութացի կատարել  
նա զայս գործակցութեամբ սրբութեան քո  
և աղօթեա վասն մեր հանդերձ քահանայիւք

քովք և եղբարքք մերով ի Քրիստոս, զի ար-  
ժանասցուք ընդունել զկատարելութիւն՝ մկր-  
տութեամբ և զչնորհս ի Փրկչէ մերմէ Յիսուսէ  
Քրիստոսէ և լիցուք համադասեալ ի հօտ քո-  
ւովչոյն քեզ, ո՛ր երանելիդ, ամենայն ժառանգա-  
ւորաց (կղեր) քոց, պետաց, աւագաց և բնակ-  
չոց աշխարհիդ»:

հմ. 467, 1. Երանելին Ղևոնդիոս և ամենայն բնակիչք  
քաղաքին Կեսարիոյ լցան խնդութեամբ, եւ  
հրամայեաց նա հոգալ զպէտս սրբոյն Գրիգորի  
և նախարարաց, որք ընդ նմա, և տարեալ էին  
վասն եկեղեցւոյ առատ նուէրս անօթոց ոսկւոյ և  
արծաթոյ, եւ զԳրիգոր ձեռնադրեցին քահանայ,  
որպէս հրամայեալ էր ալքայ, ի վերայ աշխարհին  
հայոց, Իբրև կատարեցին զայս, վեշտասան իշ-  
խանքն առին ուրախութեամբ զամենայն, զսր բե-  
րեալ էին ի տանէ և բաշխեցին ոչ միայն յեկեղեցիս,  
[129] այլ և [ետուն] աւագաց քաղաքին և այլոց  
ազնիւ երիվարս, հանդերձս թանկագինս, քա-  
րինս պատուականս և զայլս սոյնպիսիս: Բնակիչք  
Կեսարիոյ լցան ցնծութեամբ և ուրախութեամբ  
վասն ընդունելոյ զսուրբ նահատակն, զիշխա-  
նական աւագանին և զպետո զաւառաց, վասն  
ժողովելոյ նոցա և միահամուռ ի միասին հա-  
ղորդս լինելոյ ի սուրբ եկեղեցւոջ Աստուծոյ.  
յաղագս սուրբ մկրտութեան նոցա և դառնալոյ  
առ Աստուած և յաղագս փրկութեան այն-  
պիսւոյ ժողովրդեանն ի սնտի և կորստական մո-  
լորութենէ համբերութեամբ և վարդապետու-  
թեամբ երանելոյն, այսինքն Գրիգորի, որ  
սնեալ, դաստիարակեալ և ուսեալ էր ի քաղաքի  
իւրեանց:

հմ. 467, 14. Եպիսկոպոսք հանդերձ սուրբ պատրիարքաւն  
Ղևոնդիոսիւ ժողովեցան և գնացին ի սուրբ և

յաւազ եկեղեցին (соборная церковь). ածին զերանելին առ սեղանն, բացին զսուրբ աւետարանս և եզին ի վերայ նահատակին Գրիգորի խոստովանողի: Եւ երանելին Ղևոնդիոս և ամենայն եպիսկոպոսունք եզին ձեռս ի վերայ նորա. ընթերցան ի վերայ նորա աղօթս, ուրք պէտք են վասն իւրաքանչիւրոյ, որ ցանկայ հասանել առաջնորդութեան և զգեցուցին նմա զշապիկ (ժամաշապիկ-стихарь): Ամենայն ժողովուրդն գոչէր. «արժանի է արժանի է. արժանի է»: Եւ կատարեցին զպատարագն: Եւ ետուն զբացեալ տեղին ի Գիրս չորից Աւետարանաց ցտարկաւազ, որում անկանէր յայն օր ընթեռնուլ զաւետարան: Եւ այսպէս էր տեղին, զոր ընթեռնուլ հարկ էր. «Ես եմ՝ հովիւ բարի, որ դնեմ զանձն իմ՝ ի վերայ հօտի Իմոյ » և ն:

Յետ աւարտման ամենայն ժողովուրդն ող- 468, 4.  
ջունեաց զսուրբն՝ որպէս մեարապօլիտ մեծին Հայաստանի Գրիգոր և կալաւ զնա առ ինքն աւուրս ինչ հանդերձ եղելովքն ընդ նմա: Ամենայն եպիսկոպոսք, աւագանի և մեծամեծք Կեսարիոյ և այլք, արք և կանայք և տղայք յուղի եզին զնոսա արտաքս քան զքաղաքն երգօք, խնկօք և աղօթիւք: Սուրբն Ղևոնդիոս արքեպիսկոպոս ետ նմա յոսկերաց [ինչխարաց], տեառն Յովհաննու Մկրտչի, որպէս ի նմանէ ինդրեաց երանելին Գրիգոր և գրեաց պատասխանի թղթոյ արքային: Իսկ նա [Գրիգոր] ետ ողջօյն (մեկնման) նմա և նոյնպէս ամենայն եպիսկոպոսաց. և հանին զնա յարքունի կառս հանդերձ սուրբ նչխարօք. որ էր ընդ նմա: Եւ նոքա յետս ի քաղաքն իւրեանց ի Կեսարիա դարձան

«. Յովն. ժ. 14, 15»

սքանչացեալ այնմ, զոր տեսին ի մարդկանէն. որք ընդ սրբոյն էին. ցնծային այնուիկ, որ դարձոյցն զնոսա յընդհանրական եկեղեցի: Ի թղթին, զոր գրեաց սուրբն Ղևոնդիոս առ արքայ, էր այս ինչ:

475, 2.

«Տրդատայ, արքայի Հայոց Մեծաց, Ասի-խենայ թագուհւոյ և քեռ նորին Կուսարօղուկոի և ամենայն ժողովրդեան. Ողջոյն ձեզ յԱստուծոյ կենդանւոյ ի Յիսուսէ Քրիստոսէ, Որդւոյ Աստուծոյ, Միածնէ, և ի Սուրբ Հոգւոյն: Ի Ղևոնդիոսէ արքեպիսկոպոսէ ի մեծի քաղաքի ի Դրունս Կեսարիոյ, ողջոյն ձեզ, որք պատուհասեալք էիք և դարձայք ի գիտութիւն, քանզի կորուսեալ էիք՝ գտայք. մեռեալ էիք՝ կենդանացայք և ընկալայք կեանս: Ուրախ լերուք և ցնծացէք յաւէտ. քանզի յառաջին չարեաց, զորս ածիք ի վերայ սրբոց և ի վիրաց պատելոց զձեօք [131] դարձայք ի ճշմարիտ գիտութիւն: Իմացաք զամենայն, զոր գրեալ էիր ինձ ի թղթի քում՝ և զոր պատմեցին մեզ դեսպանք քո և փառաւորեցաք զշնորհս Քրիստոսի, զճառագայթեալսն ի վերայ ձեր սակս կուսանաց, զորս սպանիք. քանզի դեռ ի մոլորութեան էիք, իսկ նոքա ժառանգեցին զկեանս յաւիտենականս ընդ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերում, և սակս սրբոյն Քրիգորի, որ ի տղայ տիոց կրթեցաւ ի գիտութեան Աստուծոյ, յուսումն բարեաց և սուրբ գրոց, եկն առ ձեզ, պահեաց զհաւատս ի Քրիստոս, կատարեաց զընթացս որպէս ասէ առաքեալն և արժանի եղև պսակին. իսկ ձեզ պարգևեաց զշնորհս Աստուծոյ ուսուցանելով զձեզ, եղև ընթացակից ընտրելոցն Քրիստոսի: Զնա իսկ, ըստ ցանկութեան ձերում մերձեցուցի առ երկնաւորն շնորհս. ընկալաւ ի մէնջ, ի նիա-

զիցս, զկարգ. եղև հովիւ հօտի այն՝ զոր ի սկզբանէ ընտրեաց սուրբ Հոգին, զի հաստատեցէ զձեզ, և իբրև գլուխ՝ կատարեցէ ի ձեզ զամենայն: Յայսմհետէ ընկալարձաք զսուրբ հովիւն խաղաղութեան, զիմաստուն վարդապետն և զառաջին առաջնորդն: Իսկ մեք անդադար աղօթս առնելոց եմք հաստատուն հաւատովն վասն սիրոյ ձերոյ առ Աստուած և հնազանդութեան առ հովիւն խաղաղութեան, որով, հաղորդ գտայք ողորմութեանն Քրիստոսի: Եւ յորժամ կատարիցէք զայս, յայնժամ լինիլիք ընդ մեզ և, թէև անջատ իցեմք ըստ մարմնոյ, սակայն ըստ հոգւոյ լինիցիմք միացեալ: Հայր խաղաղութեան Աստուած և միածին Որդին Քրիստոս Աստուած պահեսցէ զձեզ Հոգւով սրբով և ազատեսցէ ի խռովութենէ և պատսպարեսցէ սիրով իւրով: Խաղաղութիւն ընդ ձեզ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ»:

Յուզի անկան անտի խնդութեամբ և հասին հմ. 468, 4.

Ի քաղաքն Սեբաստիա, իջևանս կալան ի տեղուջ, որ կոչի Եբբուդուքիւն. և անդ հարին զվրանս իւրեանց, և զլաս ինչ ումեք ոչ հասուցին, ոչ ի իք, ոչ ի քաղաքի և ոչ ի գեղջ, այլ գնէին ի մարդկանէ ի ճանապարհայինն թոշակէ իւրեանց: Բնակիչք Սեբաստիոյ ուրախ լինէին ամենեքեան ի միասին հանդերձ եպիսկոպոսան սրբով Պետրոսիւ: Իշխան նորա (Սեբաստիոյ) նոյնպէս ուրախ լինէր և մեծաւ բերկրութեամբ պահեսաց [տառացի նստոյց] զնոսա առ ինքն ի քաղաքին Սեբաստիոյ զաւուրս վեց: Յետ այնորիկ յուղարկեաց զնոսա և նոքա անկան ի ճանապարհ յաշխարհն իւրեանց: Սուրբն Գրիգոր էառ ի Սեբաստիոյ քահանայս և կրօնաւորս ոչ սակաւս առ ի կարգել զնոսա քահանայս յեկեղեցիս Հայաստանի: Ընդ նոսա էր թուղթ ի պատ-

րիարքէն Ղևոնդեայ առ Պետրոս եպիսկոպոս Սեբաստիոյ, զի գայցէ նա ընդ նմա առ ինստուցանել զնա յաթուռ, որպէս հրամայեն կանոնք եկեղեցւոյ:

- 469, 7.** Իբրև հասին ի Մեծն Հայաստան, ընդ առաջ նոցա ելանէր ժողովուրդ յամենայն կողմանց, և եգիտ նա (Գրիգոր) զից հասանել իւր արդէն շինեալ էին նոքա եկեղեցիս յամենայն քաղաքս [կողմանս], յորս կանգնեալ էր նա խաչս: Եւ իբրև եհաս Գրիգոր, շինեաց ի նոսա սեղանս, իսկ եպիսկոպոսն տէր Պետրոս սրբեաց զնոսա ըստ կանոնի: Կացուցին քահանայս ի Տարօն գաւառի, ելին
- 470, 15.** անտի և հասին ի Շատիսատ [Աշտիշատ], ի տեղւոջ իմիք ի քաղաքիս արքունի կառք, յորում նստեալ էր սուրբն Գրիգոր, կառեաւ: Ընդ նմա (ի կառան) նստեալ էր և երանելին Պետրոս: Ընդ նոսա էին [ժասունք] յոսկերաց [նշխարաց] տեառն սրբոյն Յովհաննու Մկրտչի ևս և սրբոյն Աթիւնոգենայ (Աթանագինեայ), Գիտացին, եթէ հաճոյ լեալ է սրբոյն կալ յայնմ տեղւոջ, և պատուիրեցին իշխանաց, [133] որք ընդ նոսա էին, շինել եկեղեցի յայնմ տեղւոջ յանուն տեառն Յովհաննու: Եւ զայս իսկ և իսկ գիտաց սուրբն Հոգևով սրբով:
- 470, 25.** Եւ իբրև սկսան շինել զեկեղեցին սրբոյ մարգարէին, իջին ի կառաց ի Շատիսատ [Աշտիշատ] քաղաքի: Ի բարձու տեղւոջ կայր տաճար կռոց, զոր կոչէին Ափրոդիտէ: Եւ նոքա պատուիրեցին իշխանաց կործանել զայն օգնականութեամբ մանկանց [սպասաւորաց] իւրեանց, երկրագործաց: Առին բահս, ընթացան ի տաճարն, առ ի կործանել զայն, բայց ոչ գիտէին զճանապարհն, որ տանէր յայն և ոչ կարէին ական հա-

տանել ի պարիսպսն նորա և ոչ իւիք: Յայնժամ  
դարձան և յայտնեցին զայն սրբոյն:

Եւ ահա էառ նա խաչ, գնաց ընդ նոսա, եկաց 471, 9.  
մերձ առ տաճարն, ծունր եղ և աղօթեաց:  
Յայնժամ յարեաւ փոթորիկ սաստիկ, կործանեաց  
զորմն, գերանք ցիր և ցան եղեն. իսկ զսպաս և  
զամենայն պաշտօնեայս տաճարին արկ հեռի ի  
խոր անձաւ մի: Տեսեալ զայս նշան սուրբն Պետ-  
րոս, որ էր ընդ Գրիգորի, յոյժ զարմացաւ, իսկ  
իշխանք յետս դարձան ընդ նոսա մեծաւ խնդու-  
թեամբ և երկիւղիւ և յետ այնորիկ աղաչեցին  
զԳրիգոր մկրտել զնոսա յայնմ տեղուջ: Իբրև հմ. 472, 8.  
կատարեցին զշինուած տաճարին տեառն սրբոյն  
Յովհաննսու և նահատակին Աթինոգենայ յայնժամ  
սրբեցին զեկեղեցին, առին զերանելին և նստու-  
ցին զնա յաթոռ աշակերտաց [Քրիստոսի] ըստ  
կանոնի, և նա մկրտեաց զամենայն իշխանս եղ-  
եալս ընդ ինքեան ի քաղաքին Կեսարիոյ և  
զամենայն ծառայս նոցա: Ժողովեցան ժողովուրդ-  
բազում—արք, կանայք և տղայք, և նա մկրտեաց  
զնոսա: Ամենեքեան ուրախ եղեն, փութային  
լինել կատարեալք, մանաւանդ յետ հրաշիցն,  
զորս տեսին:

Եւ իբրև լուաւ արքայ Տրդատ, եթէ գայ հմ. 473, 15.  
սուրբ Գրիգոր, էառ զկին իւր զԱսիխէն, զքոյր  
իւր Կուսարօզուկտ, զթագաւորն վրաց, զթա-  
գաւորն ռուսաց Գ, զթագաւորն ալանաց, զնա-  
խարարս իւր, զիշխանս և զտեարս ժողովրդեան և  
ելին ընդ առաջ սրբոյն Գրիգորի և ողջունեցին  
զնա և զսուրբն Պետրոս եպիսկոպոս: [Տրդատ] ըն-  
կալաւ զամենայն իշխանս եղեալս ընդ նմա զիւրա-  
քանչիւր որ ըստ իւրում աստիճանի, էառ զթուղթ  
սրբոյն Ղևոնդեայ պատրիարքի և ընթերցաւ զայն:  
Քաջ իսկ գիտակ էր թագաւորն լեզուին հռոմայեց-



ւոց, քան զի դաստիարակեալ էր ի պալատան ընդ  
Լիկիանեայ պատրկիսթայնժամ սկսաւ մեկնել ժողո-  
վրդեան զթուղթն հասեալ առ ինքն ի պատրկարքէն  
Ղևոնդեայ և թարգմանէր ի յունարենէ ի հռով-  
մայեցի, և ի հռովմայեցի լեզուէ ի հայ:

ՏՄ. 478, 10. Եւ ամենայն, որ լսէր, խնդայր և բերկրէր:  
Եւ փութային ընդունել զմկրտութիւն առ ի ար-  
ժանի լինել ընդունելութեան սուրբ մարմնոյ: Եւ  
երանելին Գրիգոր պատուիրէր թագաւորին, զի  
պարգևատրեսցէ զեպիսկոպոսն զՊետրոս առատ  
նուիրօք և դարձուցէ ի տեղի իւր: Եւ կատա-  
րեաց նա զայն իսկութեամբ:

ՏՄ. 478, 16. Իսկ սուրբն Գրիգոր սկսաւ քարոզել նոցա  
Հոգևով սրբով զուղիղ հաւատս, հրամայեաց նոցա  
պահել զաւուրս երեսուն, ուսոյց նոցա զհաւատս,  
և յանձն էառ տալ նոցա զմկրտութիւն յետ լըր-  
մանն աւուրցս այսոցիկ: Արարին իշխանք, [135]  
որպէս հրամայեաց նոցա, և ի նոցանէ ոչ գոյր ոք,  
զի ցուցանիցէ զաշխարհային ցանկութիւն ինչ, այլ  
ամենեքեան ի մի օրէնս էին աւագք և շինա-

ՏՄ. 479, 19. կանք: Եւ սուրբն Գրիգոր կամեցաւ շինել եկե-

ՏՄ. 478, 19. ղեցի ի Բագաւանի և իսկ և իսկ մեկուսացաւ վասն

474, 3. ազօթից, հեծութեան և մաղթանաց, զի պահպա-  
նեսցեն նորա զհաւատս, զոր ընկալան, հանդերձ  
ամենայն քահանայիւք, եղելովք ընդ նմա և կրօ-  
նաւորօք, զորս կամէր կացուցանել ի քահանայս  
յեկեղեցիս: Եւ սկսաւ սրբել զեկեղեցիս և կարգել  
ի նոսա քահանայս յայնոցունց՝ որք գիտէին զսուրբ  
գիրս: Զոմանս առաքեաց ի Վոաստան, զոմանս՝  
յերկիրն արքունի, կոչեցեալն Բագաւան, թիւ

ՏՄ. 480, 3. Եւ իբրև լցան աւուրք երեսուն, և ժառան-  
գաւորք [կղեր] ժողովեալ էին առ նա, յայնժամ էառ  
զամենայն ժողովուրդն և ամ ի գետն Եփրատ մերձ  
ի քաղաքն արքունի, կոչեցեալն Բագաւան, թիւ

նոցա էր երեք հարիւր եօթանասուն հազար, արքայն Տրդատ, արքայն արխազաց, արքայն վրաց, արքայն ալանաց և ամենայն իշխանք և պետք ազգաց և ցեղից և ամենեքեան, որ ընդ իշխանութեամբ նոցա էին և բազմութիւն ծառայից, արք և կանայք և տղայք: Առ գետոյն հարին վրանս, զի կանանի [կանայք] արքայից իջանիցեն ի մկրտիլ: Վեշտասան իշխանք, որք ի սկզբան մկրտեալ էին ի սրբոյն Գրիգորէ և կանանի նոցա ընկալուին ի ժամուն զմկրտեալսն ի [տեղւոյն] մկրտութեան, առ որով արք սպասաւորէին արանց, իսկ կանայք՝ կանանց: Գրիգոր կացեալ առ ասին գետոյն, հրամայէր նոցա մերկանալ յանձնէ զհանդերձս, նախքան զամենեսեան՝ արքային Տրդատայ և ընդ նմին երից թագաւորաց և իշխանաց նորին (Տրդատայ) և սրբեաց զնոսա միւռոնաւ և խաչիւ: Էառ նա զմիւռոնն և զիւղ [ձէթ], եհեղ ի գետն յայն և տեառագրեաց խաչիւ:

Եւ յայսմ ժամանակի եղեն սքանչելիք. զի **ԿՍ. 480, 18.** գետն զկայ էառ ալիք դադարեցան. եդ նա ձեռս ի վերայ գլխոց նոցա, ընկղմեաց զնոսա ի ջուր աջոյն սրբով երիցս ընկղմամբ և մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն: Նմին իսկ նման առնէին և քահանայք ընդ մնացեալ մարդիկն, նոյնպէս և ընդ կանանոյ արքայից և ընդ կանանոյ այլ մարդկան: Եւ երևեցաւ սիւն հրոյ ի մէջ գետոյն և ի վերայ այնորիկ փայլէր խաչ: Ամենեքեան տեսին զայն ի վերայ ջրոյն, սիւն հրոյ, և ի վերայ նորա խաչ ճառագայթեալ, զարմացան, շփոթեցան և հաւատ նոցա ի Քրիստոս զօրանայր:

Եւ իբրև ելին ի ջրոյ, գնացին խնդութեամբ, **481, 5.** բերկրելով և պատմէին այր ընկերի զհրաշիցն:

զորս տեսին ի ջուրսն: Սուրբն էառ զնոսա-  
անտի աղօթիք, հանդերձ ամենայն ուխ-  
տիւ կրօնաւորաց, մոմովք և խնկօք մինչև հասոյց  
զնոսա յեկեղեցի, զոր շինեալ էին ի քաղաքին  
Բագաւան: Յայգապաշտօն (հսկումն) կատարեցին  
և սկսան զպատարագն և հաղորդեաց (մարմնոյ  
և արեան Տեառն) զարքայն, զիշխանս նորա և  
զայլ մարդիկ և արձակեաց զնոսա յիւրաքանչիւր  
տեղիս ուրախս և բերկրեալս. քանզի ազատեալ  
էին ի սուտ և ի խաւարային ճանապարհէ և ընթա-  
նային ընդ ճանապարհն, որ լին է լուսով կենաց:

4մ. 484, 5. [137] Եւ արքայ ի միասին ընդ սրբոյն Գրիգորի  
գնացին դարձուցանել զպաշտօնեայս կոոց ի հա-  
ւատս Քրիստոսի: Նոքա եկեալ էին յաշխարհէն

4մ. 484, 8. ՎԱ—դ—ի—թ», [ԵԱ—Ճ—Ի—Տ»] 10 Ի սպասաւորեւր-  
տաճարաց կոոց և էին եռանդունք ի կոապաշ-  
տութեան: Սուրբն Գրիգոր ուսոյց նոցա հաւատս,  
և նոքա առաւել քան զամենեսեան վաստակե-  
ցան ի քրիստոնէական հաւատս: Հայրն անբիծ,  
նահատակն, հովիւն խաղաղութեան Գրիգոր ի  
սկզբան էառ զայնոսիկ, որք սպասաւորեալ էին  
ի բագինս և ուսոյց նոցա զսուրբ գիրս:

Եւ Գրիգորս այս սուրբ, կացեալ կաթուղի-  
կոս ողջոյն Հայաստանի, պատրաստեաց եպիս-  
կոպոսունս և առաքեաց ընդ ամենայն երկիրն  
Հայոց, ի Վրաստան և ի կողմանս «Դ—ր—զ—կ—ի—տ»  
(Ճ—Ր—Յ—Ք—Պ—Տ) 11 և յալանս: Եւ էառ զմի ի վրաց  
անտի, որ եկեալ էր ընդ նմա ի Սեբաստիոյ  
Իբիր—բ—զ—խուա, [Ибвр—б—з—хуа] արար մետրոպո-  
լիտ և յղեաց՝ զի կարգեսցէ նա եպիսկոպոսունս  
ի վերայ ամենայն Վրաստանի: Էր նա վարուք գո-  
վելի, բարեպաշտ և գիտուն եկեղեցական գրոց: Էր  
նա սարկաւագ և քականատես, յորժամ բանային  
զնշխարս քառասուն վկայից և զարդարեալ էր ա-

լեօբ, և վասն այսորիկ համբարձ զնա [սուրբն Գրիգոր] յայն աստիճանս Եւ յղեաց յաշխարհն արխագաց զՍոփրոնիոս, և էր նա քահանայ ի Կապադովկիայէ: Էր նա առ սուրբն Գրիգոր, և սա արար զնա եպիսկոպոս և առաքեաց: Եւ յղեաց ի կողմանս ականաց զԹովմաս զայրն ընտիր: Էր նա ի Փոքուքաղաքէն Սատաղայ: Եւ էին սորա յայնոցունց, որք ընդ նմա (Գրիգորի) եկին [ի Սեբաստիայէ] և էին տեղեակք սուրբ գրոց:

Եւ որպէս արարեալ էր ի սկզբանէ, նոյնպէս հմ. 485, 15.  
յղեաց նա յաշխարհն գիլանաց, առ արխագս, ի Մեծն-Սոփենս, ի Փոքրն-Սոփենս յաստիանս (Հաւսիանի?), ի Սիւնիս, ի Մոկսոենս (Մոկի?) և ի մարդապետական, և ըստ այսմ՝ յուրաքանչիւր տեղի, յորում տէրն յօժարագոյնս երևէր: Եւ առաքեաց եպիսկոպոսունս ընդ տեարս աշխարհաց, և իշխանքս այսօրիկ, տեարք և պետք ժողովրդեան յոյժ ուրախ լինէին, գնալով յաշխարհ իւրեանց ընդ եպիսկոպոսունս կարգեալս ի վերայ նոցա, և ընդ բազմութիւն քահանայից այնու, զի կանգնիցեն եկեղեցիս յանուն նահատակաց:

Վերստին փութայր յղել եպիսկոպոսունս հմ. 486, 22.  
յայլ աշխարհս Հայաստանի: Յղեաց նա զԱղբիանս ի գաւառն Բագրևանդայ 12 և առ ամենայն բնակիչս կողմանց Եփրատայ, որք յառաջն պաշտօն մատուցանէին կոոց, իսկ սա վարդապետութեամբ իւրով դարձոյց զնոսա զամենեօին յաստուածգիտութիւն. վասն զի արժանի էր նա նստել յաթոռ աշակերտաց [Բրիստոսի]: Եւ յղեաց զԵւթաղիոս ի կողմանս Բասենոյ [Ծափաճով] յեպիսկոպոս ի վերայ նոցա: Եւ յղեաց զԲաս՝ յեպիսկոպոս Բիկուղաց: Եւ յղեաց զՄովսէս՝ յեպիսկոպոս ի կողմանս Իբակիրեթ և Դերձան (Դերջան): Եւ յղեաց զԵւսեբիոս

ի կողմանս Դարանաղեաց, Եւ յղեաց զՅովհաննէս  
 յեպիսկոպոս ի վերայ կողմանց կուանիտացւոց, Եւ  
 յղեաց զԽաբիրա [Ագապէս] յեպիսկոպոս ի վերայ  
 կողմանց Սուսբարետացւոց, և նա գնաց ընդ տեառն  
 երկրին, զոր կոչեն ասպէս: Եւ յղեաց զԱղբիոս՝  
 յեպիսկոպոս ի վերայ սպարապետական երկրին  
 Մամիկոնեանց, որք էին ի մերձաւորաց արքայի  
 և սպարապետք, ի միասին ընդ գլխաւորի նոցա,  
 [132] զոր պատրիկ կոչեն: Քանզի երանելին  
 Գրիգոր պատուիրեաց եպիսկոպոսին Աղբիոսի և  
 ասաց յնա. «Մի մեկնիր ի պատրկէ, լին զեր-  
 կիրն քարոզութեամբ»: Եւ այս վասն այնորիկ,  
 զի եպիսկոպոսն վարժեալ էր յայլ և այլ գիտու-  
 թիւնս ի հռովմայեցւոց և ի հեթանոսաց բար-  
 բառս: Եւ էր հզօր ի մեկնութիւնս սուրբ գրօց  
 և ընդ նորա տեսչութեամբ էին Տարօն և Բզուն  
 [տառացի Բսուն]: Եւ զԱրտիթ արար եպիսկոպոս  
 և յղեաց զնա ի կողմանս Մաղխազաց հանդերձ  
 իշխանան նոցա Գենաարեթիոսիւ: Եւ զԱրսուկ  
 արար եպիսկոպոս և յղեաց ի կողմանս Սիրագ-  
 ԶԱնտիոքոս ևս արար եպիսկոպոս և յղեաց ի  
 Կարդալէտ: ԶՏերիկէս ևս արար եպիսկոպոս և  
 յղեաց յԱտրապատական: ԶԿիրիակոս ևս արար  
 եպիսկոպոս և յղեաց ի կողմանս Արսամունեաց:  
 Եւ յղեաց նա զայլ ևս բազում եպիսկոպոսունս յայլ  
 աշխարհս և ի ժողովուրդս: Ըստ այսմ՝ առաքեաց  
 նա և քարոզիչս զօրաւորս յուսմունս ճշմարիտ բանի:  
 Իսկ որ ինչ վասն սրբոյն Գրիգորի, նա հաստատեաց  
 քանի մի եպիսկոպոսութիւնս յԱյրարատ, ի Վա-  
 ղարսապատ, յԱրտասատ և ի Դուին և հնազանդս  
 46. 489, 8. արար աթուոյ իւրում: Եւ աշխարհացս այսոցիկ,  
 զորս յիշեցաք, յայց ելանէր: Առ ժամանակ մի դա-  
 դար առնոյր ի տեղիս, այցելելով նոցա և Տրդատայ  
 487, 20. արքայի Մեծին Հայաստանի: Եւ իբրև կատարեցաւ  
 այս ամենայն, այսինքն հաստատեաց զամենեսեան

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

ի քրիստոնէական հաւատս, զսուրբն Աղբիանոս կացոյց զլուխ ամենեցուն ի կառավարել զերկիրն. և այսպէս հանապազ հրահանգէր զամենայն կողմանս և զեպիսկոպոսունս վարդապետութեամբ այնր հաւատոյ, յոր մտեալ էին: Յետ այսր ամենայնի [սուրբն Գրիգոր] մեկնեցաւ և բնակեցաւ յայրի կոչեցելոյ Մանիարետ ի կողմանս Դարանաղեաց, զի հանգիցէ յաշխարհային հոգոց, և ետ զանձն պահոց, աղօթից և հեծութեան: Եւ ահա եհաս [լուր] առ ոմանս զսրբոյն Գրիգորէ, և թէ յառաջագոյն մտեալ էր յամուսնութիւն, ծնեալ են նմա որդիք երկու, և եհաս ]համբաւ[ զայսմանէ ցարքոյ Տրդատ, եթէ արդարև, մինչ երիտասարդ, ի ծառայութեան էր առ իշխեցողն, ամուսնացեալ էր, և ծնեալ էին նմա երկու որդիք, անուն անդրանկանն՝ Վրթանէս, զորմէ յայտնի էր նոյնպէս եթէ ամուսնացեալ է, իսկ անուն երկրորդին՝ Արիստակէս: Սա ի մանկութենէ ընտրեաց զկրօնաւորական կեանս յանձն առեալ զխոնարհութիւն, զի պահպանեսցէ զաւետարանական պատուիրանս տանելով քաղցու և ծարաւոյ: Կերակուր նորա էր բանջար և էր արգելական ի միում տեղուց, ոչ լուցանելով կրակ, ի հանգերէս աղքատի, ննջէր գետնախշտի միշտ և ոչ խուն ինչ ժամանակ: Յետ այսորիկ եկին առ նա արք, և էառ զնոսա առ իւր յաշակերտս, և խընդութեամբ, յօժարագոյն կամօք և հաստատուն հաւատով վարժեաց զնոսա ի սուրբ Աւետարանի և ի մարտս ընդ ոսոխին: Փայլեցան նոքա և եղեն մեծք առաջի Աստուծոյ և մարդկանս:

494, 4.

Եւ իբրև լուաւ զայն թագաւորն Տրդատ՝ 495, 4. փութանակի առաքեաց արս երիս յընտրելոց իւրոց և ընդ նոսա թուղթ, զի ածցեն զսրգիս սրբոյն Գրիգորի՝ անյապազ Անուանք յղելոց էին:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

առաջին՝ իշխանն Արտաւազդ պետ պատրկաց  
ամենայն Հայոց, երկրորդ՝ Տասատէս (Տաճատ)  
պետ ի վերայ Ասոնայ [Աշոցաց] երրորդ՝ Դատիրաս  
հազարապետ [վեզիր] արքայի:

**495, 16.** Եւ իբրև հասին նորա ի քաղաքն Կեսարիա,  
առին զանդրանիկ որդին նորա: Այս, Վրթանէս,  
էր ի քաղաքի, իսկ սուրբն Արիստակէս կեայր ի  
լերինս մեկուսացեալ ի խցի: Ետուն նորա զԹուղթ  
արքայի [141] ցսուրբ արքեպիսկոպոսն Ղևոնդ,  
և նա յղեաց ընդ նոսա սուրհանդակս ի խնդրել  
զսուրբն. Եւ իբրև գտին զՎրթանէս, եղբարքն  
[ի Քրիստոս] հարցին վասն եղբօր նորին Արիս-  
տակեայ. և նա ասէ ցնոսա ճնա աւանիկ կրօ-  
նաւոր է ի լերինս մեկուսացեալ: Իբրև հասին  
ի տեղին, նա ոչ կամէր իջանել առ նոսա: Յղեալքն  
ի պատրիարքէ բազում ինչ խօսեցան ընդ նմա  
սիրով, աղաչելով իջանել, և ասէին. «Լաւ ևս է  
քեզ իջանել առ ի քարոզել զբանն Աստուծոյ,  
քոն նստել մենացեալ յայսմ անապատի»: Յայն-  
ժամ էջ նա առ նոսա. իսկ նորա յուզարկեցին  
զնա յաշխարհն իւր, և իբրև հասին, յանդիման  
կացուցին արքայի զերկօսին, այսինքն, զորդիս  
սրբոյն Գրիգորի Արքայ էառ զնոսա և ընդ

**496, 10.** նոսա ել ի լեառն կոչեցեալ Մանուա առ  
սուրբն Գրիգոր, որ կեայր յայրին: Եւ աղաչեաց  
արքայն Տրդատ զսուրբն Գրիգոր և ասէ ցնա.  
«Կու ոչ գաս ընդիս ուսուցանել զմարդիկ, զի  
սիրեցեր զմիայնակեցութիւն. ուստի դիր զձեռս  
ի վերայ գլխոյ Արիստակեայ, զի լիցի նա մեզ  
փոխանակ [замѣстителъ — տեղակալ] քո»: Յօժարե-  
ցաւ այսմ. ասաց ի վերայ նորա զաղօթս ձեռ-  
նադրութեան յեպիսկոպոսութիւն և ետ զնա  
նոցա ի տեղի իւր, որպէս գրեալ է. «Ի տեղի



հօր քո կացցեն որդիք քո քառաւ թիւն նորա առաւել ևս բեղուն եղև քան զքարոզութիւն հօր իւրոյ: Սուրբն Գրիգոր, յորժամ որդի նորա նստաւ յաթոռ նորա ի Մեծն Հայս, մինչ կենդանի էր՝ յայց ելանէր նմա, և երանելին շրջէր ընդ աշխարհս առ ի այցելու լինել այնոցիկ, որոց քարոզեալ էր, վասն հաստատելոյ զնոսա ի հաւատս իւրեանց ի միասին ընդ առն Աստուծոյ թագաւորին Տրդատայ, զի պինդ լինիցին ի հաւատս իւրեանց ի Քրիստոս:

Եւ իբրև բնակիչք մեծին Հռովմայ և թաղաւոր նոցա Կոստանտին լուան զայս և զգիպեալս արքային Տրդատայ, զամենայն սքանչելիս, զորս արարեալ էր սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգոր, յայնժամ փութանակի առաքեցին առ նա քահանայս, զի եկեցցին առ նա արքեպիսկոպոսն սուրբ Գրիգոր և ընդ նմա թագաւորն Հայաստանի Տրդատ: Արար զայն՝ զի լինիցի ի միջի նոցա խաղաղութիւն, զի գիտացէ զճշմարտութիւն վասն իրիս, և զի վճարեսցէ նա նմա (Տրդատ) հարկս: Եւ գրեաց նմա այսպէս.

հմ. 501, 25.  
503, 23.

«Յինքնակալ Օգոստոս կայսերէ, ի քաջայաղթն հաւատով ի Կոստանտնէ, Տրդատայ, արքայի Մեծին Հայաստանի»:

«Ողջոյն ընդ քեզ: Եհաս ի գիտութիւն մեր, զնրպիսի բարիս ցուցեր բարեկամաց մերոց, եղբարց և ազգի, և մեր յոյժ ուրախ եղաք ընդ այս և ընդ պարգևսն, որովք պարգևատրեցան նորա: Հեղութեամբ և խնդութեամբ ի մտի ունիցիմ զայն՝ յամենայն ժամանակս: Եւ լուայ, եթէ օրհնաբանեալ կուսանքն փախուցեալք ի մերմէ քաղաքէս ի Դիօկղետիանոսէ, ամբարիշտ [ի հաւատս] թագաւորէ, եկին առ քեզ և դու սպաներ զնոսա:

\* Սաղմ. խղ. 17:

և յայնժամ ի մուրուսութեան էիր և տանջեցեր  
գսուրբն Գրիգոր: Յետ այնորիկ այլակերպեցաւ և  
փոխեցաւ մարդկային բնութիւն քո ի բնութիւն  
խողի և արժանի եղեր այնմ, վասն այնորիկ, զոր  
հրամայեցեր [առնել] ընդ Գրիգոր, և վասն կո-  
րստեան նորա: Նովաւ ծանեար զդարձն ի կը-  
ռապաշտութենէ քումմէ և յերկրպագութենէ  
սնոտի կռոց, նովաւ փրկեցար և զհետ եղեր  
ճշմարտին Աստուծոյ: Եւ սուրբ նահատակն համ-  
բերութեամբ արժանի եղև այնմ, զի առաքեցեր  
զնա ի Կեսարիա առ երանելին Ղևոնդիոս, որ  
ժանոյց մեզ թղթով իւրով [143] վասն ամենայն  
գործոց քոց: Եւ մեք երկիւղիւ բերկրեցաք ընդ  
այն, զի և մեք՝ յառաջ նման քեզ էաք, և դի-  
պեցաւ մեզ փորձութիւն, այսինքն բորստու-  
թիւն, որ եղև ընդ իս, և յայնժամ ընկալաք  
գրժշկութիւն սուրբ մկրտութեամբ ի սուրբ եպիս-  
կոպոսէն Սեղբեստրոսէ, քանզի նա նորագեաց  
զիս մկրտութեամբ: Եւ առաքեցի զօրհնաբանեալ  
մայր իմ, զգշխոյն քրիստոսասէր, ի սուրբ  
քաղաքն Աստուծոյ, առ ի խնդրել զփայտ վառա-  
ւոր և պատուական խաչին: Յետ այնորիկ կամ եղև  
ինձ տեսանել զձեզ, խնդութեամբ համբուրել  
զձեզ, զքեզ և գսուրբն Գրիգոր, և ցանկամ,  
նով եղբայր, զի կատարեսցես զայս վաղվաղակի:  
Զի և իղձք մեր կատարեսցին գործով ըստ սիրոյ  
քումմօ: Եւ լիցին ընդ քեզ հաղարբ յաւագաց,  
ի պատրկաց և յիշխանաց քոց և յամենեցունց,  
զորս կամիցի քոյդ հեղութիւն: Փութացն զգալդ  
քո առ մեզ: Արդէն առաքեցի յամենայն կող-  
մանս, որք առ քոյով ճանապարհաւ, զի ընուցուն  
զամենայն պէտս և զկարիս քո: Խաղաղութիւն  
ընդ քեզ, նով սիրեցեալ եղբայրս:

[Տրդատ] ընկալաւ զթուղթ թագաւորին



մեծաւ խնդութեամբ և պատուով նոյնպէս և ըզհրեշտակս նորա՛նել նոյն ժամայն հրամայեաց պատրաստել՝ զորս ընդ իւր՝ առնուլ պէտք էին, և յաշխարհին, փոխանակ իւր, եթող զսպարապետն ի սահպանել զամենայն զտէրութիւն Հայաստանի՛ն և արքայն Տրդատ փութացաւ հանդերձ հրեշտակօք Կոստանտնի ի գաւառն Դարանաղեաց առ սուրբն Գրիգոր: Կոչեաց զնա յայրէն և եցոյց նմա զթուղթ թագաւորին Կոստանտնի և զբազմութիւն մարդկան: Սակայն սուրբն ոչ հաւանէր արտաքս ելանել յայրէ իւրմէ: Սկսան աղաչել զնա առաքեալքն ի թագաւորէն [Կոստանտնէ] եկեալքն ի Հռովմայ, ի միասին ընդ թագաւորին Տրդատայ և նա յանձնէառ ելանել առ նոսա և առ Տրդատ թագաւոր: Յայնժամ յարդարեցին զարքայական դրօշակս, պատրաստեցան իշխանք և աւագք: հնչեցին փողս և հարին թմբուկս: Ժողովեցան զօրք գնալ ընդ արքայի: Թիւ նոցա էր տասն հազար հեծեալ: Եւ հմ. 502, 24. քարոք ոչ վարկաւ առաւել քան զայն առնուլ ընդ իւր, քանզի գնայր առ թագաւոր մեծ քան զինքն, խողաղով թեամբ, առ ի կալ ընդ նորա իշխանութեամբ: Եւ չէր անկ նմա, հայեցեալ ի վայելչու թիւն թագաւորութեան իւրոյ, ելանել զօրու փոքու Յուզի անկան զօրքն: յիւրաքանչիւր գաւառի, որ առ ճանապարհաւն, մարդիկ ընդ առաջ ելանէին առ ի ընուլ զամենայն պէտս նոցա: Եւ իբրև հասին ի քաղաքն Կեսարիա՝ լցան խնդութեամբ և բերկրութեամբ, որպէս եթէ՛ հասեալ իցեն ի բնակավայրս իւրեանց: Երկիր պագին սրբոյն Ղևոնդեայ, և յայտնեցին զպատճառս ուղևորութեան իւրեանց, որ արգէն չէր ի թագուն ինմանէ, Կային ի Կեսարիա աուրս երիս ըստ բուռն թախանձանաց նորա (Ղևոնդեայ): Յետ այնորիկ յուղի անկան առ կայսրն Կոստանտնի՛ն՝ թագաւոր ի Հռովմ, Եւ իբրև հասին ի կողմանս Խտալիոյ, ընդ առաջ ելին նմա պատ-

րիկք Հռովմայ և իշխանք և խնդութեամբ մեծաւ մուծին ի մեծ քաղաքն Հռովմա: Թագաւորն Կոստանտին ընդ առաջ ել նոցա արտաքս քան զքաղաքն, համբուրեաց և ողջունեաց զսուրբն Գրիգոր և զթագաւորն Տրդատ և հրամայեաց նստել յարքունի կառս իւր: Զառաջինն՝ զնացին նոքա յեկեղեցի տեառն Պետրոսի առ ի աղօթել անդ: Գլուխ Հռովմայ էր պատրիարքն Եւսեբիոս անուն: Յետ այնորիկ չոգան [145] յապարանս և ի խրախճանս թիւնս եղեն զայն օրս Ե՛ւ Գրիգոր և՛ արքայն Տրդատ մատուցին ընծայս եղեալս ընդ ինքեանս, բազում երիվարս, մարգարիտս, քարինս պատուականս և զայլս և յոյժ ազնիւ մետաքսս ոչ միայն արքայի, այլ և պատրկաց, իշխանաց և ամենայն աւագաց, իւրաքանչիւրում ըստ իւրում աստիճանի: Յետ այսորիկ թագաւորն Կոստանտին աղաչեաց զթագաւորն Տրդատ, զի պատմեսցէ զամենայն, որ ինչ անցք անցին ընդ նմա:

**Քմ. 504, 1.** Եւ սկսաւ թագաւորն Տրդատ պատմել զայնմանէ ի հռովմայեցոց լեզու. սկսաւ ի պատրկէ Լիկինիա անուն, որ զաստիարակեալն էր զնա ի Հռովմ. և զիարդ թագաւորն էառ զնա ի Հռովմայ, ել ի պատերազմ ընդդէմ պարսից և յաղթեաց արքային պարսից՝ օգնութեամբ նորա. ի Հռովմայ իսկ չոքաւ (որպէս) թագաւոր ի վերայ Հայաստանի և մատուցանէր զոհս սուտ աստուծոց, և զիարդ Գրիգոր ոչ կամեցաւ ընկերել նմա ի գարշելի զոհաբերութեան, զի անրդ վասն այսորիկ կրեաց զդառն տանջանս վասն քրիստոնէութեան. «որպէս ես» [Երկայնեաց զբանն Տրդատ] հրամայեցի մատնել զնա դժնդակ մահու ի վիրապի, յոր զմահապարտս արկանէին, որք չև ևս հասեալ ցոյստակ, թարշամէին ի շնչոյ օձից եղևոց ի նմա (ի վիրապի) և ոչ մնային կենս

դանի և ոչ ժամ մի Այս Գրիգոր, զոր տեսանես  
եկաց ի նմին վիրապի զամս հնգետասան. և  
Քրիստոս պահպանեաց զնա անդ, զի փրկի-  
ցուք նովաւ: Եւ կանայք ևս, Հռիփսիմէ և  
Գայիանէ անուն, խուժք մի կուսանաց կրօնաւո-  
րաց եղելոց ընդ նոսա, փախեան ի Դիոկղետիա-  
նոսէ կայսերէ Հուովմայ և եկին յերկիրն Հայոց  
առանց իմոյ գիտութեան: Կայսրն Դիոկղետիանոս  
առաքեաց ծանուցանել ինձ վասն գործոց նոցա:  
Յայնժամ կալաք զնոսա, բայց ոչ կարացաք  
դարձուցանել զնոսա ի կրօնից նոցա և սպանաք  
զնոսա: Յետ այսորիկ նոքա պատուհասեցին զմեզ  
դիւօք: Իսկ որ ինչ վասն իմ, — ելի ի մարդկեղէն  
բնութենէ, մտի ի պատկեր վայրի խողի, սկսայ  
ճարակել ի մէջ եղեգանց և փախեայ ի թագա-  
ւորութենէ իմմէ, իսկ գործակիցք իմ պատառէին  
զհանդերձս իւրեանց և ուտէին զմիս իւրեանց:  
Եւ Տէր Աստուած ճշմարտութեան, յորժամ  
ծանեաք զնա, ոչ մատնեաց զմեզ ի կորուստ, այլ  
փրկեաց զգործս ձեռաց Իւրոց: Յերազի երևե-  
ցաւ քեռ իմում լուսափայլ հրեշտակ և ասէ ցնա.  
«Ո՛չ լիցի ձեզ անգործութիւն, ոչ արքայի, և ոչ  
ամենայն գործակցաց, եթէ ոչ հանիցէք զԳրի-  
գոր ի վիրապէս: Բայց իշխանք ոչ ընկալան զբանս  
նորա: Եւ այս տեսիլ երևեցաւ ոչ գամ մի: Յետ  
այսորիկ գնացին, հանին զնա ի վիրապէ և գնա-  
ցին ընդ նմա յերկիրն: Յայնժամ ի պատճառս  
ազօթից պահոց և հեծութեան նորա Տէր Երրոր-  
դութիւնն գթացաւ ի վերայ մեր և դարձոյց  
ի մոլորութենէ ի գիտութիւն Աստուծոյ: Եւ մեք  
կործանեցաք զբազինս կռոց: Բազում սքանչելիք  
երևեցան մեզ յայնմ ժամանակի ի ձեռն Գրի-  
գորի: Մինչ կործանէաք զտաճարս, երևեցան մեզ  
գեւք և մարտնչէին ընդ մեզ: Եւ սուրբս այս  
յաղթէր տկարութեան նոցա նշանաւ խաչին

իւրոյ: Եւ զնա, որ դարձոյց զմեզ ի գիտութիւն Աստուծոյ աղաչեցաք լինել մեզ հովիւ, բայց նա ոչ կամէր: Յայնժամ հրեշտակ երևեցաւ ինձ որ անարժանս եմ, և ասաց. «Մի հրաժարիր ի ցանկութենէդ, զոր եղեալ հս ի մտի»: Ըստ այսմ երևեցաւ և նմա և ասէ. [147] «Մի կար հակառակ Տրդատայ: Եւ յայնժամ եղև այնպէս, որպէս կամեցաք: Եւ առաւել ևս քան զայս պատմեաց: Մեծ թագաւորն Կոստանտին յոյժ զարմացաւ հանդերձ աւագանեաւն իւրով:»

Քմ. 505, 7. Եւ իսկ և իսկ մեծ թագաւորն Կոստանտին ևս սկսաւ պատմել զայն, որ ընդ նմա դիպեալ էր: Յայտնեաց նմա զտեսիլն երևեալ նմա յերկինս, որով յաղթեաց թշնամւոյն:

Քմ. 505, 22. Եւ ընկալաւ ինդութեամբ զսուրբն Գրիգոր և զՏրդատ. և կային նոքա առ նմա աւուրս ինչ: Ետ նա նմա ընծայս պատուականս և բազում յոյժ անօթս ոսկւոյ վասն եկեղեցւոյ: Ետ արքային Տրդատայ զգետտս արքայականս, ոսկեհուռն ծիրանիս: Եւ յանձնեաց իշխանաց նորա անօթս արծաթեայս և կերպասս: Պարտաւորեաց զնոսա հարկս հարկանել, և յակամայս, սակս սիրոյն, որ առ նոսա, արձակեաց զնոսա: Եւ առաքեաց արս յաշխարհս, զի ընուցուն զպէտս նոցա, որպէս յառաջն: Եւ իբրև անցին ընդ ծովն մեծ, անցեալ յաշխարհն Պոնտացւոց, մտին ի սահմանս Հայաստանի: Կատարեցին տօնս յամենայն եկեղեցիս, և հրամայեաց յիշատակել յամենայն ի տէրութեան իւրում զթագաւորն Կոստանտին և զձնող նորա զքրիստոսասէրն Հեղինէ: Եւ ըստ այսմ, յիշատակի նա ի ժամ խորհրդոյ հաղորդութեան (պատարագ): Եւ յիւրաքանչիւրում աշխարհի, ընդ որ անցանէր [Գրիգոր] լինէր տօն ի պատիւ նորա: Եւ իբրև հասին ի քաղաքն Վա-

ղարսապատ, բաշխեցին յեկեղեցիս զընծայս  
բերեալս ընդ հնքեանս ի Հռովմայ:

Եւ թագաւորն Տրդատ ոչ դադարէր ուսանել հմ. 509, 13.  
զսուրբ Գիրս ընդ նմին և զվարդապետութիւն 497, 10.  
սրբոյն Գրիգորի: Եւ աղօթէր զի գնալ կարասցէ  
ընդ ճանապարհն ճշմարտութեան: Եւ յղեաց  
արս հինգ յընդարձակ գաւառս և երկս՝ ի փոքր  
գաւառս, զի առ պետսն (գաւառաց կացեալ)  
հսկիցեն ի վերայ պիտոյլից եկեղեցեաց և կարգման  
ի նոսա անհրաժեշտ պաշտօնէից: Եւ սուրբն  
Գրիգոր իբրև գիտաց, եթէ արքայն Տրդատ  
հոգայ զիրաց եկեղեցեաց, եղելոց ի Մեծն Հայաս-  
տան, աներկմիտս եղև, եթէ հաստատեալ են  
ի քրիստոնէական հաւատս, մեկուսացաւ յայրն  
իւր և նստաւ անդ խաղաղութեամբ:

Ընդ այն ժամանակս ելին թուղթք թագա- 507, 1.  
ւորին Կոստանտնի կայսեր առ ամենայն եպիս-  
կոպոսունս ժողովիլ ի քաղաքն Նիկիա: Սուրբն  
Գրիգոր հանդերձ թագաւորաւն Տրդատաւ առա-  
քեցին եպիսկոպոսունս և ընդ նոսա՝ զերանելին  
Արիստակէս, զորդին Գրիգորի և գնացին նոքա  
ի քաղաքն Նիկիա, ուր եղև ժողով մեծ ամենայն  
եպիսկոպոսաց: Անդ սահմանեցին զհաւատս և  
գրեցին կանոնս կաթողիկէ եկեղեցւոյ զօրու-  
թեամբ Աստուծոյ սրբոյ, բարձրութիւն Որոյ ան-  
քննին է: Անդ գտաւ նոյնպէս և թագաւորն Կոս-  
տանտին, եղև խոստովանող հաւատոց, ընկալաւ  
զբարեբանեալն զպսակ ի սուրբ ժողովոյն, եթող  
զյիշատակ բարի՝ յերկրի, իսկ զերկնից արքա-  
յութիւն ընկալան մարդիկ:

Երանելին Արիստակէս դարձաւ յետս հան- հմ. 507, 17.  
դերձ գերազանց կանոնիւք եկեղեցւոյ և ուղիղ  
հաւատովք, զորս ընկալաւ ի մեծէ ժողովոյն: Եւ  
իբրև եհաս ի Հայաստան, տարաւ զնոսա առ



Թագաւորն և առ սուրբ արքեպիսկոպոսն Գրիգոր: Ծանոյց զայնս նոցա, իսկ նորա պայծառացոցին և լուսաւորեցին ուղղութեամբ կանոնաց զեկեղեցի Աստուծոյ: Սուրբն [148] Գրիգոր պայծառացոյց լուսով նոցա (կանոնաց) զբոլոր Հայաստան: Նա և Թագաւորն պարապեալ էին ի մի գործ: Զամենայն աւուրս կենաց իւրոց փայլեցաւ նա պահօք և աղօթիւք և աղօթէր, զի զկնի իւր մնասցէ յիշատակ արդարութեան: Յառաջնմէ օրէ կենաց իւրոց ցվերջինն պահէր նա պահս քառասնական աւուրս, մինչև Քրիստոս ընկալաւ զնա [սգի] յայսմ՝ աշխարհէ. և նա հանգեաւ:

511, 8. Գրեցի ես զայս ստուգիւ—է զի ես ինքն վկայ և ականատես եղէ, և է զի լուայ ի հաւատարիմ արանց: Զի և դուք ընկալիք զմասն բարեաց նորին և կեցիք ըստ փառաւորեալ գործոց նորա, առ ի ժառանգել զաշխարհն ուրախարար վասն այնց, որք կեցին ըստ կամաց Քրիստոսի: Եւ նմա, և Հօր նորա, և Հոգւոյն սրբոյ փառք յաւիտեանս. Ամէն:



### Մ Կ Ր Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Հայոց, վրաց, արխազաց եւ ալանաց ի սրբոյն Գրիգորէ.

(Արարական վերսիա).

Ռուս հրատարակչի—ն. Մառի—յառաջաբանը.

1902 թուին դէպ ի Սինա ճանապարհորդութեանս ժամանակ ուսումնասիրեցի № 460 արաբերէն ձեռագիրը: Լուսանկարեցի ինձ հետաքրքրող նրա մի մասը: Գրա համեմատ այժմ առաջին անգամ հրատարակող, դժբաղդաբար սկզբից թերատ, «Ս. Գրիգորի, Ս. Վայիանէի, Ս. Հռիփսիմէի եւ նրա ընկերներին նա հատակութեան» արաբական ընագիրը նոր լոյս է սփռում, մինչև այժմ միայն հայոց լուսաւորիչ համարումած, Գրիգոր Լուսաւորչի քարոզչական գործունէութեան վերայ:

Պատմուածքի առանձին մանրամասնութիւնները կամ ընդհանուր բովանդակութիւնը այնքան էլ ինքնուրոյն չեն, թէև տեղտեղ ունին անկախ արտայայտութիւն: Ի միջի այլոց կարող են հետաքրքրութիւն շարժել Մովսէս Խորենացու պատմութեան ուսումնասիրութեան համար կարևորութիւն ունեցող մանրամասնութիւնները:

Ես արդէն մասնանշել էի (Предварительный отчет о работах на Синаѣ, стр. 24), թէ Կոստանտինի մասին գլխում II, 83) Մովսէս Խորենացու դիմումն Ագաթանգեղոսին՝ արդարանում է մեր արաբական ընագրով: Սեղբեստրոս պապի ձեռքով Կոստանտինի քրիստոնեայ դառնալու մասին աւանդական պատմուածքը առաջ բերելով՝ Խորենացին աւելացնում է. «Որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»: Ագաթանգեղոսի այժմեան հայ ընագրում (եր. 499) կայ միայն յիշատակութիւն թէ Կոստանտինը ինչպէս ջնջեց իւր թշնամիներին, իսկ նրա դարձի մասին Սեղբեստրոս պապի ձեռքով մի բառ անգամ չկայ: Եւ այս բաւական էր, բացասական քննադատութեան ներկայացուցիչների, ամենից տաւ՝ Ֆրանսիական հայագէտ հանգուցեալ A. Carrière-ի համար (Nouvelles sources de Moïse de Khoren, Հանդէս ամսօրեայ, 1893, եր. 183), որ Խորենացու դիմումի մէջ տեսնէր «օգտուած աղբիւրների յայտնի թաղուցումն» (une dissimulation flagrante des sources utilisées): Մեզ հասած հայ Ագաթանգեղոսի անաղարտ լինելու

մասին (О начальной истории Армении Анонима, Виз. врем., 1885 I, եր. 264), իմ դիտողութիւնը, թէ անհրաժեշտ է քննաբար վերաբերուել, ըստ էութեան բոլորովին անտարբերութեան հանդիպեց: Եւ սակայն այժմ յայտնուում է, որ ի զսուրօ որովհետև արաբական ընագրում, յիրաւի, «համառօտ պատմուում է Կոստանտինի դարձը Սեղբեստրոսի ձեռքով. (ռուս հրատ. եր. 143, 1—5. 147, 4—6. հայ թարգ. եր. 76. 17—19., 80) և, ակնեւրև, Խորենացու ձեռքի Ագաթանգեղոսում այդ ասացուածը կար: Արաբական վերսիայի (Ռուս. հրատ. 143, 5—7, 147, 15—16, Հայ թարգ. եր. 76 և 80.) հազարդար թէ Կոստանտինը իւր մայր Հեղինէին ուղարկեց Երուսաղէմ սուրբ Խաչի համար, որի մասին ի դէպ, գրում է Մովսէս Խորենացին էլ (II, 87), չկայ Ագաթանգեղոսի հայ ընագրում: Խորենացու պատմութեան մէջ յիշուած հայոց աստուածների մասին Կարիերի, որպէս անյեղի վճիռ արձակած տեսութիւնները (Les huit sacntuaires de l'Arménie payenne d'après Agathange et Moïse de Khoren, Paris 1899) նորից վերաքննութեան պէտք է ենթարկել: «ստուածների յունական անունները, որոնց Կարիէրը հակամէտ է յետնագոյն. գուցէ և Խորենացու նորամածութիւն համարել, թերևս, ինչպէս այժմ պարզուում է, առաջ էին քան հայկական անունները, որոնք երևան են եկել «Հայոց դարձի պատմութեան մէջ» ազգայնական տարրի զօրանալովը:

Արաբական ընագրում միայն յունական անունները են: Այդ յունական անունները պահպանուել են հայ Ագաթանգեղոսի և Փաւստոսի մէջ որպէս հատ հատ մնացորդներ (Carrière յիշեալ յօդուած. եր. 25):

Արաբական վերսիան գերազանցում է գլխաւորապէս նիւթի գաղափարական արտայայտութեամբ: Այստեղ տեսնում ենք անկախութիւն աւանդական ընագրից՝ որը պահպանուել է հայ իսկականում և զանազան թարգմանութիւնների մէջ, որոնք անմիջապէս կամ միջնորդաբար առնչութիւն ունեն հայկականի հետ, և դրանք են յունարէնը, վրացերէնը, եթովպերէնը և արաբականի համառօտը: Արաբերէն մի ուրիշ վերսիա (փոփոխակ) էլ է հասել մեզ. այսպէս, Սինայում ես ընդօրինակեցի «Ս. Գրիգորի նահատակութեան» մի նոյնպիսի արաբական ռինակասարեան ընագիր: Բայց այս ներկայ աշխատութիւնը նուիրուած է բացառաբար արաբական ընդարձակ օրինակին, որը խնդրի մէջ ներմուծում է բաւական նոր և հետաքրքիր նիւթ: Այդ գուցէ, չափազանց խաբուսիկ լուսով է նոր և հետաքրքիր երևում ինձ, որովհետև նա աւելի է զուգադիպում իմ տեսութեանը Վրաստանի և Հայաստանի պատմական կուլտուրական երևոյթները

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

Թագման ցեղակից լինելու մասին՝ քան ես անգամ կարող էի կարծել: Մանաւանդ դժուար էր սպասել այդպիսի մի նեցուկ մեզ հասած յիշատակարաններից, որովհետեւ դրանք մեր համար հետաքրքիր երևոյթները առաջ են բերում այս կամ այն յետնագոյն ազգայնական կամ ազգային եկեղեցական հայ, վրացական և յունական տեսակէտով: Սակայն ես չեմ շտապում յիշատակարանը իմ տեսութեան օգտին ծառայացնել ամբողջովին: Ձեմ շտապում, որովհետեւ, դեռ ևս չեն գծուած այն պատմական գրական շրջանակները, որոնց մէջ հրատարակածս վերսիան հեշտութեամբ կարող լինէր գտնել պատշաճ տեղ: Գրա համար դեռ բաւականաչափ չեն ուսումնասիրուած ոչ հայոց և ոչ վրաց ձեռագրերը: Այդ գրչութիւնները (հայ, վրացի) իսկական պատմական հոսանքը հազիւ միայն ուսում է թոյլ կերպով նշմարուել: Միւս կողմից, ես իրաւունք չհամարեցի ուշացնել յիշատակարանի հրատարակութիւնը. նա հետաքրքիր է շատերի համար, որոնց գործակցութիւնը արաբական վերսիան ուսումնասիրելու ժամանակ կարող է օժանդակել պարզելու և բնագրի զանազան կտորները, գուցէ և առանձին հորիզոն բանալու և դրանով գնահատելի նիւթ տալ լիովին և հաստատուն կերպով լուսաւորելու յիշատակարանը, որ կապ ունի իմ տեսութեան հետ (теория) հայերի և վրացիների, այս դէպքում, եկեղեցական կեանքի ծագման ցեղակցութեան վերաբերութեամբ: Վերջապէս, թէ այս տեսութեան համար ն ա հ ա տ ա կ ու թ ե ա ն արաբական վերսիան ունի որ և է նշանակութիւն, այդ այժմ էլ պարզ է: Խնդիրը միայն այն է, թէ յատկապէս ո՞րպիսի նշանակութիւն: Հայ վրացական եկեղեցական կեանքի ո՞ր էջն է լուսաբանում. Հայերի և վրացիների եկեղեցական հաղորդակցութեան ո՞ր շրջանի հայեացներն է ցոլացնում:

Այս իմ յառաջաբանը, կարծում եմ, բաւական է կանխելու, թէ բնագրի վերջում դրած ընդհանուր գծերով կարծիքը ունի առ այժմ միայն ենթագրական նշանակութիւն:

Բնագրից յետոյ դրուած են Սինայեան ձեռագրի նկարագրութիւնը և բնագրի քննութեան, նոյնպէս և արաբական իսկականի և ռուսական թարգմանութեան հրատարակութեան մասին նկատողութիւնները:

Մեծայարգ Բարոն Վ. Բ. Բօզենին մատուցանում եմ անկեղծ շնորհակալութիւն տպագրական լրացուցիչ սրբագրութեան և մի կարգ ուղղումների համար, որոնք հնարաւորութիւն տուին աշխատութեանս աւելի կատարելալ ձևով երևալ:

## ՎԵՐՁԱԲԱՆ

### ՌՌԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՉԻ—Ն. ՄԱՌԻ

Հայաստանի նոյնպէս և Վրաստանի քրիստոնեայ դառնալու մասին կան մի քանի աւանդութիւններ: Մեզ հասած այդ տեսակէ տեղական ընդարձակ աւանդութիւնների լամբագրութիւնները այն ժամանակի գործ են, երբ հայ և վրացի ցեղերը՝ Վրաստան և Հայաստան ազգային—քաղաքական համապատասխան միութիւնների մէջ էին ձուլուում կամ ձուլուելու ճանապարհի վերայ էին: Հէնց այս շրջանում (էպօխա) դարձերի մասին տեղական աւանդութիւնները, այս կամ այն երկրում—գաղափարապէս միացած բոլոր Հայաստանի կամ գաղափարապէս միացած բոլոր Վրաստանի—մկրտութեան պատմութեան մէջ էին մշակուում:

Որովհետև այս աւանդութիւնները, նայելով երկրին և ցեղին, կարող էին լինել այլ և այլ, և իսկապէս էին էլ, ապաքէն բնականաբար, բոլոր վրացիների կամ բոլոր հայերի մկրտութեան պատմութեան առաջին փորձերը լինելով մասնաւոր պատմական դէպքերի մասին տեղական զրոյցների գրական ամփոփումն, կարող էին լինել զանազանակերպ: Եթէ Հայաստանում Ս. Գրիգորի, իսկ Վրաստանում Ս. Նունէի անձնաւորութիւնները նսեմացրել են ուրիշ լուսաւորիչների փառքը, գրանով դեռ պէտք չէ շտապենք եզրակացնել, թէ նրանց քարոզչութիւնը համապատասխան իրական պատմական ընդարձակ նշանակութիւն ունէր: Նրանց հռչակի պատճառները նշանաւոր չափով կարող են գրական բնաւորութիւն ունենալ: Այդ հռչակը կարող է լինել, որպէս կարծում եմ, իսկապէս գրական որ և է զօրեղ հոսանքի ծնունդ: Եւ պէտք է կարծել, որ այդպիսի հոսանքը ըստ ինչ ինչ յարակից հանգամանաց, և այն ոչ առանց պատմական հիմքի, սիրաշահել է տեղական յայտնի աւանդութիւնը և նրան տուել է այնպիսի հանրային հեղինակաւոր կերպարանք, որ ապագայ բոլոր սերունդները պարտաւորուել են ընդունել: Աւանդութիւնը, որ գրական ճանապարհով ստացել էր ընդարձակ հռչակ և համահայկական կամ համավրացական նշանակութիւն, այս ժամանակից սկսած, փաստորէն տիրապետող ոյժ է դարձել հայ կամ վրաց եկեղեցու սկզբնաւորութիւնը բացատրելու համար, որպէս պատրաստի նիւթ, լծոր-

դուելով իւրաքանչիւր տեղական—եկեղեցական գրական ուղղութեանը, նրա շահերին համեմատ:

Վրաստանումն էլ Հայաստանումն էլ հնագոյն յիշատակարաններն անգամ հասել են մեզ անցնելով ազգային եռացման բովից: Ազգային հոսանքը իւր ժամանակին, իւր սգու ուղղութեան համեմատ կարողացել է այնքան փոփոխել բոլոր նախընթաց սերունդների գրական ժառանգութիւնները, որ հին հայկական վրացական գրչութեան ոչ մի շրջան, այժմ շատ գիտնականների, չի երևում ազգային ուղղութիւնից զերծ: Ազգային այսպիսի պատմական հայեցակէտ սիւտեմատիքաբար առաջ է տարուել յատկապէս հայերի մէջ, որոնք ինչպէս եկեղեցին, նոյնպէս և հին գրականութիւնը, բացառապէս հոգևորը, հէնց սկզբից համարում են ազգային: Ինչ ասել կողի, որ այս հայեացքը a-priori չի դիմանում քիչ շատ խլտտապահանջ քննութեան: Էին հայ գրչութիւնը, մինչև մեզ ծանօթ ազգային հոսանքի մշակումն, անցել է զարգացման մի քանի ժամանակաշրջան:

Ըստ այսմ և Գրիգոր լուսաւորչի քարոզչական գործունէութեան պատմութիւնը, գատելով ամեն կողմից, առաջուց անցել է զարգացման մի քանի շրջան մինչև այն ձևն ընդունելը, որ հայերէնում յայտնի է Ագաթանգեղոս անունով: Այդ ձևը կարելի է անուանել ազգային խմբագրութիւն. ուրեմն, հին հայ գրականութեան հին շրջանի աւելի յետնագոյն ուղղութեան արտագրութիւն: Գատելով այն քաղաքները, որ մէջ է բերում Մովսէս Խորենացին, որի ճշմարիտ լինելը գոնէ այս դէպքում անպայման հաստատուում է, երևում է, որ մեր ձեռքում եղած այս յետնագոյն խմբագրութիւնն էլ անողարտ և սկզբնական ձևով չէ: Նրա ոճն էլ զարմանալի պարզութեամբ ցոյց է տալիս, որ արդի խմբագրութիւնը յետնագոյն ժամանակի գործ է: Այն լի է յունաբանութեամբ, յունական կազապարով (չաբլան) հայկական մի յօրինուածք է. նրա մէջ չկայ և այն հնութեան հետքը, որը նկատուում է նոր դտնուած Մնացորդաց հին բնագրի մէջ, որը սակայն այնքան էլ հին չէ, որովհետև այն էլ է ենթարկուել յունական ազդեցութեան: Ս. Գրքի հին հայկական թարգմանութեան վրան բառը Ագաթանգեղոսում իրոյտուած է յետնագոյն խորան (185, 8, 9, 196, 21, 22). դիւր յունաբանութիւնը որ Յիշդի թարգմանութիւնն է (445, 19, 446, 3). դագաղ գերեզման նշանակութեամբ, գրտնում ենք Երուսաղէմի, մտաւորապէս Ը. դարի, մոզայիք մի տապանագրի մէջ: Յղարկեմ (468, 2, 3) այնքան նոր է, որ այն գուցէ և յետնագոյն սրբագրութիւն լինի, իսկ ձգել

արձակել, նետել նշանակութեամբ (89, 22 ձգել նետ) յիշատակարանի ժամանակի համար բնորոշ աղճատաբանութիւն է: Բայց Ագաթանգեղոսի պատմութեան ոճի մէջ դեռ աւելի բնորոշ է գոյութիւնը այնպիսի հազուադէպ, և երբեմն մինչև անգամ հայ լեզուին բոլորովին անյայտ բառերի, որոնք անկասկած վրացերէն են և վրաց լեզուին ու բարբառներին սովորական: Գոճանք (425, 16) հայկական ան — ք կրկնակ յոգնակացուցիչ մասնիկներով, գոճի բառից է, որ վրացերէն նշանակում է խոչգորակ, խոզի ձագ, իսկ լազերէն դոջի նշանակում է ոչ միայն խոչգորակ, այլև խոզ, վարագ, մինչև անգամ վայրի գազան<sup>1)</sup>: Շղւաբարոյ (102, 10) բարգ բառը, որ գտնուում է անմիտ բառի մօտ, կազմուել է շղու վրացերէն (շէ<sup>2</sup>,) յիմար, խելազուրկ նշանակող բառից: Կայտուալ (հմ. կայտու) զեռալ, սողալ նշանակութեամբ (140, 25), «կայտուային զանդամովք իմովք (օձք)», զեռային, սողային զանդամովք իմովք: Կայտիւ շարժումն, կայթ, պար (466, 12) նշանակութեամբ, որ յայտնի է նոյնպէս Փիլոնին էլ, անկասկած, ցեղակից է վրացերէն kot-va-շարժուել, զեռալ, kotr-iali-թաւալել, գլտորուել նշանակող բառի հետ, և ես, այնուամենայնիւ, մեր պատմական գրական հարցում նշանակութիւն չէի տալ նկատուած լեզուագիտական փաստին, եթէ այս բառերը չէին հանդէս եկել յատկապէս հելլենասիրական և հելլենասիրականի համեմատ արտագրութիւնների մէջ, և ամենից առաջ՝ Ագաթանգեղոսի մէջ: Ագաթանգեղոսի խմբագրութեան ծագման ժամանակի և տեղի համար հետաքրքիր է գոճացեալ բարեիոխուած գոնջացեալ (450, 1) բառը, որի (gond-i) արմատը հին վրացերէնում հանդիպում է ոչ միայն տկարացած, թուլացած նշանակութեամբ (Сулх. Орб.) այլ գուրիացիները, աջարացիները և իմերխեցիները ունեն սովորաբար այդ միակ բառը, հիւանդ, թոյլ նշանակութեամբ: Ասկայն աւելի ամփոփուցիչ, և իսկ իրական լուսաբանութեամբ է երևան գալիս Ս. Գրիգորի «լուսաւորիչ» մակդիրը երբ համեմատութեան ենք առնում վրացական նիւթն էլ: Հին հայերէնում լուսաւորիչ բառը գործ էր ածուում, որպէս արեգակի մակդիր (Յոբ. 1Ա. 26), նիւթական փայլ ցոյց տալու համար: Յետոյ,

1, Հետեւաբար «կնճիթ զոճանացն (կոճանացն) յեղեղան բնակչոցն» նշանակում է եղեղնուտների մէջ ասորոզ վարագի կնճիթ. Մեծի մէջ կոճանք բառը հասկացուում է «կոպտացած կոշտացած տեղ»: Այս տեղը Cappelletti ենթադրաբար թարգմանում է «bruto» իսկ (եր. 120.) Langois-ն «des brutes» (եր. 154. 2. 14):

2) ՄԿԵ. վրացերէն շէ է նոյնացնում է հայ չիլ բառին. սակայն դրանք տարրեր բառեր են:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google



յունաստիւրական յիշատակարաններում լուսաւորիչ հասկանում էին մտաւոր լուսաւորիչ նշանակութեամբ. դրա համար վերագրւում էր այն Սահակ Պարթևին էլ, որի ժամանակ, ըստ աւանդութեան եղաւ Հայ տառերի գիւտն ու Ս. Գրքի թարգմանութիւնը (Ղազար Փարպ. թուղթ. եր. 438, հրատ. 1907. Ղուկ. Մատ): Հայերէնում, Ս. Գրիգորին յատկացնելով լուսաւորիչ բառը, պէտք է հասկանալ միայն Հայաստանը հոգևոր լուսով լուսաւորելը, հայերի աստուածգիտութեան լոյսը ընդունելով (de Lagarde, եր. 35, 42), բայց հենց այս մտքով էլ այս բառը ուղղորդական է յատկապէս Ս. Գրիգորի համար: Գեոռոշ շատ հին ժամանակ, Ս. Գրիգորի, լուսաւորիչ մակդիրը թէ՛ սրբան անորոշ էր, թէ՛ լուսաւորիչ բառին սրբան յատուկ էր ամենից առաջ նիւթական լոյսը, կարելի է դատել հետեւաւ փաստով. հայ անուանի աստուածաբան Վարդան վարդապետը, Տէր Համադասպի խնդրով, Ս. Գրիգորը լուսաւորչի մասին գրած իւր ներբողի ճառում մէջ է բերում այս հարցի առիթով Երուսաղէմի զրոյցը, թէ Գրիգորը սուրբ քաղաքում կանթեղ կախելով խնդրեց Աստուծուց, ի փառս իւր յարութեան, ամեն տարի լոյս ծագել. դրա համար էլ, որպէս թէ, Ս. Գրիգորը կոչուեց լուսաւորիչ (Սոփերը հայկ. Ե. եր. 78—79): Այս նոյնը կրկնւում է, ոչ պակաս անուանի, Վանական վարդապետին վերագրուած նամակում (Գիրք թղթոց, եր. 534): Մինչդեռ այդ մակդիրը, անկասկած առնչութիւն ունի Ս. Գրիգորի քարոզչական և հեթանոսներին մղրտելու գործունէութեան հետ: Առաջին հելլենասէրներն էլ երևի, հայերէնում այս նշանակութեամբ էին հասկանում: Հին յունաստիւրական ուղղութեան շատ հետքեր ունեցող մի հայ յիշատակարանում ներսէս կաթողիկոսը մահուան ժամանակ իւր մօտ խմբուած իշխաններին ասում է. «Արդ ես ծնայ զձեղ լուսաւոր աւազանսան (Յաղաբո զարմից, ՍՀ. VI. եր. 93). և հանգուցեալին դիմում է ժողովուրդը որպէս երկրի լուսաւորչի» «նձ լուսաւորիչդ աշխարհի» (յիշ. յօդ. եր. 114): Եւ յերաւի, վրայերէնում, որ յոյն եկեղեցու ձևաբանութեան ազդեցութեան շատ է ենթարկուած, բացի «լուսաւորել» բառից մղրտութիւն հասկանալու համար ուրիշ բառ չկայ, մինչդեռ հայերը այդ նշանակութեամբ պահել են իրանց հին եկեղեցուց՝ մղրտել բառը, որ սեմիտական ծագումն ունի կըրտ արմատից և թլիւտաւել է նշանակում 1):

1) Արիաքիների մօտ պատահում է «լուսաւորիչ» ձևը: Այս եւ նման մի քանի դէպքում նրանք աւելի են հեռացել իրանց սիրիական

Սակայն ձեռքը երկրորդական բաներ են: Ըստ էութեան, յանձին Ագաթանգեղոսի, ինչպէս ցանկացել է կոչել իրան հայ անյայտ գրողը, մենք ռենքը վիպական պատմութեան աւելի յետնագոյն զարգացման մի հեղինակ 2): Խօսքը ի հարկէ, այն մասին չէ, թէ Գրեգոր լուսաւորիչը վիպական (լեզենտական) է: Ընդհակառակն, Գրեգոր լուսաւորիչը, անկասկած, իսկական կենդանի պատմական անձն էր, վիպական է միայն այն ձեռք, որով նա մեզ պատկերանում է, Ս. Գրեգորի ձեռքով՝ Հայոց դարձի, մեզ հասած, պատմութեան մէջ:

Այս պատմութիւնների վիպական լինելու ամենից առաջին պարզ ապացոյցն այն է, որ նրանք ընդհանուր եկեղեցական

եկեղեցու ատանդութիւններից քան Հայերը. Արեւելքի լուսաւորիչ (Sachau, Syr. Handschr. 1899, I. եր. 286, 2) է ի միջի այլոց Մար-Ավգինա (հայերէն Մարուդէ) այսինքն Ս. Եղիշէոսը, որ հիմնադիրն է սիրիական կրօնաւորութեան: Սիրիացիք Աստուածյայտութիւնն էլ լուսոյ տօն են անուանում. աւելի ճիշտ՝ *luminum*: Ի դէպ, Հայերի մօտ էլ Ծննդեան նոյն եւ. Աստուածյայտութեան ու Զատիկի նախատօնակներն էլ նման անուն ունեն. դարձեալ նիւթական լոյս հասկանալով. ճրագալոյց—ճրագների վառումն:

2) Գեո եւս Լանգլուան կարծիք է յայտնել *Collect. des hist. arm.* 1867. I. եր. 103), թէ Տրդատի պատմութիւնը, որ վերադրում է սոյն իշխանի ատենադպրին, է վիպաբանական մի վաստակ, որ լոյս է ընծայել Եզնիկ քահանան միայն է. դարում Ս. Հռիփսիմեանց նշխարների գիւտի առիթով». Իր այս հայեացքի հաստատութիւնը նա տեսնում է Հ. Սուքիաս Պարոնեանի յայտնած տեղեկութիւնների մէջ: Մխիթարեան միաբանութեան (երբեմն) անդամ Հ. Սուքիասը Կայսերական-այժմ Փարիզի Ազգային Մատենադարանի գրչիքը ցուցակագրելիս՝ № 54. ձեռագրում գտաւ, որ մեզ հասած Ագաթանգեղոսի հայ բնագիրը է. դարում թարգմանել է յունական օրինակից Եզնիկ քահանան, որ Ե. դարում ապրող Եզնիկ Կողբացուց բոլորովին տարբեր անձն է: Եզնիկը, հաւանօրէն, իւր թարգմանութիւնը կատարել է Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ Ս. Հռիփսիմէի նշխարների առաջին դիւտի առիթով (Սեբէոս պ. ԻԵ.): Կոմիտաս կաթողիկոսը ի պատիւ այս ս. կուտի եւ նրա ընկերների յօրինել է շարական (իտալական թարգ. Luigi Carrey առ Cappelletti, *Agatangelo* (1845, եր. 209.—222)»: Փարիզի ձեռագրի ընդօրինակութիւնը, որ սիրելաբար հայթայթել է մեզ Ն. Գ. Ազոնցը, թէեւ յիբաւի, մեր հարցի համար էլ հետաքրքիր է, բայց այնտեղ ասուած է, որ Եզնիկ քահանան թարգմանել է հայ կաթողիկոսների եւ թագաւորների ցուցակը, այլ ոչ Ս. Գրիգորի պատմութիւնը:

գրականութեան մէջ յետին ժամանակներում են երևան գալիս: Բիւզանդացիներին սրտին մօտ, նրանց կայսերութեան սահմանակից, քաղաքականապէս այնպիսի կարևոր երկրի դարձը, ինչպէս Հայաստանն է, այն էլ յոյն եկեղեցու քարոզչի ձեռքով, այնպիսի խոշոր երևոյթ էր, որ գործում շահագրգռուած յոյներն լուրջութիւնը այս եղելութեան մասին կարող է բացատրուել քաջառուապէս մի հանգամանքով, այն է, որ նրանց յայտնի չէր ոչ այդ եղելութիւնը և ոչ էլ այդ մասին յունական սրբ է աւանդութիւն կար: Գործին օգնել չի կարող Գրիգորի մասին այն անվաւեր ճառն էլ, որ վերագրուում է Յովհան Ոսկեբերանին: Աւելի հետաքրքիրն այն է, որ այդ ճառը հայերէն թարգմանուել է միայն 1141 թուին Աբրահամ-Քերականի (գրամմատիկոս) ձեռքով: Գրիգորը լուսաւորելը յոյն գրականութեան մէջ հռչակ է ստանում Փօս պատրիարքից սկսած (858-867, 878-886 թ.), որ շատ էր աշխատում հայ եկեղեցին յունականի հետ միացնել: Ս. Գրիգորի ձեռքով Հայաստանի դարձի պատմութեան արդի յունական բնագիրը (Paul de Lagarde. 1887, եր. 4.—87) թարգմանուած է Ագաթանգեղոսի պատմութիւնից, և այս թարգմանութիւնը ամենայն հաւանականութեամբ եղել է Փօսի օրով և ոչ բնաւ առաջ: Ինքն Փօս ծանօթ էր միայն այն խմբագրութեան հետ, ուր Ս. Գրիգորը հանդիսանում էր «նահատակ (խոստովանող), սքանչելագործ և հիւսիսային բոլոր ազգերի լուսաւորիչ (Թուղթ Փօս պատրիարքի աւ Զաքարիա կաթողիկոս, Правосл. Пап. еборн., հատ. XI, հրատ. I. եր. 180, թարգ. 227): Գրիգորը լուսաւորչի պատմութեան յայտնի լինելը յունաց գրականութեան մէջ է. դարից առաջ չէ: Սիրիացիները Գրիգորը լուսաւորչի մասին Ը. դարից առաջ տեղեկութիւն չունէին: Նրա մասին տեղեկութիւն սիրիական գրականութեան մէջ առաջին անգամ մուծողն է արաբների եպիսկոպոս Գէորգը, իւր, 714 թուին յայտնի նամակով առ Յեսու-Սիւնակեաց (Գաշեան, Ագաթանգեղոս առ Գէորգ ալ իւն. 1891, եր. I): Պատմելու եղանակից պարզ երեւում է (Lagardii. Anal. syr., եր. 125, 12, 126, 25-25), որ Գէորգը սիրիական եկեղեցական շրջանում անյայտ մի առարկայի մասին է խօսում: Գէորգը, հաւանօրէն նիւթը քաղում է յունական աղբիւրից, բայց ոչ Ագաթանգեղոսի պատմութիւնից: Աստեմանին, այս արաբ եպիսկոպոսին ուղղափառ, այսինքն քաղկեդոնի է համարում, բայց ապացուցանում են, որ նա Յակովբի էր: Կարևորն այն է, որ նա յունարէն լաւ գիտէր, և անկասկած այս հանգամանքին է պարտական, որ Ս. Գրիգորի մասին տեղեկութիւն ունի: Գրիգորի մասին վրացական նիւթերը բաւական առատ են: Կան վարքագրութեան զանա-

զան վերսկաններ, հետաքրքիր օրհներգներ: Յատկապէս մինչև ժ. դարը նրա յիշատակը ընդհանրապէս բարձր էր յարգւում հին վրաց եկեղեցում: ժ. դարի գրող վրաց Արսէն կաթուղիկոսը մեղադրում է հայերին, որ սիրիացիների համար հեռացել են Ս. Գրիգորի պատուէրից, ընկել են սիրիացոց հերետիկոսական աղանդի մէջ, դեռ Կիրիոն կաթուղիկոսի ժամանակից անհնազանդ են գտնւում այն հաւատին, որը Ս. Գրիգորը տուել է մեզ Յունաստանից, թողել են նրա շուրջ դաւանութիւնը» (Յ. Жорданія, Хроника, I, եր. 319): Մի օրհներգի մէջ, որ պահուած է ժ. դարի ձեռագրի մէջ հին վրացիները դիմում են Ս. Գրիգորին՝ իբրև «լցնողի հայ աշխարհը աստուածային ուսման անուշահոտութեամբ»,— այս բառերով:

«Հաւատով դէպի բոլորի Աստուածը հաստատեցիր Քրիստոսի եկեղեցին անդրդուելի ժայռի վերայ»: Մի ուրիշ օրհներգի մէջ հին վրացիները Ս. Գրիգորին մաղթանք են ուղղում.

«Ո՛վ Գրիգոր, դու, որ Հայաստանի աստղն ես, յիշի՛ր մեզքո հօտին—Փրկչի առաջ. շնորհիր մեզ ողորմութիւն և ծաւալի՛ր աշխարհում խաղաղութիւն»:

Այս ամենը ինձ մի միտք էր ներշնչում, թէ Գրիգորի վրացական պաշտամունքի մէջ մենք ունենք հետքը առաջին հայ—վրացական այն եկեղեցու, որ հաստատուած էր տիեզերական եկեղեցու անդամ աւելի հին—սիրիացիների ձեռքով: Իմ մէջ տարակոյս է յարուցանում միայն այն՝ որ յիշեալ յիշատակարանների ոճը այնքան էլ հին չէ: Սակայն սկսած այն ժամանակից, երբ սկսեց պարզուել վրաց եկեղեցու սերտ յարաբերութիւնը հայկականի հետ յետին ժամանակում ևս, յատկապէս հայ քաղկեդոնական եկեղեցու հետ (Н. Марръ, Аркаунъ, Монгольское названіе христіанъ, въ связи съ вопросомъ объ армяняхъ—халкедонятахъ. Визант. врем. 1905, XII. հրատ. 1—2) վրացիներն՝ առ Ս. Գրիգոր պաշտամունքը ստանում է այնպիսի բացատրութիւն, որ շատ լաւ պատշաճում է յիշուած յիշատակարանների լեզուի յատկութիւններին: Աւելի յետնագոյն, նմանօրինակ յիշատակարանների փոխառած մասերը, քանի որ յունարէնից չեն թարգմանուած, կարող են առաջ եկած լինել հայ աղբիւրից, բայց հայ—քաղկեդոնական աղբիւրից, այսինքն. այդ յիշատակարանները, ուրեմն մօտաւորապէս Բ.—Թ. դարերին են պատկանում և յամենայն դէպս, ոչ առաջ քան Է. դարը: Իժուար է ապացուցանել, թէ մինչև Է. դարը Ս. Գրիգոր լուսաւորիչը հայերի մէջ էլ այնքան լայն և համատարած հռչակ

ունեցած լինէր\*) : Հին հայ պատմական կամ այլ գրական վաստակները տեղեկութիւնները, որ հակասում լինէին Ս. Գրիգոր լուսաւորչի մասին իմ այս տեսութեանը կարևոր են ինձ աւելի նոյն յիշատակարանների ժամանակը ճշգրելու, քան առ Գրիգոր համահայկական պաշտամունքի հնութիւնը ապացուցանելու համար : Ս. Գրիգորի պաշտամունքի նորոգուելու և նկատելի կերպով աճելու յիշատակարանային յայտնի նշանները տեսնում ենք է. դարում, քաղկեդոնական եզր և Ներսէս Գ. կաթողիկոսների ժամանակ. ի միջի այլոց՝ Ներսէս Գ.-ին է պատկանում, ի պատիւ Ս. Գրիգորի, հոյակապ տաճարի կառուցման վառքը, տաճարի, որ այժմ յայտնի է Խաչիկ վարդապետի պեղումներով<sup>1</sup>) : Այս ժամանակից սկսած Ս. Գրիգորի պաշտամունքի աճելով՝ Հայաստանում զուգընթացաբար բամամանում են նրա անունով եկեղեցիները : Հայաստանում հակաքաղկեդոնականների յաղթանակելուց և հակաքաղկեդոնա-

\* Հայ մատենագիրների ցուցումները (Փաւտոս, Ղազար Փարպեցի եւլն.) ընդ հակառակն, ապացուցանում են, որ Ս. Գրիգորը Հայաստանում համատարած հուշակ ունէր : Ծանօթ. Հայ թարգ.

1. Գեռ վիճելի է, թէ ինչ անուն էր կրում եկեղեցին «Ս. Գրիգորի» : Թէ «Զուարթնոց», բայց այս չի փոխում իրականութիւնը, որովհետեւ վերջին կոչումն էլ Ս. Գրիգորի պաշտամունքի հետ կապ ունի, Ս. Գրիգորի մասին այն աւանդութեամբ, որի մէջ դեր ունին Երկնային Զօրութիւնները : Զօրեղ միտումն կայ ապացուցանելու, որ այս տաճարը չէր կարող երեւան գալ Ս. Գրիգորի անունով, Գուցէ այս կարծիքը հուսկ ուրեմն ճշգրիտ բայց ես կարծում եմ, որ ապացոյցների յախուռն կիրառութիւնը կարող է խախտել հաւատը ղէպ ի այդ կարծիքը, կրկնում եմ, գուցէ ուղիղ կարծիքը, ի միջի այլոց՝ Մովսէս Կաղանկատուացին ասում է, որ Ներսէսը այս եկեղեցին շինեց Կոստանտ կայսրի փողով (Գ. 15) : Կարապետ վարդապետը (Արարատ 1905. I. եր. 43—50), առակ է համարում հայ հին հեղինակի այս տեղեկութիւնը, որ հայ հին մատենագիրը առաջ է բերում ժամանակին համեմատ զրուցային մանրամասնութեամբ : Հ. Կարապետը կարծես տեղեկութիւն ունի որ «Կոստանտին կայսրը աւելորդ փող չունէր Հայաստանում եկեղեցի շինելու» : Միանգամայն եւ, հ. Կարապետը, երեւում է, համոզուած է, որ «յունական կայսրների երեսից (հայոց) անբաղդ երկիրը տեսել է միայն աւեր եւ ասպատակող արշաւանքներ» : Եւ դրա համար էլ մինչեւ անգամ «անտեղի է մտածել թէ նրանք եկեղեցու պայծառութեան եւ հարստանալուն նպաստել են», թէեւ այդ եկեղեցին կառուցուում լինէր Ներսէսից, որի քաղկեդոնական հակումն չի հերքում նոյն իսկ Սեբիոսը. որը այս խնդրում, ինչի համար, բացառապէս հեղինակութիւն է հ. Կարապետի աչքում :

կան ազգային եկեղեցի կազմակերպուելուց յետոյ ժողովրդի մէջ շարունակոււմ է աճել Ս. Գրիգորի պաշտամունքը: Փոքրիկ Անի-ում, առայժմ յանուանէ յայտնի 10—12 եկեղեցիներէց հինգը առնուազն նուիրուած են Հայաստանի լուսաւորչին: Սակայն հայերը միշտ էլ կասկածել են որ յունական Կեսարիայից իրանք ընդունած լինեն նուիրապետութիւնը, որ անխզելի կերպով շաղկապուած է նրանց պաշտամունքի առարկայի մասին զրոյցի հետ, մասնաւանդ որ այն հակասում է դրական փաստական ապացոյցներին, որոնք հաստատում են, թէ Հայաստանում իսկական, տեղական քրիստոնէական եկեղեցին յունական սկզբնաւորութիւն չունի: Փորձ է եղել գայթակղութիւնը հեռացնել մի ուրիշ աւանդութեամբ, թէ կեսարական եկեղեցու հիմնադիրն է Հայաստանի լուսաւորիչ Քաղէոս առաքեալը, ուրեմն և Ս. Գրիգորը ձեռնադրութիւն ընդունեց հայ եկեղեցում. (Սոփերը Հայկ. Զ. Եր. 31. Գիրք թղթ. Եր. 532): Այս, երևում է, Ս. Գրիգորի պաշտամունքի հայ ազգայնացման, վերջին քայլն է:

Այս պատմութիւնների վիպային լինելը աւելի նկատելի է դառնում այն տարածայնութեամբ, որ առաջ է գալիս, երբ համեմատում ենք նրանց ապացոյցները հին հայկական եկեղեցու և հին հայկական գրականութեան լեզուի փաստերի կենդանի վիպութեան հետ: Այդ փաստերը ակներև վկայում են, որ հայ տեղական եկեղեցու հիմքը դրուած է սիրիացիներից կամ սիրիացիների ազդեցութեամբ: Մինչդեռ Գրիգոր լուսաւորչի պատմութեան բոլոր խմբագրութիւնների մէջ բացառիկ ուշադրութիւն է նուիրուում յոյներին, Հայաստանի քրիստոնէական լուսաւորութեան բոլոր գործը, այդ պատմութեան մէջ, պատկերացում է որպէս Կեսարիայի յոյն եկեղեցու քարոզչական դործունէութեան արդիւնք: Ըստ էութեան՝ հայ ազգային խմբագրութեան մէջ յայտպէս է գործը ձևակերպուած: Աւելի միտումնաւոր բան քան այդ է, դժուար է երևակայել: Կարելի է հասկանալ խիստ յունասէր Ղազար Փարպեցու յարձակումները հայերի սիրիական քրիստոնէութեան վերայ, կարելի է հաշտուել և այն բանի հետ, որ նա ասորի Բրքիչոյ կաթողիկոսի հետ Հայաստան եկած ամուսնաւոր սիրիացիներին (կրօնաւոր) «լոյծ կրօն»ը բաժրայօնութեամբ ծաղրելով՝ հակառակ է գտնում «սուրբ և ամբիժ կրօն»-ին, որ դրել և հաստատել է մեր բոլոր հայ եկեղեցիներում Գրիգոր Ս. նահատակ»ը (Ղազար Փարպ. Եր. 54). սակայն չի կարելի չգաւմանալ նոյն իսկ ազգային խմբագրութեան հեղինակի անարդար վերաբերմունքի վերայ դէպի հայ մայրենի եկեղեցու իսկական հիմնադիրները: Երբ միանգամ այդպիսի վերաբերմունքը անկասկածելի փաստ է, նրանից էլ ան-



խոստալիելիօրէն հետեւում է, որ հայ գրականութեան մէջ ազգային հոսանքի երևան դալուց առաջ տեղի է ունեցել յունական եկեղեցական զօրեղ ազդեցութիւն, որը, բնականաբար, կարող էր առաջ մղել կեոարիական քարոզչի գործունէութիւնը: Յոյն եկեղեցական հոսանքը կարող էր տեղական քարոզչից, որ գործում էր բիւզանդական անմիջական ազդեցութեամբ սահմաններում մի որ և է տեղ, ստեղծել համահայկական լուսաւորչի տիպ, զիտամաբ չտեսնելու տալով սիրիական եկեղեցական ազդեցութիւնը: Հետեւանքին նայելով, յունական ազդեցութիւնը ոչ միայն ստեղծել է իսկապէս հարկաւոր տիպը, այլ և կարողացել է յաջողցնել որ բոլոր հայերը ճանաչեն նրան. այնպէս որ, ազգային ուղղութեամբ գրողներին մնում էր Ս. Գրիգորի, որպէս համահայկական լուսաւորչի, փառքը, որ իրանց ժամանակին արդէն հաստատած էր, առաւել ևս հռչակել:

Ս. Գրիգորի պատմութեան զարգացման առաջին շրջանից, երբ նրա քարոզչական գործունէութիւնը դեռ տեղական էր, ժամանակը չի պահել որ և է ժամանակակից մշակուած գրոյց: Զեմ վիճում, թէ դեռ կարող է այն էլ խնդիր լինել. եղել է արդեօք այդպիսի սկզբնական զրոյցի ձև, դրի առնուած է, թէ միայն բերան է բերան էր խօսում: Առ այժմ կարելի է գուշակել, թէ սկզբում, այդ մի աւանդութիւն էր Կապադոկիայի յոյն եկեղեցու նահատակ քարոզչի գործունէութեան մասին լազիբի և Իմերեթիայի սահմանակից, արևմտեան շայաստանում, հռովմէական կայսերութեան մերձաւոր ազդեցութեան շրջանում: Բոլոր խմբագրութիւններն էլ պահպանել են թէ Գրիգոր լուսաւորիչը և անգամ նրա սերունդը կենդրոնացած էին Հայաստանի այդ մասում, իսկ մեր արաբական բնագիւղը այդ կենդրոնացման մի մանրամասնութիւն կրկնում է երկրորդ անգամ (եր 139.—հայ թարգ. 73):

Կապադոկիական Կեոարիայի եկեղեցու սան և այդ եկեղեցու կարգած մի նման տեղական քարոզչի համատարած ստեղծագործող դերի վերայ կարող էին ի հարկէ պնդել իրանք յոյները, իսկ հայերից նրանք՝ որոնք ընդհանրապէս յունական եկեղեցականութեան կուսակիցներն էին և խմբուած էին ամենից առաջ, բնականաբար, բիւզանդական կայսերութեան կազմի մէջ գտնուող հայ գաւառներում և ընտելացած էին յունական կուլտուրային անմիջապէս: Այսպիսի յունահայկական միջավայրը կարող էր տեղական քարոզչական դործը ընդհանրացնելու առաջին փորձը տալ: Հայ կաթողիկոսների և թագաւորների ցուցակում, որ թարգմանել է, անկասկած է. դարի գրող Եզնիկ քահանան,

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google



ասուած է, որ «Գրիգորի գործերի կարգը նորոգեց մի երանելի տարօնեցի մարդ, որի անունն էր Մասրոպ»<sup>1</sup>. ուրեմն հայ գրերի յայտնի գտնողը: Չափազանց հետաքրքիր է, որ նոյն ինքն հայ աւանդութեամբ էլ Մեսրոպին է վերագրուում յունական քարոզիչ Գրիգորի մասին զրոյցի առաջին մշակութիւնը (նորոգութիւնը): Ըստ այսմ, ինչպէս հայ տառերի գիւտը, իսկապէս՝ սիրիական ծագումն ունեցող հին հայկական գրերի՝ յունական ձևերով կատարելագործելը, ինչպէս Ս. Գրքի առաջին թարգմանութիւնը, իսկապէս՝ նրա սիրիական հայ հին թարգմանութեան յունարէն ընագրի համեմատ սրբագրելը, այսպէս և Ս. Գրիգոր լուսաւորչի գործերի առաջին ընդարձակ խմբագրութիւնը պատկանում է, անկասկած, յունասէր գրողներին, ըստ աւանդութեան, Մեսրոպին և նրա աշխատակիցների խմբին, գլուխ ունենալով Սահակին (Պարթև): Գուցէ այստեղ նոյն Մեսրոպ անունը և նրա մի քանի գործակիցների անունները իսկական տեղից տեղափոխուած են. բայց հիմք չկայ կասկածելու, թէ սահմանափակ շրջանի նահատակ քարոզիչ Ս. Գրիգորի մասին տեղական զրոյցի առաջին անգամ մշակութիւնը, և ամբողջ ժողովրդի, կամ լաւ ևս ամբողջ ժողովուրդների, այսինքն հայերի և վրացիների քրիստոնեայ դառնալու պատմութեան վերածելը պատկանում է հին հայ-յունասէրներին, որոնք ապրում էին քաղկեդոնականներից առաջ: Եթէ այդ խմբագրութիւնը աւելի յետոյ, քաղկեդոնական ծագումն ունենար, ինձ թւում է, դժուար կըլինէր բացատրել հայ ազգային, անպայման հակաքաղկեդոնական եկեղեցու ծոցում՝ Ս. Գրիգորի գոյութիւնը, մանաւանդ նրա ընդարձակ հռչակը և նրա համազգային պաշտամունքը Հայաստանում: Թէ Ս. Գրիգորի մասին զրոյցի հնագոյն մշակութիւնը պատկանում է, հաւանօրէն, Մեսրոպին, յամենայն դէպս, Եզնիկի մատնանիշ արած հելլենասէրների շրջանի գրողին, առ այս ցուցմունք կայ Ղազար Փարպեցու յայտնի նամակում էլ: Մերկացնելով սիրիական կուսակցութեան պատկանող հայ հոգևորականութեան կատարի յարձակումները իւր համախոհների վերայ, այս, ոչ պակաս կրքոտ հելլենասէրը հաւաստիացնում է (եր. 438), որ այդ բոլորը տեղի է ունեցել իւր ժամանակով և ինքն ականատես է եղել, և շարունակում է. «Իսկ զյառաջագոյն գրելոցս սուրբ արանցն, զորս

1. Ն. Գ. Արոնցի պատճէնին համեմատ «կարգը գործոց Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեալ Տարաւնացոյ (sic). որում անուն Մասրովպ (sic) ճանաչէր»

ի պատմութեանն նահատակին Գրիգորի՝ դրոշմեալ յիշատակէ [Մեսրոպ?], զի՛նչ ևս ասացից,—զարդար և զարժանաւոր բարեպաշտ կաթողիկոսէն՝ զՍրբոյն Ներսիսէ, և զհրօնաւոր առաքինւոյն և զմեծ լուսաւորչէն Հայոց՝ զտէր Սահակայ և զայլոց բազմաց, որոց ոչ բացեալ ի բարեբան զբերանս իւրեանց ի վերայ աշխարհիս այսորիկ՝ վախճանեցան»։ Ազատանգեղոսի պատմութեան մէջ այդպիսի բան չկայ, որին դիմումն անէր Ղազար Փարպեցին։ Հեղինակի անուան աչքի ընկնող բացակայութիւնը թերևս յառաջ է ելել նրանից, որ այն չէր համապատասխանում աւանդական Ազատանգեղոսին, և գուցէ, այնտեղ եղել է, ինչպէս գրում է Եգնիկը, «Գրիգորի կարգք»-ը<sup>1)</sup> վերանորոգողի «Մեսրոպ» անունը։

Ձեռքի տակ չունենք Ս. Գրիգորի ընդարձակ գործունէութեան մասին վիպորդ զրոյցի առաջին մշակուածը։ Երևի դրանից էլ քաղուածներ են բերում երբ մասենադիրները համառօտակի գիմումներ են անում Ս. Գրիգորի գրքին կամ Ս. Գրիգորի պատմութեան», թէև այն կարող էր ուրիշ անուն էլ կրել։ Պէտք է կարծել, որ արաբաց Գէորգ Եպիսկոպոսը «Հայոց վարդապետ Ս. Գրիգորի պատմութիւնը» անելիս՝ այդ պատմութեան, աւելի ստոյգ՝ նրա յոյն թարգմանութեան վերայ է յենուում, որովհետև նրա տեղեկութիւնը, թէ Ս. Գրիգորը եղել է նիկիայի ժողովում (de Lagarde, Anal. Syr. եր. 123, <sup>24</sup>—<sup>66</sup>, 125, <sup>3</sup>), չկայ մեզ յայտնի ուրիշ խմբագրութիւններից ոչ մէկի մէջ էլ։

Հին յիշատակարանները, ի հարկէ, դիտական, հնախօսական հետաքրքրութիւն են ներկայացնում. սակայն այն ժամանակ Հայաստանում այդ հետաքրքրութիւնը դեռ չկար։ Քրիստոնէական կեանքը, ամեն մի նոր կուլտուրային յատուկ միամտութեամբ Հայաստանում առաջ էր գնում առանց յետ նայելու, և առաջ բերելով նոր խնդիրներ՝ ինչ որ նրանց չէր համապատասխանում, կորստեան էր դատապարտում։ Այդպիսի կորստեան դատապարտուած գրական գործը կարողանում է փրկուել միայն, եթէ իւր ժամանակին թարգմանուած է լինում այնպիսի ազգի գրականութեան մէջ, ուր առաջ չէ բերում կենսական սուր, և մասամբ կուսակցական հետաքրքրութիւն, և ուր կարողանում էին շահագրգռուել նրանով, որպէս մի յայտնի եկեղեցու պատմութեան հետ ծանօթացնող ընդհա-

1) Մի ուրիշ ցուցումն էլ կայ, որ այս Մեսրոպը գրել է Ս. Ներսիսի Վարքը (Ջարբանալեան Հայ. հին դպրութեան պատմ. եր. 565. Սոփ. Հայկ. VI եր. 157)։

նուր քրիստոնէական յիշատակարանով: Կրկնուում էր *mutatis mutandis* պատմութիւնը փոխ առած բառերի, որոնք պահպանում են ուրիշ լեզուներում հին ձևը և այն ժամանակ, երբ իւր բնավայրում վաղուց արդէն ընդունել են նկատելի փոփոխուած կերպ, յաջողելով երբեմն անցնել զարգացման մի քանի աստիճաններ:

Գրեգոր լուսաւորչի պատմութեան մի այսպիսի, պատահաբար պահպանուած հին ձև ստանում ենք առաջին անգամ այժմ հրատարակող ընագրով: Ճշմարիտ է, նա նիւթի հնագոյն մշակուածը չէ, քայքայ այնու ամենայնիւ նա է այնպիսի ժամանակի խմբագրութիւն, որը հնացած և մոռացուած էր ծննդավայրում, իսկ նրա հետ ինքնատիպ խմբագրութիւն էլ մոռացուած և կորած էր մայրենի գրականութեան մէջ: Այն ահա այժմ մեր առաջին է արաբական թարգմանութեամբ:

Մեր յիշատակարանի սկզբում պակասում է Տրդատի և Գրեգորի մասին կենսագրական ներածութիւնը և նոյն Գրեգորի չարչարանքի մասերը: Այս պատահական բացը (համապատասխան թերթերը ընկած են) լրանում է հարկաւոր կտորների համառօտ կրկնութեամբ Կեսարիայի Աւստրիոս Եպիսոպոսին ուղղած նամակում և Տրդատ թագաւորի՝ Կոստանտին կայսրի հետ լսօսակցութեան մէջ: Սակայն այնու ամենայնիւ բաց է մնում պատմական ներածութեան խնդիրը, յարսցուել են այնտեղ քաղաքական դէպքեր, ինչ չափով են յարուցուած և ո՞րպիսի լուսաբանութեամբ:

Արաբական ընդօրինակութեան ժամանակը կարելի է որոշել միայն մօտաւորապէս, պալեօգրաֆիկական (հին գրչութիւնների գիտութիւն) հիմունքներով: Mrs. Gibson-ի ցուցակում ժամանակը ցոյց չէ տրուած, ինձ էլ չյաջողուեց ձեռագրիս թուականը գտնել: Բայց գրութիւնից և ընդհանրապէս սովորական տեսքից դատելով՝ ձեռագրերը Թ. դարից յետոյ չէ: Քուֆիից դէպի սովորականը փոխւող գրութեան յառկութեամբ նա աւելի մօտենում է («Kufi. inclining to Nashi») 885 թուի արաբական ընագրի նմուշին, որ հրատարակել է W. Wright-ը The Palaeographical Society. Facsimiles of Manuscripts and Inscriptions (Oriental Series XVI, London 1873—1883, Plate XX.—Arabic): Հետաքրքիր է, որ այդ նմուշը առնուած է սրբերի վարքից և կրօնաւորների խրատից, որը նոյնպէս պատկանում է Սինայի սարի վանքին, որի համար գրել է Երուսաղէմին մօտ Սաբբի-նայի վանքի մի կրօնաւոր<sup>1)</sup>: Մեր ձեռագրի գրութիւնը մինչև

1) Տես նոյնպէս Սինայի № 457 մագաղաթեայ ձեռագրի նմուշը (Gibson եր. 89), դժբաղդարար առանց թուականի:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

անգամ աւելի հին է երևում: Յամենայն դէպս, անկասկած է, որ ներկայ ձեռագիրը տրաբական թարգմանութեան ժամանակից շատ տարիներով յետոյ է, և ընագիրը մի քանի անգամ է արտագրուել, որով և կարելի է բացատրել ամեն տեսակ ազաւաղումների բազմութիւնն ու հրէշաւորութիւնը:

Արտագրողներին ենք պարտական հետևեալ տեսակի կրճատումները.

1. Արաբական ներկայ ընագրում պատահաբար բաց է թողուած Յովհ. 14, <sup>18</sup> ցիտատը, որ կայ հայ ընագրում (եր. 79, <sup>40</sup>): Այլ և «ուխտիւքս այսոքիւք» բառերով (ուուս. հրատ. 71, 26—27, սոյն թարգ. եր. 7 <sup>15</sup>), անկասկած այս խօսքերն են ինկատ առնուած:

2. Մամիկոնեանների տիտղոս «սպարապետ»-ը առանձին անձն է դարձած (123, <sup>19</sup>, սոյն թարգ. եր. 57, <sup>18</sup>): Հազիւ թէ կարելի լինի թարգմանչին վերագրել այս անհետեւութիւնը, քանի որ 115, <sup>9—10</sup> երեսում (սոյն թարգ. եր. 49, <sup>11—12</sup>), նա շատ լաւ մեկնում է այս բառը:

3. Ղևոնդիոսը տալիս է միայն Յովհաննէս Մկրչի նշխարը (129, <sup>23</sup>, սոյն թարգ. եր. 63, <sup>26</sup>), որպէս թէ Աթանագինէի նշխարը չէ եղել հայ ընագրում (եր. 470) յիշուած, բայց յետոյ (131, <sup>41—42</sup>, սոյն թարգ. 66, <sup>18—19</sup>) յիշում է և Աթանագինէի նշխարը. անկասկած է, որ արտագրողն է բաց թողել: Թէև Սեբաստիայի նահատակ Աթանագինէի նշխարը Ս. Գրիգորը գուցէ ստացել է Սեբաստիայում և ոչ Կեսարիայում <sup>1</sup>):

Սոյն արաբական ընագիրը Ք. դարի առաջին կէսից հին չէ: Այնտեղ յիշուած են բուսներ (եր. 133, <sup>24—25</sup>, սոյն թարգ. եր. 67, <sup>27</sup>): Իսկ բուսներ կամ բուսներ հարուստում առաջին անգամ յիշուում են Ք. դարից սկսած: Նրանց յիշում է Պրուդենցիոսը 839 թուին և համարեա նոյն ժամանակին էլ՝ Մուսլիմ բ. Աբու Մուսլիմը (Marquart, Osteur- und ostas. Streifzüge, եր. 354), եթէ միայն Մարքովարտը ուղիղ է իւր ենթադրութիւնների մէջ, թէ Իբն-Խորդադաբէն բուսների մասին իւր տեղեկութիւնը առել է Մուսլիմից: Հազիւ թէ կարիք լինի կասկածել, որ Գրիգորի պատմութեան օրինակի մէջ բուսների երևալը աւելագրութիւն է, ընագրինը չէ: Այդ վերսիան, բացի հայերից, երեք ժողովուրդ է ճանաչում, որ

1) Նայել Նաեւ Ս. Հռիփսիմէի՝ Տրղատի հետ մաքառելու ժամանակի վերաբերութեամբ անհետեւողականութիւնը: Երբեմն «յերրորդ ժամէ ցտաններորդն» (83, 16—17 նոյն թարգ. եր. 18, 22—23): Երբեմն «ի տասներորդ ժամէ աւուրն ցերրորդն առաջնոյ դիշերոյ» (85, 22—28 նոյն թարգ. եր. 21, 3—4):

Ս. Գրիգորից մկրտութիւն են ստացել, և դրանք են վրացիք, արխազներ և ալաններ (եր, 135, 9, 15, 137, 9—18, սոյն թարգ. եր. 68, 29—50. եր, 69, 2—3): Այս երբեակ դաշնակցութիւնը կրկնուում է դեռ մի քանի անգամ, բայց արխազների տեղ երբեմն երևում են լազեր (եր. 117, 56—57. սոյն թարգ. եր. 52, 17), երբեմն ըուսներ (եր. 133, 24—25. սոյն թարգ. եր. 67, 27), երբեմն համարեա անյայտ «Դ-ը-զ-կ-ի-թ» (137, 9. սոյն թարգ. 70, 27) ժողովուրդ: Սկզբում ես կարծում էի թէ այդ անունը նոյն Գերշան կամ մինչև անգամ Բագիկ-ն է (Отчетъ о работахъ на Сиваѣ և այլն 23). սակայն առաջին ձևը հայ գաւառի անունն է, որ չի պատշաճում բնագրի ցոյց տուածին, ուր խօսքը հայերից տարբեր ժողովրդի մասին է, իսկ երկրորդ ձևը՝ ժողովրդի անուն, որ նկարագրւող պատմական դէպքերի բեմից շատ հեռի է. այլ և, ի դէպ, գատելով ըստ բնագրին՝ չընայելով անունների տարբերութեան, ցոյց տուած երբեակ դաշնակցութիւնը պէտք է բաղկացած լինի, յամենայն դէպս, միևնոյն ժողովուրդներից: Եւ իսկապէս, արխազների տեղ լազերի երևան գալը ըստ էութեան գործը չի փոխում. արխազ անուամբ այստեղ ենթադրւում են, հաւանօրէն, լազերը, որպիսի կոչում նկատելի է Զաքարիա հւետորի մօտ էլ, ինչպէս նկատել է Գեյցերը (Die sog. Kirchengeschichte de Zacharias Rhetor... von K. Ahrens and G. Krüger, եր. 382) և նրանից յետոյ՝ Մարքվարտը (Osteur. und Ostas. Streifzüge, եր. 174): «Դ-ը-զ-կ-ի-թ»-ի մէջ «զ» սկզբնատառը արաբականում նախընթաց բառի վերջին տառի սխալ կրկնութիւնն է. մնացած «ը-զ-կ-ի-թ»-ի ընթերցմամբ, կարծում եմ, մենք ունենք յունարէն լազիթի ձևը, արաբական լ-ն ը ի սխալ փոփոխմամբ և, երկիր, կողմն նշանակող վրացերէն է՛ր վերջոււորութեան յաւելմամբ: Բնագրում որից թարգմանուած է արաբերէնը, արխազների անուան մէջ այսպիսի տատանումն հազիւ թէ լինէր. «արխազներ» լազերի կամ լազիքի արաբական յետնագոյն աղաւաղումն է, նոյնպէս արխազների փոխանակ բուսներ, պէտք է համարել արաբ թարգմանչի կամ աւելի ճիշդ՝ յետնագոյն արտագրողներից մէկի սարքած, որ այդ անունները նոյնացնելիս՝ ղեկավարուել է իւր յատուկ դիտումներով:

Ոճի սարսափելի աղաւաղումն արդէն ոչ թէ արտագրութեանն, այլ թարգմանութեանն է: Սակայն մեր յիշատակարանի աղաւաղուած լեզուն չի կարող նրա յետնագոյն ծագման ապացոյցը համարուել: Արաբական գրական լեզուի յստակութիւնը, որպէս յայտնութեան գրքի—Կօրանի—սրբազան լեզուի, պահպանուում էր աւանդաբար միայն մահմեդական շրջաննե-



բում: Գրիստոնեայ գրողները չէին ունենայ ի հարկէ դէպի Կօրանը այն բարեպաշտութիւնը, ինչ որ անկասկած պէտք է ունենային և ունէին մուսուլման գրողները: Հետևաբար արաբ կենդանի, խօսակցական լեզուի հեղեղը յետ մղելու արգելք չըկար: Գրիստոնեայ գրողները առանց որ և է աւանդական զգուշաւորութեան կարող էին գրել արաբերէն, և նրանց գրուածքի մէջ հոժ աղաւաղումները չեն կարող ապացոյց համարուել թէ այդ գրուածքները յետնագոյն ժամանակի գործ են: Նրանք միշտ էլ աւելի ժողովրդական լեզուով են գրել քան մահմեդականները: Նոյնպիսի երևոյթ, նոյնպիսի պատճառով արաբ գրականութեան մէջ նկատելի է արաբերէն գրող հրէաների վատտակներում. (I. Friedländer, Der Sprachgebrauch des Maimonides, 1902, I. եր. XIII—XIV).

Կարծես մի քանի թերի թողածներն ու դիտաւորեալ կրճատումները բուն արաբական վերսիայինն են, օրինակ—

1. Արաբական վերսիայում (եր. 81, <sup>27</sup>. սոյն թարգ. եր. 17, <sup>4</sup>) Հռիփսիմէ անուան նշանակութիւնը, որ ծագել է ռիպտօ (ριπτω) յոյն բառից (հայ եր. 108, <sup>25</sup>) չէ բացատրուած. մինչդեռ այդպիսի յունական ստուգաբանութիւնը յունարէնից թարգմանուած արաբերէնում, ոչ միայն հայերէն ազգային խմբագրութիւնից աւելի տեղին կը լինէր, այլ նաև շատ հասկանալի: Սակայն ստուգաբանական բառախաղի այս զանցառութիւնը նրանով է բացատրուում, որ արաբ բնագիրը ընթերցողներին որոնք յունարէն չգիտէին, հասկանալի չէր լինի:

2. Զրոյցը, թէ ինչպէս մի այրի կին արքունիքից կերակրում էր Ս. Գրիգորին, արաբական վերսիայում համառօտակի յիշուած է նրան վերապից դուրս հանելու առիթով, (եր. 93, 29. սոյն թարգ. եր. 28, 21)• բայց մի բառով անգամ չէ յիշուած այն տեղ (եր. 71, <sup>36—37</sup> սոյն թարգ. եր. 7, <sup>26—27</sup>), ուր հայ բնագիրը տալիս է այդ դէպքի մանրամասն նկարագրութիւնը (եր. 82, <sup>6</sup>): Սակայն հետաքրքիր է նկատել, որ արաբաց Գէորգեպիսկոպոսը այս զրոյցը իւր տեղում զանցառութեան տալով հանդերձ, այնուամենայնիւ յապաւումով յիշում է (de Lagarde, յիշ. յօդ. եր. 124, <sup>8—124, 10</sup>.: Դաշեան, յիշ. յօդ. եր, 15):

Այնուամենայնիւ կարծում եմ, որ արաբական վերսիան զերծ չէ մի քանի կրճատումներից: Մէկը—թարգմանիչն է թէ արտագրողը—գործը հեշտացնելու համար թոյլ է տուել իրան, մի քանի ոչ-հական կտորների կրճատումներ քարոզութիւնների մատումն էլ: Քարոզութեան ընդարձակ մասը, որ կայ հայ ազգային խմբագրութեան մէջ, չէ եղել յոյն բնագրումն էլ, որից թարգմանել է արաբը, բայց մի քանի հատուածներ այս



քարոզութիւնից պահպանուել են արաբական վերսիայում-  
 օրինակ, Ս. Գրեգորի քարոզութեան խօսքերը (եր. 107, 20 սոյն  
 թարգ. եր. 41, 52) յիշեցնում են քարոզութեան միջի հայ ըն-  
 դարձակ յաւելուածը (377—379), և շատ հաւանական է, որ  
 առանձին տեղերի նոյնպիսի ուրիշ կրկնութիւններ էլ են եղել,  
 եթէ տեղ տեղ դիտամբ չեն կտրուել, միմիայն համառօտու-  
 թեան համար: Այդպիսի կրճատումն ունենք, հաւանօրէն, 99—<sup>13</sup>  
 երեսում (սոյն թարգ. եր. 33, 50): Յայտնելով, որ Ս. Գրեգորը  
 այնուհետև սկսեց քարոզել Ս. Գրեգը, վկայաբանութիւն գրողը  
 սկսում է պատմել չին Կտակարանի պատմութիւնը, բայց  
 պատմութիւնը հէնց սկզբում ընդհատուած է: Այն տեղ, ուր  
 Ս. Գրեգորը պէտք է սկսէր պատուիրանագանցութեան դէպքը  
 պատմել, ներկայ արաբական վերսիան դնում է Ս. Գրեգորի  
 բերանը այս նախադասութիւնը. «Թողուք այժմ յիշել գշար  
 ծանօթութիւն (պատուիրանագանցութիւն)», և շարունակ-  
 ւում է Ս. Գրեգորի գործերի պատմութիւնը:

Չնայելով մեզ մատչելի արաբական օրինակի մասնանշաժ  
 պատահական կամ յատուկ կրճատումներին, հենց այն ձևով  
 ինչ որ մենք տեսնում ենք, այն հետաքրքիր է ամենից առաջ  
 այն ժամանակամիջոցի և միջավայրի վերաբերութեամբ, որին  
 կարելի կը լինի վերագրել. դրա համար էլ կարևոր է մեզ պար-  
 զել արաբական վերսիայի ծագումն:

Ս. Գրեգորի շարչարանքի վերև յիշուած արաբա-  
 կան բնագիրը թարգմանուած է անմիջապէս յունարէնից: Այդ  
 անկասկած է:

Կարող է միայն կասկած լինել—արձք, թէ արաբացած  
 սիրկացի է թարգմանել, սը մեր համար միևնոյնն է: Միակ ձե-  
 ռագիրը, որի մէջ գտնւում է մեր բնագիրը, ունի երկու  
 թուարկութիւն—կոպտական՝ երեսների վերայ և վրացական՝  
 տեսարակների: Արաբների քրիստոնէական ձեռագրերի մէջ կոպ-  
 տական երեսահամարը սովորական երևոյթ է: Երեսահամար-  
 ների նոյնպիսի թուանշաններն էլ կոչւում են կոպտա-արաբա-  
 կան: Բայց ուրիշ էլ ոչինչ չըկայ, որ կոպտական ազգեցութիւն  
 ցոյց տար: Յատուկ անունները յունական այս կամ այն վեր-  
 ջաւորութեամբ մէջ բերելը, նայելով թէ բառը յունարէն  
 բնագրում ինչ հոլովով էր, չպէտք է շիտթել այն բանի հետ,  
 թէ յունական մի քանի բառեր կոպտերէնում իւրացուած են  
 յունական զարտուղի հոլովով (Stern, Koptische Grammatik, 1880  
 № 160, O. von Lemm, Eine dem Dionysios Areopagita zugeschriebene  
 Schrift in koptischer Sprache, Sep,—Abdr, aus dem «Bull. de l'Acad.  
 Imp. des Sciences de St. Pét.» 1900 մարտ, եր. 287), և յամե-





նայն դէպս, միայն այս մի հանգամանքի վերայ չի կարելի ոչինչ վճռական քան ասել: Վրացերէն թուարկութիւնն էլ վկայում է թէ վրացիները, որ ինչպէս յայտնի է, բաւական ազդեցութիւն ունէին Սինայում, մեր այս ձեռագրի երեսուր ժամանակ, մասնակցութիւն են ունեցել քրիստոնէական արաբական դրահան գործում: Արաբական լեզուի աղաւաղ անկանոնութիւններն ու գրական ձևերից աչքի ընկնող շեղումները հիմնաւորապէս ապացուցանում են որ թարգմանիչը արաբ չէր: Սակայն արաբ դասական լեզուից այս շեղումները դեռ անհրաժեշտ ապացոյց չեն, թէ հեղինակը այլացեղ ծաղուփից է: Nöldeke-ն այս իսկ հարցի առիթով Մայժօնիզի արաբերէնի մասին բացառանչում է. «Վէտք է ուշք դարձնել, թէ ինչպէս է գրում մի իսկական սեմական արաբ, որպիսին է Մուբադգասին».— «man beachte, wie ein so reiner arabischer Semit wie Mugaddasi schreibt!» (տու. I. Friedländer-ի. յիշ. յօդ. եր. IX. ծանօթ. 4): Friedländer-ը այսպիսի արաբերէնի մասին մէջ է բերում Յելսուդայ-Իբն-Տիբբօն-ի ընորոշող կարծիքը որ յայտնել է Արու-լ Վալիզի «Sefer—Harikma» (հրատ. Kirchheim, Ֆրանֆուրտ Մայնի վերայ 1856 թ. եր. III) նրա թարգմանութեան ներածութեան մէջ, ըստ այսմ. «պատահում է որ մենք թանգմանական աշխատանքի մէջ խորատուղուածներու արական վերջաւորութիւնը իգականի տեղ ենք դնում, կամ եզակին՝ յողնակու տեղ, և ընդհակառակն. արաբականի մէջ եղածները այդ տեսակ սխալներէն են» (յիշ. յօդ. եր. XIII. ծանօթ.):

Արաբական քրիստոնէական գրականութիւնը քիչ է ուսումնասիրուած: Քրիստոնէական յիշատակարանների արաբ լեզուի վերայ աւելի սակաւ է ուշադրութիւն դարձուած: Քիչ է ուշադրութիւն դարձուած նրա աղաւաղումների, ռամկարանութեան և բազմազանութեան վերայ. մինչդեռ յայտնի է, որ արաբերէնը որպէս գրական լեզու դործ էին ածում զանազան երկրների, զանազան ծագման, զանազան դասանութեան քրիստոնեաները—միաբնակներ, օրթոդոքսներ (քաղկեդոնականներ), արաբներ, սիրիացիներ, կոպտեր և այլն: Սակաւաթիւ հրատարակուած յիշատակարանների մէջ այնուամենայնիւ գտնում ենք մի կարգ աղաւաղ ձևեր և ինքնուրոյն արտայայտութիւններ, որոնք նկատելի են և մեր բնադրում, ինչպէս օրինակ, Studia Sinaitica № VIII, M. D. Gibson և Horae Semiticae № III-ում A. Sm. Liwis հրատարակած բնագրերի մէջ: Մեր յիշատակարանում թերևս գործ ունենք արաբ կենդանի լեզուի յատկութիւնների հետ, որը կիրառութեան մէջ էր քրիստոնեաների և մասնաւորապէս քրիստոնեայ մէլքիաների (քաղկեդոնականների) մօտ: Մի կարգ աշխարհագրական անուններ

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

վրացական ձև ունենալ: Բայց անհրաժեշտ կարիք չըկայ այդ բացատրել նրանով թէ թարգմանիչը վրացի էր: Նկատուած վրացական տարրը, անկասկած, մի քանի դէպքերում յունական բնագործին են. այսպիսի դէպքերում այս երևոյթը ուրիշ կերպ էլ բացատրելի է: Կարելի է մի հանգամանք յօգուտ վրացի հեղինակութեան ցոյց տալ. այն է յունական  $\gamma$ -III (շ)-ի փոխուած. թէև այնուամենայնիւ, այդ ինքն ըստ ինքեան ոչինչ չի վճռում. դա պարզ յոյն բարբառային, բաւական սովորական երևոյթ է, որը յոյն բարբառի ազդեցութեան հետ նկատուած ենք՝ յունական դարձուածները վրացերէնի փոխանցելիս, որ պատահում է Սինտյեան վրացերէն փ. դարի ձեռագրի մէջ էլ: Բայց, սակայն  $\gamma$ -ի այդպիսի ընթերցմունքը պատահական զուգահէլիութիւն չէ լազիքի հարևան փոքր ասիական յոյների արտասանութեան մէջ:  $\gamma$ -ով՝ յոյն բառերը լազերի լեզուի մէջ մտել են յատուկ այդպիսի առողանութեամբ. օրինակ. *milya* շելիա—(γιλιας) հազար: Այդպէս էլ կարող էին լինել  $\gamma$ -ի հնչւնքը իվերացիների, ոչ արևելեան, այլ արևմտեան իվերացիների, ինչպէս յետոյ կը բացատրուի՝ լազերի հարևան մնգրեցիների ոչ գրական, այլ կենդանի լեզուի մէջ: Այս հանգամանքում, արաբական թարգմանութիւնը հազիւ թէ կարող լինէր երևան գալ Ը.—Թ. դարից ուշ: Վասն զի այդ ժամանակից սկսած արևմտեան վրացիների սովորութիւններն ու կարգերը (արաբիցիա) սկսում են վերջնականապէս տեղի տալ արևելեան վրացիների աւանդութիւններին, որոնք, ինչպէս երևում է, իսկապէս օտար էին Ս. Գրիգորի պաշտամունքին և քիչ էին հետաքրքրում նրա մասին զրոյցներով: Սակայն արաբական վերսիայի նոյն իսկ յունական բնագործ շատ հին ժամանակի արտադրութիւն չէ: Եթէ հիմք ունենայինք մտածելու, թէ ալան ասելով հեղինակը ի նկատի ունի հարևան արևազններին, այն ժամանակ յունական բնագործ պէտք է հասցնել ամենաշատը ժ—դարին: Ի. Կուլակովսկին (Ю. Кулаковскій) բացատրում է, որ «ալանների լուսաւորուելը բրիտանոնէական լուսով կատարուել է նիկողայոս Միստիք-ի պատրիարքութեան օրով, և այն էլ, հաւանօրէն, այն ժամանակ, երբ նա երկրորդ անգամ բռնեց պատրիարքական աթոռը» այսինքն, 912—925 թ. (Христианство у Аланъ, Виз. Времен., 1898, V, եր. 3. նոյնպէս 4—7, 7—9): Բայց ինչպէս յայտնի է ալանները, օրինակ, երբեմն Պրոկոպիոսի մօտ<sup>1)</sup> Ալբանցիների կամ

1) Պրոկոպիոսի (Гот. IV, 3. 469, Бон.) այսպիսի ալանները որ բարեկամ էին պարսիկներին, սիռուած էին մինչև «Կասպից դռները» (հա՛. Բ. Достунисъ, Прокопія Кес. Ист. война, II, Կր, 225):

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

Ալուանները ըստ նոր-հայերէն Աղուանի յետնագոյն անունն է, իսկ այս ականները ժ-ից էլ դեռ մի քանի դար առաջ քրիստոնեայ էին: Այս Ալանիայում իրիս. Ալանիայում ժ. դարում ոչ թէ քրիստոնէութեան սկզբնաւորութիւնն է, այլ քաղկեդոնական շփոթութիւնների լուծումն, մի մասը վերջնականապէս միանում է քաղկեդոնական Վրաստանին մի մասն էլ հակաքաղկեդոնական Հայաստանին<sup>1</sup>:

Արաբական վերսիայում արխագների յիշուելը կարող էր հաստատել որպէս terminus a quo 2. դարը, երբ Յուստինիանոս Ա.-ի ժամանակ (527—565) նրանք քրիստոնէութիւն ընդունեցին (Пробопій, De bello gotthico, IV, 3. հրատ. ВОН. եր. 472—473<sup>2</sup>): Մեր յիշատակարանը իսկապէս 2. դարից յետոյ է, բայց դրա համար հարկ չկայ յենուել այն բանի վերայ, թէ այնտեղ յիշուած են արխագները. մանաւանդ որ արխագ տերմինը ներմուծուած է, հաւանօրէն, արաբ թարգմանչից կամ աւելի շուտ, արտագրողներից մէկի ձեռքով: «Արխագներ» տերմինով, ինչպէս տեսանք, ցոյց է տրւում այն ժողովուրդը, որը սւրբ զէպքում «լազերի» անունով է երևում: Հիմք չկայ կարծելու, որ այս ժողովուրդը յոյն բնագրում կրկնակ անուն ունենար: Մինչդեռ «լազեր» տերմինը անկասկած կար յոյն բնագրում, որովհետև նա արաբ թարգմանութեան մէջ պահպանել է յոգնակի թուի սեռական հոլով յոյն վերջաւորութիւնը<sup>3</sup>: «Լազիկիէթ» ըն-

1) Հետաքրքիր է որ Ю. Кудачовскій-ի ականների պատմութեան ուսումնասիրութիւնը առանց հայերի չի գլուխ գալիս: ա. Ոսկեայ Հօր-դայի խանից հովանաւորուած ականների Սիմէօն միտրոպօլիտը. որ տեղական եկեղեցու երկպառակութիւնների պատճառն էր (1534 թ.) ի միջի այլոց՝ «արգելք դրեց Քանի . . . քահանաների վերայ, որ օրինակատարութիւններ չանեն» . . . «Մի քանի օրթոդոքսների (քաղկեդոնական) դատակներ մկրտուեցին հայ դաւանութեամբ (յիշ. յօդ. եր. 14). բ. 1564 թուն ականների եպիսկոպոսայան աթոռը բռնողն էր Մելիտինէի (Հայաստանում) միտրոպօլիտ տեղակալը» (յիշ. յօդ. եր. 13):

2) Կուլակովսկու (Кудачовскій) ասածով՝ 347—348-ին անմիջապէս նախընթաց տարիներում (Ուր Յուստինոս կայսրը Աւազգների<sup>6</sup> համար սաճար շինեց. Археолог. известія и замѣтки, т. V. Москва 1897. եր. 54):

3) Լազերի բարձր պաշտօնական շրջաններում քրիստոնէութիւնը աւելի շուտ է մուտք գտել քան Արխագիայում: Հետաքրքիր է Ս. Գրիգորի մասին վրոյցի համար համեմատութիւնը լազերի թագաւոր Ջամնասկի (Դամնասի) որդի Յաթիայի կամ Յաթայի դարձի: Նա Կոստանդնուպօլսում ընդունեց քրիստոնէութիւնը, ամուսնացաւ Բիզանդական մի բարձրաս-

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

Թերցման միջ, ինչպէս ցոյց է արուած, մենք ունենք այդ իսկ լա-  
 գերի երկրի յունարէն անուան վրացական ձևը. ըսյց աշխարհա-  
 գրական անունների հետ այդպիսի վերաբերմունք օտար չէ յոյն  
 ընագրին էլ: Վերջապէս յիշատակարանում խօսքը յատկապէս  
 լագերի և լագիքի մասին է այլ ոչ իսկական Աքխազների մասին: Նա-  
 լագիքը մի որոշ ժամանակ ընդգրկում էր ոչ միայն այժմեան  
 լագիստանը այլև Սև ծովի արևելեան ափը այժմեան Գուրի-  
 այի, Մնգրելիայի և անգամ Իմերեթիայի հետ միասին: Յու-  
 նական լագի կամ լագի, հելլենացած ձևով պահպանուել է  
 տեղական լագ(ն)ի laz(n)i տերմինը, որը իւր հերթին կարելի է  
 մեկնել որպէս երկրի անուան քաւառական ձև zän (զան) ար-  
 մատից la (լա) յօդով: Սուաներէնում այժմ էլ Մնգրելիան  
 սովորաբար զան (zän) է կոչուում. (իսկապէս զան սկզբում  
 նշանակում էր անձն, ժողովուրդ, ըսյց ոչ երկիր, ըստ այսմ,  
 յոգնակի զանար մնգրելցիներ), մու-զն-ի (mu-zn-i) մնգրելցի  
 լու-զն-ի (lu-zn-u) մնգրելական: Սրանով սակայն հիմք չըկայ,  
 ի հարկէ ոչ ստուգաբանօրէն և ոչ էլ դործնապէս նոյնացնել  
 «լագ և «մնգրելցի» (փոխուած) «մնգրէլ» տերմինները: Այստեղ  
 պարզապէս դործ ունենք ցեղակից ժողովրդի քաղաքականապէս  
 վերածնուած թեան հետևանքի հետ, մի ժողովրդի անունը դէպի միւս  
 ժողովուրդը փոխանցելով: Վրաստանում էլ մօտ է. դարում  
 «արխազներ» տերմինը արևմտեան, յատկապէս Իմերեթիայի և  
 Մնգրելիայի, վրաստանի նշանակութիւն էր ստացել: Մինչդեռ  
 լեզու արանօրէն «մեզրել» (մնգրելցի) նշանակում է, ինչպէս  
 այժմ կը տեսնենք, «իվեր»:

Օտարները, ամենից առաջ հին ազգերը՝ Կովկասի աշխար-  
 հագրական տեղական անունները կամ փոխիւել են կամ թարգ-  
 մանել: Վրաց լեզուի առողջանութիւնը, որ զարգացել է ցեղա-  
 կից սեմական լեզուներին հետ աւնչաբար, հնարաւոր է դարձնում

տիճան մարդու այջկայ հետ. եւ ստանալով (Յ18—Յ21) Յուստինիանոսից  
 հիկիդեցական իշխանութեան նշանները, վերագործու կնոջ հետ հայրենիք՝  
 Թագաւորելու (Дестувицеъ, Прокоп. и пр. եր. 454. ծան.): Ընդհանրա-  
 պէս բրիտոնէութիւնը լագի բնաւ աւելի վաղ: Զ. դարի սկզբում գուցէ  
 եւ ե.-ում լագերը երուսաղէսում վանք ունէին: Ա.ա կարելի է եզրա-  
 կացնել այն փաստից, որ Յուստինիանոսը երուսաղէսի անապատում  
 նորոգեց լագերի տաճարը. որ այդ ժամանակ հաւանական է, հնացել էր,  
 (Прокопій, De aedificiis, V, 9):

1) Համ. Սուաներէն մուրքվամ (murkvam) աշտարակ. լամուրքվամ  
 (lamurkvam) աշտարակի տեղ: Այժմեան սվաներէնում աշխարհագրական  
 տերմինների միջ լա (la)-ի փոխանակ լէ (le) ենք դտնում:

Generated for alium (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

«Իվերիա» աշխարհագրական տերմինի կովկասեան նախաստիպը դուրս բերել, տերմինի, որ յաջողել է իւր բնագաւառում ոչ միայն փոփոխուել, այլ և զանազան ձևեր ընդունել ժամանակի կամ տարածման՝ այսինքն, տեղական բարբառների զարգացման համեմատ: Այստեղ այժմ հարկ է յիշեալ տերմինի բացադրութիւնը տալ. որովհետև նա իւր հերթին հնարաւորութիւն է աւելիս, Ս. Գրիգորի գործերի արաբական վերսկայի մի տեղեկութեան հակառակ-պատմական. հիմքը նշմարել: Յոյն Իվերիա և իվերէս փոխ. իվերօի տերմինների բացատրութեան փորձերի պատմութեան չեմ կպչում: Միայն փաստն եմ պարզում, որ յոյները վրացիներին և Վրաստանը այդպէս են կոչում, ի զարմանս վրացիների, և յոյների հետևողութեամբ նոյն կոչումը տալիս են հայերն էլ, սղելով բառակազմի անշեշտ Ի ձայնաւորը = Վերբ<sup>1)</sup>: Յատկապէս որ հայերն էլ գործ են ածում այդ տերմինը, կարող է առանձին իմն զարմանք առաջ բերել, որովհետև հայերը, թւում է, թէ պէտք է իմանային, որ վրացիք իրանց աշխարհը «Քարթլ էին անուանում (Քարթլ-ի Քարթլ-ի խօսքից. Սաքարթվելօ յետնագոյն ազգային — կուլտուրական, և աւելի շուտ, քաղաքական տերմին է), իսկ իրանց կոչում էին «Քարթուէլ-ի» ներ: Բայց վրացիներն էլ ի փոխարէն՝ ի զարմանս հայերի՝ որանց կոչում են «Սոմեխ-ի» ներ, իսկ աշխարհը՝ Սոմեխ-ի (Սոմեխիա): Հայերի զարմանքից, այս դէպքում, չի կարելի մասն չհանել իրանց պատմական տեղագրութիւնը գիտեցող վրացիներին էլ, որովհետև անկասկած է, որ իս վերջացած անունները ինչպէս Կախի Մես-իւ-ի, Կօլ-իւ-ի Մաս-իւ-ի Ջաւա-իւ-ի և այլն, յատուկ են վրացական ցեղերին որպէս գեղ նշանակող տեղանուն: Բայց բանն այն է, որ վրացիները հայերի հետ աւաջին անգամ ծանօթացան վրացական Ասմեխ գաւառում բնակած իրանց ցեղակիցների միջոցով և այդ գաւառի բնիկ վրացի ժողովրդի անունը փոխանցեցին հայերի վերայ: Այս միակ դէպքը չէ վրացիների հետ: Վրացիները իրանց կենդանի լեզուի և մինչև անգամ իրանց հին գրականութեան մէջ էլ, (անկախ գրոց տերմինից) յոյներին կոչում են ոչ թէ հայերի պէս յոնիացիք, հելլեններ և կամ գրեկներ, այլ «բերձէններ» (բերձէն-ի):

Այս զարմանալի կոչումն, անկասկած, տեղական վրացական է. և, ի կատարեալ զարմանս, յատկապէս վրացի այն ցեղի կոչումն, սրի միջոցով արևելեան վրացիները ծանօ-

1) Խորհնացու աշխարհագրութեան մէջ Իվերիա փոխուած է: Վերիա = Veria.

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

թացել են յոյների հետ: Միայն արևելեան վրացիները կարող էին առաջին անգամ տալ այդ անունին այդպիսի օտարոտի նշանակութիւն: Ձ-ի և ի-ի մէջ դրուած է տեղ, երկիր ցոյց տուող եւ յօղը յոգնականացուցիչ վերջաւորութեամբ (լրիւ՝ եւ-en, կրճատ՝ ն-n), ըստ նշանակութեան՝ համանիշ վրացական ք (խ) շ, և այլն վերջաւորութեան: Բեր-ձ—իսկական արմատից, առանց (էն) յոգնականացուցիչ վերջաւորութեան կազմուել է բեր-ձ-ուլի—ածական հին ձևը, որ նշանակում է յունական: Արդեօք ձ-ի և վրացերէն որդի նշանակող ձե-ի մէջ առնչութիւն կ'սկսի, այս րօպէիս չեմ կարող հաստատել: Իրողութիւնն այն է, որ մեր աշխարհագրական տերմինն հիմքն է բեր (ber), իսկ արմատը բր (br): Միւս հնչիւնական ձևը այս բր (br) երկտառ արմատի է մր (mr): Իմեր-էթ-ի աշխարհագրական տերմինի մէջ մենք ունենք աշխարհ նշանակող եթ սովորական վերջաւորութեան վրացերէն ձևը. իսկ Իմեր-էլ-ի ազգագրական տերմինի մէջ—ցեղ նշանակող ել սովորական վերջաւորութեան վրացերէն ձևը, սրա մը արմատի իմեր կազմից: Արմատը ինքն ըստ ինքեան նշանակում էր սկզբում ժողովուրդ. այս իմեր արմատը ն (n) յոգնականացուցիչ վերջաւորութեամբ գործ է ածուում իմեր-ն-ի ժողովրդի անուն նշանակութեամբ. սրանից պարզ է, որ իմեր բառը ամենևին չի նշանակում «այն կողմ» (յայն կոյս), իմեր բառը չի կարելի նոյնացնել վրացերէն նոյն նշանակութիւնը ունեցող բառի հետ, որը ի դէպ, հնչում է իմիեր և ոչ իմեր (համ. Усларъ, Древнѣйшія сказанія о Кавказѣ, Եր. 303): Բացի սրանից, չի կարելի Իմերեթիայի կոչումը բացատրել կարտալինցիների տեսակէտով, որոնց համար Սուբամի բարձրաւանդակի ետեւի ամբողջ արևմտեան կողմը կոչուում է «Այն կողմը»: Այս արևմտեան կողմի վրացական այլ ցեղերը, ինչպէս մնգրեցիները, գուրիացիները, իրանց երկիրը ամենևին իմերեթներ (իմերեթեցի) չեն կոչում: Այդ սահմանափակ շրջանի տեղական էտնօգրաֆիական անուն է: Ի հարկէ իմերները հնումն աւելի ընդարձակ տարածութիւն էին գրաւում. նրանց անունը, որպէս փշրանք, պահպանուել է Բաթումի նահանգի մի գաւառաւանդում (Իմեր-խեւ, որ նշանակում է, Իմերեան կիրճ), նոյն իսկ պատմական աշխարհագրութիւնից գիտենք, որ Իմերեթիա և Մնգրեթիա տերմինները նոյնացած էին, այդ բանի համար կայ ինչպէս կը տեսնենք, լեզուաբանական հիմք. սակայն իմեր-ը է ընդհանուր տեղային տերմինի կրճատուած հին ձևերից մէկը, որը պահպանել է որպէս մնացորդ մի որոշ, սահմանափակ առանձնացած շրջան: Իմեր տերմինի անթերի և հին ձևը կըլինի Յիմեր, փոխ. Յիրեր:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google



Վրացերէն արմատները մեծ մասամբ եռատու են, բազմ-  
 կացած երեք բաղաձայններէց: Երբ այս չափից պակաս է, այդ  
 այն պատճառով է, որ նոր ժամանակներում անհետացել կամ  
 սղուել են կրօնաձայն կամ թոյլ կոկորդային տառերը. օրինակ  
 յ, եթէ նրանք չեն պահպանուել իրանց համապատասխան  
 շշող (յ-ին համապատասխան է գալիս ս), կամ չեն թանձրացել  
 համապատասխան կոշտ (յ-ի համար՝ իս, գ.) բաղաձայնի փոխուելով  
 (համ. արասիւի, փոխ. արբազի արագգի): Փոխանակ յիմեր-ի իմեր  
 բառի մէջ կրկնուում է նոյնպիսի երկտառի դէպքը, նոյնպէս և  
 յբեր-ի տեղ՝ բերս Վերջին ձևը կանոնաւորապէս յ-ն ս-ի փոխուե-  
 լով՝ (սբեր), հանգէս է եկել Սպեր աշխարհագրական տերմինը.  
 Սպերը և՛ հայ և՛ վրացի Բագրատունիների ցեղական կալուածքի և  
 քաղաքի անունն է, որ գտնուում է ձորոխի վերին հասանքի  
 մօտ: Հարկ չկայ բացատրել, որ Սպեր կամ Սպիր, փոխ. Իսպեր  
 (Յիսպեր) կամ Իսպիր (Յի-Սպիր) գաւառը հնում աւելի ընդարձակ  
 տարածութիւն էր գրաւում: Եւ նոյն տերմինն էլ տեսնում ենք  
 յունական Սիւ-սպիր-իտ-իտ-ի մէջ, ուր սիւ է հոմանիշը վրացերէն  
 սի նախդրի փոխ (յ) ի՛ անդ ցոյց տուող անունների մէջ, իսկ  
 իթ-ը երկիր, կողմն նշանակող իթ, էթ վերջաւորութիւնների գու-  
 կորդն է: Սպեր տերմինի ուրիշ ձևերն էլ դեռ կան, որ պահպա-  
 նել են ուրիշ շեղումները, բայց այստեղ շտապում եմ պարզելու  
 յբեր իսկապէս յվեր ձևի գլխաւոր գաւառական շառաւիղները,  
 որովհետև յեանի ժամանակում վ-ի փոխ. մ-ի՛ կոշտ բ գառ-  
 նալիս, վրացերէն հնչման համեմատ, պահանջուում է շրթնային  
 վ-ն դնել բառի սկիզբը կամ երկու ձայնաւորների միջև: Նոյն  
 հնչման համեմատ էլ, կանոնաւոր է, ինչպէս ցոյց է տրուած  
 յ-ի՛ գ գառնալը. այսինքն կանոնաւոր է յվեր-ի տեղ գվեր ձևը:  
 Սակայն տեղական բարբառները վարդացման նոյն շրջանում  
 կանգ չառան, երբ ժողովրդի շրթունքներում յեղյեղուում էր  
 գվեր-ի բարբառային դանազանութիւնը, այլ նրանց շարունակող  
 կեանքում վ-ն կամ դուրս ձգուեց (օրինակ գեր) կամ վ-ն դարձաւ  
 ու (դուր): Թէ այս և թէ այն ձևը գտնուում ենք տեղական  
 աշխարհագրական անունների մէջ: Գեր արմատից կազմուած է  
 այն տեղի անունը, ուր բնակուում են գեր-երը, փոխ. գվեր-ները  
 կամ իվեր-ները. Ե նախդրի միջոցով՝ Եգեր: Այդ անունից  
 կազմուած է սովորական մ նախդիրով, էլ վերջաւորութեամբ  
 և Ե կրօնաձայնի սղմամբ մ-եգր-էլ-ն մնորեցի, ինչպէս Եգրպտ-  
 մ-եգրպտ-էլ-ի՛ Եգրպտացի: Այժմ վրացիները մի միայն Մնգրե-  
 լիայում բնակողներն են մնորեցի համարում. բայց վրացա-  
 կան հին յիշատակարաններից երևում է, որ վրացիներն՝ Եգեր  
 տերմինի աւելի ընդարձակ նշանակութիւնն էր յայտնի: Այդ

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google



բառից առաջ է եկել Եգր-իս-ի անունը, որով հասկացուում էր ամբողջ արևմտեան Վրաստանը, մէջ առնելով այժմեան Իմերեթիան, Գուրիան, Իմեր—Խևին և այլն: Եգեր աշխարհի անունը անդիոփոխ պահպանուած է Մովսէս Խորենացու աշխարհագրութեան մէջ (հրատ Պատկանեանի, 6, 16, 17): Ը.—Թ. դարի այս աշխարհագիրը, ի հարկէ գործ է ածում այդ որպէս աերմրն, Վերջից տարբեր, որ իրանից շատ առաջ յատկացուած էր Վրաստանին, ըսյց նա այնուամենայնիւ Եգերքին աւելի ընդարձակ մեկնութիւն է տալիս, նրա կազմի մէջ թուելով Լաղերին և ճաներին, այսինքն՝ այսպէս կամ այնպէս նրա սահմանը մօտեցնելով իսկական վրացիների ընտանիքային հարաւային սահմաններին: Երկրի այդ անունից ծագել է Եգեր—ացիք հայերէն կոչումը այն ժողովրդի, որ զետեղուած է Հայաստանի հիւսիս արևմտեան կողմում պոնտոսիների հետ (Մ. Խորենացի, պատմ. Բ. 6): Բաւական առաջ, Եգեր-ը յիշուում է Փաւստոսի մէջ (դ. 7) սուանների հետ (Եգեր-սուանք): Մի ուրիշ ձևը ունենք կոչա զ. -ով (զվեր-գուր) Գուրիա գաւառի կոչման մէջ: Այդ անունի մէջ, որ դուրս է եկել Գվերիա-ից, կայ իա վերջաւորութիւնն էլ ինչպէս Իվերիա-յի մէջ է: Արևմտեան Անդրկովկասում, քաղաքական միութիւն կազմող երբեմն շատ աւելի յայտնի վրացական այս ցեղի կամ լաւ ևս ցեղերի անուան բարբառային տեղական այլ և այլ տարբերութիւնները հենց տեղումը ճշդելու համար շատ նիւթեր կան: Առայժմ բաւականանում եմ մերձաւոր եզրակացութեամբ. 1. հարաւ արևմտեան կողմում ապրող վրաց ցեղակից ժողովուրդներին էլ, արևելեան քարթվէլներին էլ յոյները (իվերիո) և նրանցից առնելով՝ հայերը «վերք» են կոչում: 2. Վրացական ժողովրդի անուան բեր-արմատի վերայ աւելացնելով ցեղ նշանակող տեղական գաւառական ձ-էն վերջաւորութիւնը, վրացիներն էլ, յատկապէս արևելեան վրացիները—քարթուէլները յոյներին, այսինքն համապատասխան սահմանակից երկրի յոյներին անուանում էին (բեր-ձեց-ի): Հետևապէս, պարզուում է, որ իվերացիներ անուամբ պէտք է հասկանալ, այս բառի տեղական, ազգագրական նշանակութեամբ, ոչ թէ արևելեան, այլ արևմտեան վրացիներ, աւելի ճիշդ՝ միջերկրեայ, այսինքն, ծովափնեայ լաղերից յետոյ վրացական ցեղերի երկրորդ շարքը, ցեղերի, որոնք անմիջապէս կից են լաղերին և զետեղուած են Կովկասի ներքին շերտի վերայ կոր գծով Սպերից մինչև Սուանեթիան, հետևաբար պարփակելով, եթէ ոչ ամբողջ այժմեան Մնգրելիան, անշուշտ նրա մեծագոյն մասը: Այս ցեղակից իվերական երկրի նշանաւոր մասը արևելեան վրացիները—քարթվէլները—լեզուով միացրել են իրանց

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

հետ, մասնակից անելով նրան քարթվելական քրիստոնէական կուլտուրային, որ այժմ, վաղուց, շատ վաղուց դարձել է համալրարարական ազգային: Սկզբում, մօտաւորապէս մինչև 2.—է. դարը իվերական երկիրը հաւանօրէն պահպանել էր ամբողջովին իւր լեզուային առանձնութիւնը, քրիստոնէական կուլտուրայի վերաբերութեամբ այս իվերացիք լազերի հետ միասին, արևելեան վրացիներից—քարվէլներից տարբերուելու համար, (որի զանազան ապացոյցները կան), իսկզբանէ գտնուում էին յոյն հիւնդեցու հետ քսացառիկ և անմիջական հաղորդակցութեան մէջ: Ըստ երևութին, այս իվերացիք էլ իրանց արևելեան եղբայրակիցների համար հարթեցին ճանապարհը դէպի Սուրբ Երկիրը: Գուցէ այս իվերներից է առաջ եկել Երուսաղէմում ե. դարում իվերական վանք հիմնող Պետրոս Մայուսմացին, որը մինչև ժ. դարի վերջը յայտնի չէր արևելեան վրացիներին—աննաշնորհ. (Н. Марръ, Житіе Петра Ивера. եր. X.): Ամենայն հաւանականութեամբ այս իվերացիների վանքերն էլ Ս. Երկրում նորոգեց Յուստինիանոսը (Прокопій, De aed, V. 9) միաժամանակ լազերի վանքի հետ (նայել վերև. ծան. եր. 165 ծն. 4 սոյն թարգ. եր. 106 ծն. 3.): Աննայում էլ նկատում ենք լազերի երևումն իվերացիների հետ զուգընթացաբար. լազերը գաղթել են այնտեղ, տեղական աւանդութեան համեմատ, վանքին սպասաւորելու համար (А. А. Васильевъ, Поѣздка на Синай въ 1902 году СПб. 1904, եր. 47), իսկ իվերացիները գաղթել են որպէս, արևմտեան վրացիներից առանձին իմն յարգուած, Սեբաստիայի քառասուն մանկանց վանքի կառուցանողներ (Пор. Успекскій, первое путешествие въ Синайскій монастырь, 1856, եր. 195): Այս իսկ իվերացիք էլ լազերի հետ սկսել են, ամենայն հաւանականութեամբ, յետին ժամանակներում ներմուծել վրաց ազգային գրականութեան մէջ յունաց եկեղեցական ուղղութիւն: Նրանք էլ, բնականաբար, դարձան յունաց կայսերական դաւանութեան՝ քաղկեդոնականութեան—տարածողները ցեղակից ժողովուրդների մէջ: Այդ հեռաւոր ժամանակին, յոյն եկեղեցական ազգեցութիւնը, իհարկէ, յոյն կայսերական լեզուի հետ գրաւել էր սվաններին էլ<sup>1</sup>: Սվաներէնում պահ-

1. Կիրիլլի եւ Մեֆօղի հին սլաւոներէն վարքի համեմատ արիագները (աւասոները) ունէին տեղական եկեղեցական լեզու (Marquart, յիշ. յօդ. եր. 190)՝ սակայն այս վկայութիւնը վերաբերում է այն ժամանակին, երբ արիագները, որպէս կոչուում էին այդ ժամանակ արեւմտեան վրացիք, յիբաւի, ունէին եկեղեցական գրչութիւն, բայց այն արդէն վրացերէն էր:

պանուել են բացառապէս յունական եկեղեցական ազդեցութեան հետաքրքիր հետքեր. օրինակ՝ Սվանները իրանց ժողովրդական լեզուով քահանային կոչում են բապ (յունարէն պապան—), շաբաթը՝ սաֆաէն (յուն. սաբբատօն), մինչդեռ վրաց գրականութեան մէջ սեպհական բառերն են— առաջինի համար՝ մղդել-ի կամ խութէս-ի, իսկ երկրորդի համար կարողացել են պահպանել նոյն բառի արևելեան ձևը շաբաթ-ի (հայերէն շաբաթ, սիրիական և եբրայական բառից), որ Հայաստանի միջոցով մտել է Վրաստան դեռ սիրիական եկեղեցուց: Հաւանականօրէն այսպիսի յունական ծագումն ունի ժողովրդական ասացուածքների մէջ մտած սվանական ստամոն բառը, որ սափոր է նշանակում և բովանդակում է 5—6 շիշ: Այս, անկասկած, յունարէն ստամոնս բառն է որ կառէ սափոր է նշանակում և յասկապէս՝ դինու սափոր, որ պահպանուած է ոչ միայն յունական ազդեցութեան ենթարկուած վրաց Ս. Գրքում (Մարկ. է, 4, 8) այլ և յունարէն բնագրով ուղղուած Ս. Գրքի հայ օրինակում, օրինակ՝ Մարկ. է. 4. ստամոն ձևով: Մինչև որ կը տարբանար ցեղակից քարթուէլները ազգային կուլտուրական տիրապետութիւնը լազերի և իվերացիների մէջ, այդ տեղ յոյն եկեղեցական ազդեցութեան ոյժը շատ զօրեղ է եղել: Այդ հին ազդեցութեամբ էլ պէտք է բացատրել յունական բառերի բաւական մեծ քանակի ներկայութիւնը լազերի այն մասի մայրենի լեզուի մէջ, որ մասը չէ յարել ցեղակից վրացիների կուլտուրական շարժմանը, և բնականաբար, հարկադրուել է մի կայսերական քրիստոնէական դաւանութիւնը իւր օտար յունական եկեղեցական լեզուի հետ միասին փոխել մի ուրիշ կայսերական, մուսուլմանական դաւանութեան, իրանց, լազերի համար օտար, արաբ և թուրք լեզուներով: Թէև արևմտեան լազերը հաւատարիմ են մնացել քրիստոնէական հաւատին, բայց ազգայնապէս այլասեռուել են, բոլորովին յոյն դարձել: Գործի այս իրական հանգամանքով աւելի հասկանալի է դառնում, որ յոյն Պրօկոպիոս գրողը որպէս քրիստոնէաների՝ նոյնացնում է լազերին և իվերացիներին. «այս ժողովուրդը քրիստոնէայ է», կարդում ենք Պրօկոպիոսի մէջ «և նա քրիստոնէական դաւանութեան կարգերը մեզ յայտնի բոլոր ժողովուրդներից աւելի լաւ է պահում» (Перс. В., I. 12, էր. 57): «Լազերը», գրում է նոյն պատմիչը, «աւելի լաւ քրիստոնէաներ են», բառացի, «բոլորից աւելի քրիստոնէայ են» (Дестуниецъ. Прокл. Кесар. Исторія войнъ и այլն I, էր. 140): Այս ամեն յիշածներս ի նկատի ունենալով հետաքրքիր է, որ առաջին միարոպօլտի անունը, որին Ս. Գրիգորը ուղարկեց «Վրացիների»

այսինքն Իվերացիները-Մնգրեցիները մօտ Իբիր-ք-գ-լս-ու-ա (ուսու հրատ. եր. 137, 9, սոյն թարգ. եր. 70, 29) մնգրե-լական ազգանուն (Ֆամիլիա) ձև է ներկայացնում, բար-դուած մնգրեական գ-լս-ու-ա բառով, այսինքն սքուա (squa) որ մնգրեերէն նշանակում է որդի<sup>1)</sup>: Եւ, որ կարեորն է, այս առաջին հովուապետի մերձաւոր առնչութիւնը Սեբաստիայի քառասուն մանկանց, նրա ներկայութիւնը նրանց նշխարների գիւտի ժամանակ (ուսու հրատ. եր. 137, 13 սոյն թարգ. եր. 70, 27) հնարաւորութիւն է տալիս բացատրելու Մնգրեիայի գլխաւոր սրբութեան—այն է Մարտվիլի-ի վանքի անունը: Ամենքը լաւ հասկանում էին, որ «Մարտվիլի» յու-նարէն μάρτυρ-մարտիրոս, նահատակ-բառի վրացերէն կանո-նաւոր փոխադրութիւնն է, իսկ Մարտվիլի տաճարը Ս. Աս-տուածածնի վերափոխման է նուիրուած. և վանքի անունը իսկապէս անհասկանալի էր երևում: Նատ հաւանական է, որ վրացիների, յատկապէս իվերացի-մնգրեցիների առաջին միտրո-պօլիտը, որ այնքան մօտ առնչութիւն ունէր Սեբաստիայի նա-հատակների նշխարների գիւտի գործին, իւր առաջին եկեղեցին կառոյցի պատիւ Սեբաստիայի նահատակների: Դիւրուան ասում է, որ Մարտուիլի եկեղեցին կառուցուած է հեթանոսական բա-գինի տեղում (Дм. Бакрадзе, Кавказъ въ древнихъ памятникахъ христіанства. եր. 96): Ի հարկէ, այդ դեռ մեծ փաստ չէ, որ Մար-տվիլում անպատճառ տեսնենք Սեբաստիայի ս. նահատակների տաճար: Ի դէպ, մեր նպատակի համար բաւական է մտաբերել Իվերիա Մնգրեցիայի մի ուրիշ եկեղեցի Մարտվիլին հարևան, Նա-քալաքեւի աւանում, որը ճշգրիտ համար հետախոյզները մերձե-նում են կլասիքական տեղեկութիւնների հայեցակէտով, տեղե-կութիւնների, որոնք դեռ նախապէս քննուած չեն տեղական աշ-

1) Ամենայն հաւանականութեամբ իբիր-ք-ի արմատն էլ տեղական ծաղումն ունի: Յոյց տամ նրա մի հնարաւոր բացատրութիւնը: Արա-բական բնագրում արմատի ձեւն է իսկապէս բ-ի-ր-ք (B-Y-r-B) որը կարելի է առանց որեւէ դժուարութեան կարդալ ի-բ-ի-ր-ք (i-B-yi-r-eb) այսինքն իվեր յոգնականացուցիչ եր. փոխ. եպ տեղական վերջաւոր-ութեան. որովհետեւ արաբերէնում պ հնչիւնի իսկական նշան չը կայ: Այդ վերջաւորութիւնը լազերէնում այժմ եպ-է հնչում, մնգրեցիներէն —իվերերէն՝ էֆ. եւ վրացերէն-քարթվելերէն՝ եբ: Այսպիսի բացատրու-թեամբ Իբիր-ք-վսուա, փոխ. Իբերք-վսուա կը նշանակէր «Իվերացոյ որդի», այսինքն իվերացի, եւ յիրաւի, արաբական վերսիայում էլ տեղեկութիւն է տրուում, որ այդ միտրոպօլիտը վրացի փոխ. իվերացի էր.

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

խարհագրութեան, ազգագրութեան, լեզուական և քրիստոնէական կուլտուրայի չափազանց բարդ հարցերում:

Մուրավիեվի ասելով (յիշ. յօդ. II. եր. 268—269), նա քալաքեյուում կարելի է տեսնել միակ եկեղեցին, որ շէն է մնացել աւերակների մէջ: Նա կառուցուած է մասամբ անտաշ քարով, մասամբ աղիւտով, և իւր բիւզանդական ձևերով խորին հնութիւն է երևում: Կարելի է համաձայնել ուսումնական ճանապարհորդներին կարծիքին, որոնք այդ եկեղեցին վերագրում են Յուստինիանոսի ժամանակին, որովհետև Պրօկոպիոսի պատմութեամբ յայտնի է, որ նա լազերի մօտ եկեղեցի շինեց, երբ նրանց թագաւորը քրիստոնեայ դարձաւ 4): ուրեմն, այս եկեղեցին շուրջ վեցերորդ դարից է և հաւանօրէն նուիրուած էր Աստուածամօր անուանը, ինչպէս է Յուստինիանոսի շինած եկեղեցիների մեծ մասը: Բայց այստեղ նա կրում է քառասուն նահատակների անունը, որովհետև աջ կողմում ցոյց են տալիս քառասուն շրջանակներ, յատակի վերայ ուղիղ դասաւորուած, ուր, որպէս թէ թաղուած են Սեբաստիայի նահատակները սրբազան նշխարները: Տեղական աւանդութիւնը մինչև անգամ քառասուն նահատակների լիճ է անուանում Տեխուրա գետի այն գեղատեսիլ մասը, որով մենք հիանում էինք, և հաստատում է, իբր թէ, նրանք այնտեղ են չարչարուել: Սակայն պէտք է որ մի հիմք ունենայ այդպիսի աւանդութիւնը: Մուրավիեվի վերջին ենթադրութիւնը բոլորովին ուղիղ է: Այս աւանդութիւնը ամենայն հաւանականութեամբ կապ ունի Իվերիայում քրիստոնէութեան սկզբնաւորութեան այն պատմութեան հետ, որը պահպանել է մեր համար Ս. Գրիգորի մասին զրոյցի արաբական վերսիան, (ուրս հրատ. 137. 9. սոյն թարգ. 70. 27): Դրա հետ կապ ունի (ուրս հրատ. եր. 147. 15, սոյն թարգ. եր. 80. 27). և այն՝ որ քառասուն նահատակների եկեղեցու որմերի նկարների մէջ, «մոռացուած չեն Կոստանտինն ու Հեղինէն, որոնք պատահում են Մագրեչիայի և Իմբրեթիայի բոլոր եկեղեցիներում» (Մուրավիեվ, յիշ. յօդ. եր. 270): Այսպիսի հանգամանքում հասկանալի է, որ Մարտիկ կոչումն էլ բացատրւում է նրա առաջին եկեղեցու կառուցմամբ ի պատիւ նոյնպէս քառասուն նահատակների կամ, գուցէ, Ս. Յովհաննու Կարապետի, որի մատը գտնւում է այդ

4) Մուրավիեվը այստեղ արխիւներին լազերի հետ է շփոթում:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

վանքի աւանդատանը (յիշ. յօդ. եր. 253): Յովհաննու Կարապետի և Քառասուն Նահատակների պաշտամունքը, որ ներմուծել է Իվերա Ս. Գրիգորից ձեռնադրուած առաջին միտրոպոլիտը, հետևողութիւնը կը լինէր հայերի հին յարգանքի առ Յովհաննէս Կարապետ, առ Աթանազինէ նոյնպէս և առ Քառասուն Նահատակները, որոնց նշխարները Հայաստան բերեց ինքն Ս. Գրիգորը: Հետաքրքիր հնագոյն յիշատակարանը Մարտվիլում է «գուցէ Ը. դարից էմալի մի նմուշ», որ փոքրիկ պատկերի մի կտոր է Յիսուսի նկարով: Յովհաննէս Կարապետը երկրպագութիւն է անում պատուանդանի վերայ կանգնած Փրկչին, երկու ձեռքը մեկնելով Նրան (Н. КОИДАКОВЪ, յիշ. յօդ. 74): Ի հարկէ, ոչ մեր արաբական վերսիան և ոչ էլ նրա յունարէն ընագիրը չեն կարող վերաբերուել իսկական Իվերացիների ընակութիւն հաստատելու ժամանակին. բայց անկասկած, այդ արաբական վերսիայի մէջ ընկել են իրականութեան ... ճագանքներ, որ յառաջ են եկել մի որ և է աւելի հին, Իվերիա-Մնգրելիայի մասին տեղական աշխարհագրական մանրամասնութեան և տեղեկան եկեղեցական ուղղութեան շրջանում՝ լաւ տեղեկ աղբիւրից: Արաբական թարգմանութեամբ ներկայ խմբագրութեան հեղինակն էլ, ամենայն հաւանականութեամբ, ինկատի ունի բոլոր վրացիներին:

Յիշատակարանի թուականը ճշգելու համար ես աւելի կը յենուէի այն բանի վերայ, որ վարքագրութիւն կազմողը Գուինի վերայ նայում է որպէս մի հասարակ եպիպկոպոսական աթոռի վերայ (ռուս. հրատ. եր. 139, 15. սոյն թարգ. եր. 72, 30), բայց Գուինի մասին հարեանցի ասուածի մէջ էլ կայ թէութեան և անաքոնիզմի (սխալ ժամանակագրութեան) մասն: Յիշատակարանի ժամանակը լաւ ճշգող կարող է լինել և այն ցուցմունքը, թէ հայոց եկեղեցում էրբ է սկսել յիշատակուել Կոստանտին և նրա մօր անունը: Հեղինակը այս բանը այնպէս է յայտնում, որպէս թէ կամենում է արգարացնել մի որ և է նորամուծութիւն (ռուս. հրատ. 147, 15, -16. սոյն թարգ. 80, 27-30): Սակայն արաբական վերսիայում իսկոյն աչքի է ընկնում արտաքին, անկախ մի ցուցմունք, որ վճռապէս խօսում է յօգուտ այն բանի, թէ նրա յունարէն ընագիր խմբագրութիւնը Է. - Ը. դարերից հին չէ: Այսպէս են վկայում աշխարհագրական մի կարգ անունների վրացական ձևերը:

Սոյն խմբագրութիւնը Ագաթանգեղոսից տարբերում է ոչ միայն առանձին մանրամասնութիւններով, այլ մասամբ և յօրինուածքով, օրինակ, քարոզը (եր. 101-107. սոյն թարգ. եր. 35-42) որ արաբական վերսիայում գրուած է Ս. Գրի-



գործի տեսիլքից և նրա մեկնութիւնից յետոյ (ռուս հրատ. եր. 99—101, սոյն թարգ. եր. 33—35), Ագաթանգեղոսը գետեղել է տեսիլքից առաջ: Եւ այս առաջ է եկել նրանից, որ Ագաթանգեղոսը մինչև տեսիլքը ներմուծել է վարդապետութեան մի ամբողջ գիրք (եր. 153—417): Միւս կողմից արաբական բնագրի միջ էլ տեսիլքից առաջ կայ Ս. Գրիգորի մի փոքր վարդապետութիւնը (ռուս հրատ. եր. 97—99, սոյն թարգ. 31—34). բայց ոչ ճիշդ համանման Ագաթանգեղոսի խմբագրութեան մէջ եղածին (տես Վերև ռուս հրատ. 162 եր. սոյն թարգ. եր. 101—102): Սակայն երկու խմբագրութիւններն ամբողջովին համեմատելու կարիք չը կայ. ցանկացողը ինքը կարող է այդ անել: Համեմատում եմ միայն մի քանի տեղերը, որոնք բնորոշում են այստեղ յարուցուած հարցերը:

1. Արաբական վերսիան հոգածութեամբ կրկնում է (ռուս հրատ. եր. 119, 25—26. սոյն թարգ. եր. 53, 32) տեղեկութիւններն այն մասին, թէ Ս. Գրիգորի նահատակութեան գործերի սկիզբը, բանտարկութեամբ և զանազան տանջանքներով, դրուել է Արդէն (Երէզ) մեծ քաղաքում: Հայ ազգային խմբագրութիւնը համապատշաճ տեղում բաց է թողնում այս հետաքրքիր, իրան էլ լաւ յայտնի (եր. 39—48) մանրամասնութիւնը, որ անկասկած, տեղական նահատակ Ս. Գրիգորի գործերի սկզբնական նկարագրութեան խեչերանքն է:

2. Արևմտեան Հայաստանի, Լազիքին և Իվերիային սահմանակից, ժայրագաւառի նահատակը դարձել է լուսաւորիչ սահմանակից ժողովուրդներին—հայերի, վրացիներին, լազերի (աբխազներին) և աղուանցիներին (ալաններին): Յոյնի կամ յունասէրի գրչի տակ յունական քարոզչի մասին զրոյցի այս բնական խոշորացումն լիովին պահպանուած է արաբական վերսիայի մէջ, մինչդեռ հայ ազգային խմբագրութեան մէջ մեր ուշագրութեան առաջարկուած է միայն իրանց—հայերի—մկրտութիւնը: Սակայն Հայաստանին հարևան ժողովուրդներին մկրտութիւնը Ս. Գրիգորի ձեռքով, յամենայն դէպս, յոյն խմբագրութեան առանձնացնող նորամուծութիւնը չէ, որ պահպանուել է արաբական վերսիայի մէջ: Այդ գիծը հաւանորէն յատուկ է եղել և այն ժամանակ, երբ տեղական քարոզչի գործերը լիովին սակերպուած էին ընդհանուր առաքելական գործունէութեան պատմութիւն, եթէ կամենում ենք ենթադրել, որ Ագաթանգեղոսը, բաց ի մեր արաբական վերսիայի բնագրից ուրիշ աղբիւր էլ է ունեցել: Նոյն գծի հետաքրքիր յիշատակութիւնը գտնուած ենք հայ ազգային խմբագրութեան մէջ էլ: Հայ խմբա-

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google



գրութեան հեղինակը յատկապէս թւում է ըստը յիշուած ժողովուրդների սահմանները և դեռ էլ աւել՝ որպէս Ս. Գրիգորի քարոզչական գործունէութեան շրջան, բայց այնպիսի ձևով, որպէս թէ խօսքը միայն Հայաստանի մասին լինէր<sup>1</sup>): Այս հեղինակը, որ յայտնի է Ագաթանգեղոս անունով, ներկայ բնագրում խուսափում է ժողովուրդների անունները տալուց. նա չի յիշում, օրինակ, վրացիներին, սլովհեաև, պէտք է կարծել, որ նրա ժամանակ արդէն վրացիները հակաքաղկեդոնական հայերի հետ ոչ միայն մի չէին, այլ եկեղեցու դաւանութեամբ էլ անջատուած էին: Կար մի ժամանակ, երբ վրացիների քրիստոնէայ դառնալը Ագաթանգեղոսի մէջ էլ կապուում էր Ս. Գրիգորի գործունէութեան հետ, բայց վրաց լուսաւորիչ Ս. Նունէի մասին զրոյցի միջոցով: Այս մասին մանրամասն տեղեկութիւն է տալիս Մ. Խորենացին (Բ. 86), յենուկով յանուանէ՝ Ագաթանգեղոսի պատմութեան վերայ, յատկապէս այնտեղի վերայ, որ քիչ վերև մէջ է բերուած. ուր, հաւանօրէն, յետին ժամանակներում Նունէի մասին դէպքը յապաւուելով, ստացուել է պատմական աշխարհագրութեան կատարել խեղաթիւրումն, ի մասնաւորի, Վրաստանի սահմանների մասերը դառնալով Հայաստանի սահման: Ըստ Մովսէս Խորենացու՝ Ագաթանգեղոսը Վրաստանի այս սահմանները վերագրում է Ս. Նունէի քարոզչական գործունէութեան շրջանին: Բացասական քննադատութիւնը այս դէպքումն էլ մեղադրում է Մովսէս Խորենացուն, որ նա անբարեխիղճ դիմումն է անում. բայց Մովսէս Խորենացին, այն ժամանակ էլ ինձ թւում է, ճշմարիտ էր, և նրա ճշմարտութիւնը այժմ աւելի ևս տեսանելի է, երբ հաստատուում է, ինչպէս ցոյց է տրուած (ռուս հրատ. 63—64. սոյն թարգ. 83—84) նրա միւս նոյնպէս անբարեխիղճ համարուած դիմումն Ագաթանգեղոսին:

1. 483—486. «Նւ այսպէս (Ս. Գրիգոր) ընդամենայն երկիրն Հայոց՝ ի ծագաց մինչև ի ծագս ձգէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն աւետարանութեան. ի Սատաղացոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտիաց. մինչև առ Կղարջօր. մինչև իսպառ ի սահմանս Մասքթաց (յոյն. տարբ. ընթերց. Կեւ Հոնաց») մինչև ի դրունս Այանաց. մինչև ի սահմանս Կասիից (յոյն ընթերց. ցղունս) ի Փայտակարան քաղաք արքայութեանն (ընդգծումն ռուս. հրատ.) Հայոց. եւ յԱմղացոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ. քերէր առ սահմանօրն Ասորոց. առ Նոր-Նիրական երկրաւն եւ առ Կորզլօր մինչև յաժուր երկիրն Մարաց. մինչև առ տամբն Մահրրտան իշխանին. (յոյն. տարբ. ընթերց. Մախուրտաց) մինչև յԱտրպատական ձգէր տարածանէր զաւետարանութիւն իւր»:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

Սակայն Ս. Նունէի դէպքն, որ Վրաստանի դարձը կապում է Հայաստանի հետ, է սկզբնական անկախ զրոյցների յետնագոյն յերկրանք, գուցէ և երկու եկեղեցիների որ և է ժամանակա-  
ւոր համակերպութեան արտայայտութիւն, եկեղեցիների, որոնք անջատուած էին արդէն, կամ վերջապէս մտել էին իւրաքան-  
չիւրը իւր անկախ զարգացման ճանապարհի մէջ:

3. Արաբական վերսիայում (ուս հրատ. եր. 147—148, սոյն թարգ. 81, 82), նոյնպէս և հայերէնից յոյն թարգմանու-  
թեան մէջ (եր. 85) Նիկիայի ժողովի կանոնները, որ բերել էր Արիստակէսը՝ Ս. Գրիգորը ընդունում է ուղղակի ի կերառու-  
թիւն: Արաբաց Գէորգ եպիսկոպոսի ասածին համեմատ, Գրի-  
գորը, որ իւր բարեհայեցողութեամբ առաջուց կանոններ ու  
կարգեր էր սահմանել, անձամբ է շտապում Նիկիայում գու-  
մարուելիք ժողովին (de Lagarde, An. Syr. եր. 123, 23—26),  
անկասկած, ժողովի վճիռները կերառութեան ընդունելու հա-  
մար 1): Ագաթանդեղոսի ընադրի հայկական խմբագրութեամբ  
Լուսաւորիչը նոյն «լուսափայլ» կանոններին յաւելումն է արել  
(«ի նոյն լուսաւորական կանոնն յաւելեալ» Ագաթ. եր:  
507, 22): Այստեղ ակներև է ջանքը, հաստատելու հայ ազ-  
գային եկեղեցու հին և նոր առանձնայատկութիւնների հնա-  
ւանդ լինելը, առանձնայատկութիւնների, որոնք օտար են յոյն  
եկեղեցուն, և որոնց ներմուծող ակամայ հանդիսանում է Ս.  
Գրիգորը 2):

4. Կայսերութեան հարևան երկրների յունական քարոզչի

1) Դրա համար էլ Գէորգ եպիսկոպոսը վրդովում է հայոց եկեղե-  
ցու առանձնայատկութեամբ, որը հաղորդութեան մէջ թոյլ է տալիս միայն  
անխառն զինի՝ Նա այսպէս վարուելու ապացոյցները վատաբանելով է մէջ  
բերում, (յիշ. յօդ. եր. 128, 3). բայց գործադրութիւնը ոչ յանցաւոր-  
թէեւ չի ընդունում, որ Հայաստան ներմուծած լինի անպատճառ Ս. Գրի-  
գորը միայն ենթադրում է զրա հնարաւորութիւնը. (յիշ. յօդ. 126. 23)

2) Ագաթանդեղոսի աւելագրութիւնը պատահական տարբեր ըն-  
թերցումնք չէ, յառաջացած առանց որ եւ է դիտման. կամ արտագրողի  
զրչից ընդհակառակն, հայ ազգային եկեղեցու շահերի պաշտպանութեան  
համար խմբագրական դիտաւորեալ սրբագրութիւն է, այնպէս ինչպէս  
այդ շահը հասկացում էր Ը. Թ. դարում: Դրա համար էլ, այն միտքը,  
թէ Ս. Գրիգորը Նիկիական կանոններին յաւելումներ է արել կրկնում է  
հայ ժողովների կանոնների հեղինակը. կանոնների հաւաքածուն կազ-  
մուած է. յամենայն դէպս՝ մշակուած է ազգային եկեղեցական, հակա-  
քաղկեդոնական հոգով, եւ վերագրում է Յովհան Իմաստասէրին (Գիրք  
Թղթոց. եր. 220):

դործունէութեան մասին զըոյցը ամբողջ Հայաստանի քրիստոնէական դարձի ազգային պատմութիւն դարձնելով և միանգամայն Ս. Գրիգորի միասնայի շրջանը էլ աւելի ընդարձակելով դէպ ի հարաւ, Ազատանգեղոսը ի հարկ է, չէր կարող հաշուի չառնել, թէև թոյլ կերպով, հայոց եկեղեցական գործի իսկական դրութիւնը: Նա չէր էլ կարող բոլորովին չափնելու տալ սիրիական ազգեցութիւնը: Եւ անհաշտելին հաշտեցնելու ձգտման հետևանքն այն եղաւ, որ կեսարիական յոյն եկեղեցու սան և արքանեակ Ս. Գրիգորի ղեկավարութեամբ, Հռովմում կրթութիւն ստացած Հայոց Տրդատ թագաւորը ժողովում է հայ մանուկներին ուսուցանելու մի մասին ասորերէն, մի մասին էլ յունարէն (484 եր.): Ս. Գրիգորի մասին արաբական վերսիայի մէջ սիրիական լեզուի բնաւին չը յիշուիլը աւելի հին երևոյթ է<sup>1)</sup>:

5. Կարծու՞մ է, որ սիրիական ազգեցութեամբ հայ դրականութեան մէջ մտած նիւթերի այսպիսի անհրաժեշտութիւնը կարող էր Ազատանգեղոսին թելադրել սիրիական Բարշամինս անունով աստուած զեաեղել Թորդանում (Ազատ. եր. 455—456), ուր, արաբական վերսիայի համեմատ (ուս. հրատ. եր. 119, 10—11. սոյն թարգ. 53, 8) Զևսի տաճարն էր: Յօգուտ այս բանի խօսում է մի հանգամանք էլ, այն է, որ արաբական վերսիայի մէջ սոյն տեղում մենք ունենք, Քորդանի մասին աւելի գիտակ անձի հաղորդած տեղեկութիւնը: Նա այս քաղաքի անունը տալիս է աւելի լրիւ և պէտք է կարծել, աւելի հին ձևով այն է Միթրոդան:

6. Հայ ազգայնական խմբագրութեան բնագրին է պատկանում հետևանոս աստուածները անունների ազգայնացնելը, այսինքն յունական անունները հայկականի վիտելը. սակայն այս համեմատաբար յեանագոյն ժամանակի երևոյթ է. որովհետև թէ՛ ազգային խմբագրութիւնից կատարուած յոյն թարգմանութիւնը և թէ՛ Ս. Խորենացու պատմութիւնը, ինչպէս և մեր արաբական վերսիան՝ յոյն անունները միայն գիտեն: Ս. Գրիգորի պատմութեան մէջ յունական անունների նախապատուութիւնը կապ ունի և այն բանի հետ, որ նոյն իսկ նրա ազգային խմբագրութեան, այսինքն, Ազատանգեղոսի մէջ էլ

1) Արարական վերսիայում խօսում է Արիոս եպիսկոպոսի մասին (ուս. հրատ. եր. 159, 3-4, սոյն թարգ. 72, 10-16), որ նա կրթուած էր զանազան գիտութիւնների մէջ հռոմոսների եւ «հեթանոսական» լեզուներով. այսինքն հաւանորէն հին յունարէն, Յամենայն դէպս ասորերէնի մասին այստեղ խօսք չի կարող լինել:

անունները ընդհանրապէս կրում են յունական վերջաւորութիւն, օրինակ նոյն ինքն Գրիգորի անունը, մինչև անգամ բուն հայկական անունները, որպիսի են Տրդատ, Վրդան՝ յունական ոս, իոս, էս, էն-վերջաւորութիւնն ունեն-Գրիգորիոս, Տրդատէս, Վրթանէս: Եւ այս չպէտք է վերագրել այն բանին, որ Ագաթանգեղոսը յունարէն բնագրի կամ յունարէն ո՛ր և է աղբիւրի ազդեցութեան տակ է եղել: Այս կախումն ունի այն բանից, որ առաջին խմբագրութիւնը կազմուել է հայերէն այնպիսի յունասէր գրողից, որ ապրելիս է եղել այնպիսի հաւ շրջանակում, ուր, անկախ գրական դաստիարակութիւնից, տարածուած էր հայ անունների յունացումն, ճիշդ այնպէս, ինչպէս մի ժամանակ Ռուսաստանի հայերի մէջ ընդունուած էր իրանց բուն ազգանունների եմց կամ եանց, եան վերջաւորութիւնը. ռուսական ով փոխելը<sup>1)</sup>:

7. Կարիք չկայ ասել, որ միայն հայ ազգային խմբագրութիւնն է զարգարուած ժողովրդական երգերով ու զրոյցներով. արաբական բնագրի խմբագրութեան մէջ չեն մտել Տրդատի մասին (Ագաթ. եր. 88,) ժողովրդական զրոյցների հատուածները, ժողովրդական արտայայտութիւնները հարսանեկան հանդէսների մասին «հարսանեաց զպարսն պարել և զկաքսուն յորդորել» (Ագաթ. եր. 112), Տրդատի Արարատ գնալու նկարագրութեան մէջ առասպելական դարձուածի հատուածը (Ագաթ. եր. 446), թէև նոյն ինքն Տրդատի անձնաւորութիւնն էլ, ամենայն հաւանականութեամբ վիպական է: Դա, ակներև ժողովրդական հէքաթների հերոս հսկան է (ռուս հրատ. եր. 113, 16—17. սոյն թարգ. 47 11, 12):

8. Արաբական վերսիայում (ռուս հրատ. եր. 71. 31. սոյն թարգ. եր. 7. 20). չը կայ հայ ազգային խմբագրութեան այն տեղեկութիւնը (եր. 80) որ վերաբերում է Գրիգոր լուսաւորչի հայր և Խարովի սպանող Անակին, նրա պարթեական ծագմանը և ին. և շատ հաւանական է, որ այս բանը պատահական չէ: Արաբաց Գէորգ եպիսկոպոսը, որ ամենայն հաւանականութեամբ, օգտուել է յոյն բնագրով, չը գիտէ Ս. Գրիգորի պարթեական ծագումը. նա ասում է, որ Գրիգորը «ծննդեամբ Հուովմից էր» (P. Lagardii Analecta syriaca, 1858, եր. 122):

1) Հետաքրքիր է այժմ յիշատակել. որ de Lagarde-ը ներկայ հայ բնագիրը համարում էր յունարէնից թարգմանուած. «Wie Trdatios, Trdates zeigen: die Armenier selbst werden ihren König nicht mit griechischer Endung genannt haben» (Ges. Abhandl., եր. 174.)

9. Իւր կարգին, արաբական թարգմանութեամբ յայտնի խմբագրութիւնը մեծ ուշադրութիւն է դարձնում Ս. Գրիգորի, սահմանակից երկրներում, վարած կեանքի և նրա յարաբերութեան վերայ, որ նա ունէր ոչ միայն Կեսարիայի այլ նաև Սեբաստիայի եպիսկոպոսական աթոռների հետ: Ս. Գրիգորի Անդեոս արքեպիսկոպոսի մօտ գնալու մանրամասնութիւնը (ուսու հրատ. եր. 123. սոյն թարգ. 57.), նրա ձեռնադրութեան նկարագրութիւնը և յետ այնորիկ հովուապետական աստիճանի բարձրանալը (ուսու հրատ. եր. 127—129. սոյն թարգ. 62—65) յուզարկաւ որուելը Կեսարայից (ուսու հրատ. եր. 129. սոյն թարգ. 65), յետ դառնալիս՝ Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսի մօտ հիւր մնալը, և Անդեոս արքեպիսկոպոսի յանձնարարութեան համեմատ Սեբաստիայի եպիսկոպոսի ուղեկցութեամբ վերադարձը (ուսու հրատ. եր. 131, սոյն թարգ. 66) և ինչ. հայ ազգային խմբագրութեան մէջ կամ կրճատուած են կամ բարձրորդին բաց թողուած: Ազգայնականութեամբ տողորուած հեղինակին, որ իրան Ագաթանդեղոս է կոչում, Կեսարիայի և Սեբաստիայի հետ կապը, բնական է, զիւրեկան չէր կարող լինել:

10. Արգէն իրական հնութիւն է այն, որ տեսնում է արաբական վերսիայի (ըստ երևութին՝ մի անտարբեր վարիանտի) մէջ, որ այդ վերսիայի ընթերցման համեմատ (ուսու հրատ. եր. 121, 13. սոյն թարգ. 55, 10), Տրգատը Ս. Գրիգորի ուղեկցութեամբ Գերջանից Արտաշատ, իսկ Ագաթանդեղոսի համեմատ (եր. 460) Վաղարշապատ է գնում կնոջ, քրոջ և աւագանու հետ խորհրդակցելու՝ հովիւ ընտրելու համար: Այս տարբեր ընթերցմունքը նշանակութիւն է ոտանում կապուելով այն բանի հետ, որ պարզուում է Արտաշատի և Վաղարշապատի վերաբերութեամբ, ծանօթութեան 10 յօդ. Բ. պրակով ուսու հրատ. եր. 205, սոյն թարգ. ծանօթ. 1.):

11. Ս. Գրիգորի զրոյցի համար հին է արաբական վերսիայի և այն մանրամասնութիւնը, թէ Կոստանտինը իմանում է Հայոց թագաւոր Տրգատի դարձը և ուրախանում (ուսու հրատ. եր. 141, 23. սոյն թարգ. 75, 11). դրանով առաջ է գալիս Կոստանտին կայսրի և Հռովմայ կայսերութեան քրիստոնէութեան առաջնութիւնը: Այս գէպքում խօսքը ի հարկ է ոչ թէ իրական դրութեան (Հայաստանում քրիստոնէութիւնը մուտք է գտել Տրգատից շատ առաջ) մասին է, այլ նոյն զրոյցի տեսակէտից՝ եղելութեան տրամաբանական արտայայտութեան մասին: Հայոց ազգային խմբագրութեամբ գուրս է գալիս, որ Կեսարիայի կայսերական եկեղեցին քարոզիչ է ուղարկում Հա-

յառտան, և հարևան տէրութիւնը քրիստոնեայ է դարձնում այն ժամանակ՝ երբ բուն կայսերութեան մէջ կայսրը դեռ կուսպաշտ է (եր. 499):

12. Արաբական վերսիան աւելի իրական է Ս. Հռիփսիմէի և ընկերների նահատակութեան վերաբերութեամբ: Նրանց աղօթքները պատահաբար են յիշուում և բոլոր եղածների մասին զեկուցանում են որոտմամբ շիոթութեան մէջ ընկած ամբոխից կենդանի մնացածները (ուռս հրատ. 81. 22, 26 սոյն թարգ. 16 27—30): Ազգային խմբագրութեան մէջ ասուում է, թէ «այնտեղ պատահաբար կային գրողներ, որոնք գրում էին բոլոր բառերը, և նրանք կարդային թագաւորին առաջ» (եր. 109): Սակայն այստեղ էլ հայկական բնագիւղը չի պաշտպանուում իրանից (ըստ de Lagarde-ի եր. 39) կատարուած յուսնական թարգմանութեամբ, որից պարզուում է, թէ գրողները մասին աւելագրութիւնը բոլորովին յետին ժամանակի նորածութիւն է:

13. Վերջապէս յոյն յայտնի խմբագրութեան հեղինակը, որ երևան է գալիս արաբական վերսիայով՝ վկայ և ականատես է ոչ ամենի այլ միայն մի մասի, իսկ միւս մասի համար նրա աղբիւրներն են «արժանահաւատ մարդիկ» (ուռս հրատ. եր. 148. սոյն թարգ. 82): Իսկ հայ ազգային խմբագրութեան հեղինակը ներկայանում է որպէս Տրդատ թագաւորի ատենադպիր, որը որպէս ականատես գրել է բոլորը իւր տիրոջ համանով (եր. 510): Հարկ չկայ ասել, թէ ո՞վ է աւելի մօտիկ ճշմարտութեան: Սակայն Ագաթանգեղոսը հարկաւոր է համարում աւելացնել, (եր. 510—511), որ իւր ձեռքի տակ եղած նիւթից նա ընտրութիւն է արել և մուծել է իւր պատմութեան մէջ նշանաւոր և կարևոր տեղեկութիւնները, ինչ որ աւելի հեղինակի հայեացքով, ընթերցանութեան համար հասկանալի է,<sup>1)</sup>:

1) Գրողի Ագաթանգեղոս անունի համար, որ միայն հայ ազգային խմբագրութեան մէջ կայ (արաբական վերսիան անանուն է), Այժմ կարելի է ընդունել Գուժշմիդի սրամիտ բացատրութիւնը. այն է յունական «աւետարներ» ստուգարանութիւնը՝ Բայց գուցէ առաջ էլ մինչև ազգային խմբագրութիւնը Ս. Գրիգորի մասին սոյն վերը յունասէր հայերից Ագաթանգեղի էր կոչուում. «Եւանգելիէ»-աւետարան կոչման նման. իսկ մեր խմբագրողը միայն գրքի յունարէն վերտառութիւնը փոխել է յատուկ անուան ձեւի (այդպիսի անուն յիրաւի կար) եւ այդպէս էլ իրան անուանել է: Եւանգելիէ-ն հայերի մէջ կոչուում է «աւետարան» թարգմանուած մայրենի բառով, ինչպէս եւ վրացիների մէջ է: բայց վրացերէն դեռ պատահում է յունական անուն էլ «Եւանգելիէ» ձեւով, թէեւ շատ սակաւ եւ հաւանօրէն



Արաբական վերսիսյի մէջ այնպիսի մանրամասնութիւններ էլ կան ի հարկէ, որ նրա բնագրի հեղինակինն են: Այստեղ հետաքրքիր է ցոյց տալ մի տեղը, որը յայտնում է հեղինակի քաղկեդոնական լինելը: Արաբական բնագրի խմբագրութեան քաղկեդոնական լինելու օգտին մասամբ խօսում է այն, որ նա մուսք է գտել Սինայի քաղկեդոնական օրթօքօքս վանքի մէջ, և երևում է մի ձեռագրում; որ վաւերացրել է քաղկեդոնական մի վրացի, նրա տետրակները թուահամարելով վրացերէն տառերով, գույէ և արտագրելով այն: Քաղկեդոնական խմբագրութիւն լինելը նկատելի է և նրանով, որ խմբագրութիւնը է: դարեց հին չլինելով՝ հնաւոր է համարում հայերի, վրացիների, լազերի (աբխազ) և ալանների (աղուանից) եկեղեցական միութիւնը, որը այդ ժամանակ կարելի էր երեւակայել միայն քաղկեդոնականութեան հողի վերայ: Հեղինակը, ի հարկէ, այնքան էլ միամիտ չի երևում, որ հայերի և հարևան ժողովուրդների մէջ քրիստոնէութեան առաջին քարոզութեան պատմութեան մէջ պարզօրէն ներմուծէր իւր ժամանակակից օրուայ չարիքի շահագրգռութիւնը: Բայց Ս. Գրիգորի տեսիլքի մէջ ընթերցողն էլ կարող է թոյլ տալ մարգարէական տարր: Այստեղ, մեկնութեան մէջ մտնելով հազիւ նկատելի մանրամասնութիւն մոլորեցուցիչ առաջնորդների մասին՝ հեղինակը բաւական ուրբ կերպով ակնարկում է հայ տեղական եկեղեցու յարաբերութիւնը դէպի կայսերական քաղկեդոնականութիւնը, քաղկեդոնական սովորական տեսակէտով այս յարաբերութիւնը պատկերացնելով որպէս հեթանոսական հերձուած ընդհանրական եկեղեցուց, և որպէս հայ հովիւների սողոսկումն՝ հրապուրելու դէպ ի հեթանոսութիւն ընդհանրական եկեղեցու հարստացումը որդիներին էլ: «Յետ այսորիկ, ասէ Ս. Գրիգոր, տեսի գրադմաթիւ հօտ (այժեաց), գոյն նոցա էր սեաւ. անցանէին նոքա ընդ ջուրսն, որ տեղային յերկնից, և նոյնժամայն փոխէին յօգիս և ի դառինս և փայլէին որպէս զլոյս և ասոր նոցա լինէր նման ձեան: Ի հօտից յայտցանէ բաժանեցաւ խումբ մի, և վերստին դարձաւ յառաջին գործն իւր եղև սեաւ, որպէս էրն

ներմուծուած է յունական անմիջական ազդեցութեամբ, բայց առանց աւանմին իմն յաջողութեան: Հաւանական է, որ նոյն բառը յունասէր հայիրի մէջ էլ գործածական էր: Սա կարծում եմ, որ ասածիս հետ կապ ունի արարական վերսիսյի (151. 3-6. սոյն թարգ. 64, 23—29) «Սակս սրբոյն Գրիգորի, որ ի տղայ տիոց կրթեցաւ ի դիտութեան Աստուծոյ. յուսումն քարեաց եւ սուրբ գրոց». «քարեաց» բառը պէտք է հասկանալ բարեհամբաւել, քարոզել աւետարանել խօսքը:

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

յառաջ և փոխեցաւ ի դայլս» և ըն. (ուռս հրատ. 99, 32 37. սոյն թարգ. 34, 26—33): Եւ այնուհետեւ Ս. Քրիզոստը լսում է մեկնութիւնը. «Իսկ որ ինչ վասն մաքուր հօտին յասը սպիտակ՝ այնոքիկ են, որք փայլին մկրտութեամբ և սրբով շոգւով ի ձեռն հովուաց իւրեանց: Իսկ այնոքիկ, որք յետս դարձան ի ճշմարտութենէ, եղեն անօրէնք, փոխեցան և դարձան ի գայլս՝ այդոքին են առաջնորդք, որք հետտին և զհետ իւրեանց զառաժանեն դայլս և տանեն ուր և կամին» \* (ուռս հրատ. 101. սոյն թարգ. 35).

Եթէ Ագաթանգեղոսը թոյլ է տուել իրան, իւր սրտը նպատակի համար ընտրել այնպիսի տեղեկութիւններ որ Ս. Քրիզոստի ձեռքով մաքող շայատանի դարձի մասին զրոյցին, ի փառս հայ ազգային եկեղեցու, ազգային խմբագրութիւն տայ, ապաքէն մեր խմբագրութեան (արարական) հեղինակն էլ նոյն նիւթի վերայ աշխատել է, անկասկած, իւր սրտը նպատակի շահի տեսակէտով: Նրա նպատակը պարզ է. այն է. կայսերութեան սահմաններից դուրս արևելեան բոլոր քրիստոնեայ ժողովուրդներին—հայերին, վրացիներին, լազերին (աբխազ) և ալաններին (աղուանք) ի Քրիստոս միահամուռ ծննդեան գաղափարով միացնել բիւզանդական մեծ քրիստոնեայ կայսերութեան քաղաքական հովանաւորութեան տակ: Նրանց բոլորին հոգեւորապէս միացնել ի մի եկեղեցի յանձին նրանց ընդհանուրի հովուապետ հայ Ս. Քրիզոստի, որ կրթութիւն և ձեռնադրութիւն էր ստացել յոյն եկեղեցում: Ի հարկ է, այդպիսի նպատակի համար պէտք էր սկզբնական տեղական, դաւառ տային յոյն քարոզիչ նահատակի մասին սկզբնական զրոյցն էլ ներկայացնէր բարեյաջող նիւթ: Բայց հեղինակը իւր աշխատանքի մէջ, բաց ի լազերի մասին յիշատակութիւնից, նոր մանրամասնու-

\* Մեր պատմութեան առեւաղներով այդ և դրա համանման Ս. Սահակի տեսիլքը վերաբերում է Ս. Լուսաւորչի ցեղից քահանայապետութեան վերջանալուն և նրանց անարժան յաջորդներին (Ղազար փարպ. Թիֆլ. 1907 թ. 58—75), իսկ մեր եկեղեցու աւանդութեամբ այդ տեսիլքը վերաբերում է Վարդանանց պատերազմի նախընթաց և հետևող դէպքերին:—«Պարթևական տեսանողին յառաջագոյն ազգեցութեամբն զհաւատոյ սրդիս Սրբոյն Քրիզոստի պսակազարդ տեսաւ...: Որ զմերկացեալսն յանճառ լուսոյն զսևացեալսն ի դոյն ածեաց սրոշելով ի սուրբ հօտէն ընտրեալ զքոյսն հաւաքեցեր...» (շարակ. սրբոց Ղ, Լոնդոնացի): Ծան. Հայ թարգ.

Թիւննիր քիչ է ներմուծել, և ի հարկէ, պատճառչունէր զանց առնելու հին պատրաստի նիւթից որ և է բան, եթէ նա ձեռքի տակ ունենար տեղական զրոյցի մեօրոպեան խմբագրութիւնը՝ իւր նպատակին համապատասխան ընդարձակ նախագծով: Մեօրոպի մշակածը, ըստ երևութին, այս կողմից շատ աւելի մօտ էր մեր խմբագրութեան: Հայերէն լեզուով մեզ հասել է մի յիշատակարան ևս, որի նպատակը նոյնպէս է աւելի սերտ միացնել հայերին, վրացիներին և աղուաններին ընդհանուր գրագիտութեան գաղափարով, նրանց դարձնել բոլորին մի կուլտուրական մարմին ի դէմս նրանց բոլորի հայ սօսուցչի, որ գտել է հայերի, վրացիների և աղուանների տառերը, և որ նոյնպէս անպայման յունական կրթութիւն ունէր, յունասէր էր: Այս յիշատակարանը Մեօրոպի կեանքի և գործունէութեան պատմութիւնն է, որ վերագրում է նրա աշակերտ Գորիւնին: Երկու խմբագրութիւն կայ: Նրանց այժմեան ընագիրը կրում է յետնագոյն ժամանակի ազգայնական ոգւով վերամշակութեան յայտնի հետքեր, բայց մի և նոյն դէպքում Մեօրոպի կեանքի յունասիրական սկզբնական խմբագրութեան հիմնական գաղափարը չէ մթադնուած: Նա թերևս կրինել է Ս. Գրիգորի գործերի յունասիրական խմբագրութեան հիմնական գաղափարը. խմբագրութեան, որ ինչպէս պարզուեց, պատկանում է նոյն Մեօրոպի գրչին:

Ս. Գրիգորի գործերի արաբական վերսիայի գաղափարը քաղկեդոնական հեղինակը այսպիսով ուրեմն ժառանգել է իւր նախընթաց յունասէրից. այն ինքնուրոյն չէ: Սակայն այնուամենայնիւ շնայելով մեր խմբագրութեան հեղինակի դէպի տեղական եկեղեցին անարդար և մեծամիտ վերաբերմունքին, որ թելադրել է նրան նրա քաղկեդոնական դաւանութեան համոզմունքը, չի կարելի չխոստովանել, որ նա անձնապէս ունեցել է բարձր եկեղեցական դիտաւորութիւնը: Այդ դիտաւորութիւնը արմատացել է հաւանօրէն, հեղինակի ջերմ հաւատով դէպի իրան հետաքրքրող ժողովուրդների ապագայ կրօնական եղբայրութիւնն ու հոգևոր բարգաւաճումն՝ արտաքոյ ազգայնական պառակտումների: Անյարմար է այստեղ քննել թէ երկրում այս հաւատը որքան արդարացաւ, և կարո՞ղ էր ընդհանրապէս արդարանալ: Այժմ աւելի հետաքրքիր է նկատել, որ Մեօրոպի կենսագրութեան մէջ մտքած միտքը, անկասկած, այսպէս կամ այնպէս, իրականութիւն է արտայայտում: Եւ պէտք է կարծել, որ մեր հեղինակի լուսաւոր հաւատը և, հետևաբար, նրա վաստակի գաղափարը, որ պահպանուած է արարական

վերսիայի մէջ՝ է նոյնպէս հեղինակին ժամանակակից տեղական  
 իրականութեան արտայայտութիւն, թէև, անշուշտ սաստիկ  
 իդէալականացրած: Այս նշանաւոր չափով դիւրացնում է հե-  
 ղինակի անձնաւորութիւնը ճշդելը, մանաւանդ եթէ համաձայ-  
 նենք, որ խմբագրութիւնը քաղկեդոնականի է: Հեղինակը չի  
 կարող յոյն լինել, ինչպէս առաջ ինձ թւում էր: Յիրաւի,  
 յօգուտ յոյնի հեղինակութիւն լինելուն է խօսում մի քանի  
 անգամ կրկնութիւնը, Տրդատի հպատակական յարաբերու-  
 թեան մասին դէպ ի Կոստանդին կայսրը: Հռովմէական կայս-  
 րը հրաւիրում է հայոց Տրդատ թագաւորին, ի միջի այլոց,  
 հարկ վճարելու համար (Եր. 141, 28, սոյն թարգմ եր. 75,  
 20): Հայոց թագաւորը «դնայր առ թագաւոր մեծ քան զինքն  
 խողաղութեամբ առ ի կալ ընդ նորա իշխանութեամբ» (Եր.  
 և 143, 27. սոյն թարգ. 77, 20) հռովմէական կայսրը «պար-  
 տաւորեաց զնոսա (հայոց իշխաններին) հարկս հարկանել»  
 (Եր. և 147, 11. սոյն թարգ. 80, 21): Չընայելով հեղինակի  
 այս յայտնի քաղաքական համակրութեանը դէպ ի քրիստո-  
 նեայ կայսերութիւնը, նկարագրուած ժողովուրդները վերա-  
 բերութեամբ նրա սիրառատ և վերին աստիճանի մտերմական  
 շահագրգռութիւնը, իմ կարծիքով, նրա ոչ յունական ծագումը  
 անկասկած է դարձնում: Գերազանց ուշադրութիւնը, որ նա  
 դարձնում է հայերի վերայ, Տրդատի ավագութիւնը առասպե-  
 լական գոյներով նկարագրելն և վրացիների, լազերի (աբխազ-  
 ների) ու աղուանների (ալանների) թագաւորների նուաստաց-  
 նելն ու երկրորդական դարձնելը նոյնպէս պարզ ցոյց են տա-  
 լիս, որ հեղինակը հայ էր. բայց հայ քաղկեդոնական, որ իւր  
 շարադրութիւնը ի հարկէ հայերէն է գրել:

Սակայն հայ քաղկեդոնականը, որ այնպիսի կենդանի հե-  
 տաքրքրութիւն է ցոյց տալիս միաժամանակ և դէպի լազ, վրացի  
 և աղուան եկեղեցիները, ծագմամբ, ամենից առաջ, կարող էր  
 լինել Տայոց գաւառից (վրացերէն Տաօ, հայերէն Տայք): Այս  
 բանի ապացոյցն է և նրա շահագրգռութիւնը դէպի իւր ծննդ-  
 դավայր Արտանուշի բռեշխութիւնը, որ դրուած է Հայոց Տըր-  
 դատ թագաւորի ստորագրեալ իշխանութիւնների թւում (Եր.  
 115, 6-7. սոյն թարգ. 49, 6): Այս բանի ապացոյցն են աշ-  
 խարհագրական անունների տեղական, վրացական ձևերը: Եթէ  
 հեղինակը տայեցի է, ուրեմն նա գրել է՝ մինչև Ը. դարի կէտը,  
 երբ դեռ գոյութիւն ունէր հայոց բռեշխութիւնը Արտանուշ  
 գետի հովտում, ուր ի միջի այլոց բռեշխները հիմնեցին և  
 Կաղմախ ամրոցը (Вахштъ, Descript. géogr., 118): Ը. դարի

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

կէսից սկսած Տայք-Կղարջքից սկսում է վրաց եկեղեցական կազմութիւնը. հայ քաղկեդոնական համայնքը վրացի է դառնում, և այդ օրից սկսած էլ հող չը կար, որ վրացիները, լազերը և արևադնեքը հայերի հետ միանալու գաղափարով առաջնորդուէին, այն էլ հայ հովուապետի գերիշխանութեան տակ: Հայերի վերջին քաղկեդոնական կաթողիկոսը, ըստ երևութին Բ. դարի առաջին քառորդից յետոյ չէ:

Այսպէս, ըստ իս, հայերի մէջ Ս. Գրիգորի պաշտամունքի զարգանալով գրականութեան մէջ ստացուեցին հետևեալ հիմնական բաժանումները, մի կողմ թողնելով սկզբնական բերանացի կամ գրաւոր զրոյցները գաւառային, արևմտահայ նահատակ քարոզչի մասին.

1. Ս. Գրիգորի մասին գիրքը, որ տարբեր անուններ է կրում, թերևս և Ագաթանգեղի է, յիշուի. Մեսրոպի գործն է կամ վերագրուում է Տարօնեցի Մեսրոպին,—է Գ. դարի ուղղափառ յունասիրական խմբագրութիւն: Այդ մեզ չէ հասել: Հաւանօրէն թարգմանուել է այն յունարէն: Թերևս 714 թուին այդ թարգմանութիւնից օգտուել է արաբաց Գէորգ եպիսկոպոսը:

2. Քաղկեդոնական խմբագրութիւնը Ե.-Բ. դարերի գործ է, կազմուել է այն Տայոց գաւառում և թերատ պահպանուել է, յունարէնից թարգմանուած, այժմ հրատարակուող արաբերէնում: Այն թարգմանուել է, հաւանօրէն, վրացերէն էլ:

3. Ագաթանգեղոսի պատմութիւնը Բ. դարի ազգային խմբագրութիւն է: Նրանից շուտով էլ կատարուել է յունարէն թարգմանութիւնը, որը վերջին անգամ հրատարակեց de Lagarde»-ը: Այն է միայն պահպանուել հայ լեզուով, բայց մի քանի յետնագոյն ուղղումներով ու յաւելումներով:

Մեզ մնում է բնագրի վերաբերութեամբ մի քանի դիտողութիւններ անել. նրանք դասաւորուած են հետևեալ յօդուածներում. (մենք հայ թարգմանութեան մէջ դնում ենք միայն 1 յօդուածը):

Սինայի Ս. Եկատերինի մատենադարանի № 460 ձեռագիրը, որ ըստանդակում է ի թիւս այլ վկայաբանական նիւթերի Ս. Գրիգորի նահատակութեան արաբերէն բնագիրը, գրուած է

մագաղաթի վերայ, սկիզբը և վերջը, տեղտեղ, և մէջը պակաս է: Երեսները թուահամարուած են կոպտերէն (ղպտի), տետրակների հիմնական թուարկութիւնը վրացերէն է եկեղեցական հասարակ տառերով: Այս թուարկութեամբ դատելով՝ սկզբից պակաս է տասներկու տետրակ համարեա ամբողջովին, կայ միայն 10-րդ տետրի ութերորդ թերթը, ճակատի առաջին թերթը: Ձեռագիրը այժմեան ձևով վերջանում է 34-րդ տետրակի առաջին թերթով:





Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

**1.** Վաղարշապատ. (սոյն թարգ. եր. 28, 121. պարբ. 10: Ռուսհրատ. եր. 178. 205. Замѣч. § 10. ծանօթ. առ f): «Պէտք է ի նկատի ունենալ, գրում է պ. Մառը, որ այստեղ և յատկապէս եր. 98, 12, (սոյն թարգ. եր. 34, 3.) ուր ձեռագրի ընթերցումն ուղիղ Արտասատ փոխ. Արտաշատ է, հայ ազգային խմբագրութեան մէջ կոչուում է Վաղարշապատ: Որովհետև վերջին քաղաքի անունը արաբական ընագրում հազիւ երբէք է պահպանել իւր իսկական ձևը, այլ ամեն կերպ այլակերպուել է, հեշտ է թափանցել առեղծուածին, որ ցոյց տուած երկու դէպքում էլ մենք ունենք Վաղարշապատ քաղաքի անուան աղաւաղումն, որին հետեւել է նրա շփոթուելը Արտաշատի հետ. մանաւանդ որ 98, 12 (սոյն թարգ. 34, 3.) ցուցումն էլ յարմար է գալիս Վաղարշապատին, ուր ցոյց է տրուում հայոց նախաթու տաճարը և սովորական աւանդութիւնը, սակայն պէտք է յիշել, որ հայոց մէջ մի աւանդութիւն էլ կար, որը նոյն տաճարը Արտաշատումն է համարում (Փաւստ. III. 12, Ս. Պ. Բ., Վենետ. եր. 30): Ի դէպ, 92, 18, աւելագրութիւնը ես եմ արել, որով առաջարկուած թարգմանութիւնը դուրս է գալիս «Գնացին ընդ նմա ի քաղաքէն Արտաշատայ [ի Վաղարսապատ]». (եր. 93. սոյն թարգ. 28, 20 28—29.) առանց աւելագրութեան՝ պէտք է թարգմանուէր. «Գնացին ընդ նմա ի քաղաքն Արտասատ»:

—Պ. Մառի ակնարկած աւանդութեան աղբիւր Փաւստոսն ասում է. (Վենետ. եր. 30) «Ապա անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ Արտաշատ, յեկեղեցին դառնային և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յԱթոռ հայրապետական»:—Երասին անցնելու համար այդ ժամանակ Արարատեան դաշտում յայտի էր միայն Տափերայ կամուրջը Արտաշատի մօտ, որ յգտնուում է Վաղարշապատից դէպի արեւելք: Եւ Կեսարեայից վերադարձող Յուսիկը Տափերայ կամուրջից անցնելով պէտք է մտնէր Արտաշատ և ապա դառնար դէպի եկեղեցին, որ հաւանօրէն պէտք է Արտաշատից դուրս դէպի արեւմուտք, և այս դէպքում, Վաղարշապատում համարել:

Եթէ «յեկեղեցին դառնային» բառին նշանակութիւն էլ չտանք, «և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական» այն նշանակութիւնն ունի, ինչ որ ասուած է նրա մասին Կեսարիայում ձեռնադրութեան ժամանակ. «... Եկին հասին ի քաղաքն կեսարացոց. ետուն ի կաթուղիկոսութիւն զՅուսիկն ձեռնադրել, զորդին Վրթանայ: Եւ նստուցին

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

զնա յաթոռն առաքելոյն Քազէոսի և յաթոռ իւրոյ հաւուն մեծին Գրիգորի. և դարձան անդէն մեծաւ խնդութեամբ» (Փաւստ. եր. 30): Ըստ իս «նստուցին յաթոռ», թէ՛ Վեսարիայն և թէ՛ Արտաշատում, ընդարձակ մտքով պէտք է հասկանալ, ապա թէ ոչ, հարկ կըլինէր Վեսարիան էլ Ս. Գրիգորի աթոռ համարել:

2. Արտասատ (ռուս հրատ. եր. 99. սոյն թարգ. եր. 34). տես 1. ծանօթութիւն

3. Ի Վաղարշապատ քաղաք (ռուս հրատ. եր. 118. սոյն թարգ. եր. 48) տես դարձեալ 1. ծանօթութիւն:

Ուստի հրատարակիչը երկարօրէն և մանրամասնաբար բացատրում է ապացոյցներով արար. վերսիայի լեզուի և կէտադրութեան աղաւաղումները, որոնց պատճառով դժուար է եղել վերծանել գրուածքը, և ընթերցումն, ուրեմն և ռուս թարգմանութիւնը շատ տեղ կատարուել է ենթադրաբար: Արար վերսիայում աշխարհագրական անունների շփոթութիւններ էլ կան, որանք հետեանք են, է որ սխալ գրչութեան մանաւանդ կէտադրութեան ժամանակ և է, որ աշխարհագրական անունների անծանօթութեան. Այսպէս օրինակ, Արտաշատ և Վաղարշապատ անունները շփոթուած են իրար հետ: Հայ յատուկ անունների շփոթութեան մի պատճառն էլ այն է, որ յոյն թարգմանիչը հայ անունը շատ տեղ յունարէն է թարգմանել, և այդ թարգմանութիւնն էլ աղճատումով մտել է արար. վերսիայի մէջ:

4. Իշխանն Գիւլսի (ռուս հրատ. եր. 115, <sup>6</sup> և ՅԱԿԳ. §. 7. եր. 202. կէտ. 4.: Սոյն թարգ. եր. 49<sup>5</sup>): 9. Մասը ծանօթութեան մէջ տուած է: «Երկիր Գիւլսի, ի անդէ Անգեզայ» Անգեզ է միայն իմ ենթադրութիւնը. Արարական բառը տառադարձութեամբ ի-ճ-Ի-Յ-Յ, հ-բ-ն-ս, որ առանց ուղղելու իմ համար է non-liquet. — անհասկանալի, բայց այս ընթերցումն անուշադրութեան դէպքում հեշտութեամբ կը դառնայ ջ-ի-բ-ս. ԱՅ-Ի-Յ-Յ, տարբերութիւնը միայն կէտադրութեան մէջ է: Այսպիսի ընթերցման ժամանակ 114, <sup>4</sup> (ռուս հրատ.) առանց ձգձգելու կարելի է ընդունել յոյն γύψ — անգղ-կամ սրա. սեռ. փեսն հոլովը γύψ — անգեզ, և այսպէս կունենանք Անգեզաւառի անունը յունարէն թարգմանուած: Որովհետեւ անգղ, սեռ. անգեզ, հայերէն նշանակում է ցին-КОРМЯНЬ:

Այդպէս հայ Անգղը-բառ ենթադրութեան այ. Մասը յունարէն թարգմանութեան մէջ թարգմանուել է γύψ կամ

Generated for alum (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752  
Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

արա սեռական հղիվը. γοπός անգղ, ցին. տառադարձութեամբ  
ն-6-π-ε=Գիպա:

Սոյն ծանօթութեան Ե-րդ կէտում պ. Մառը (ուրև հրատ.  
202. սոյն թարգ. եր. 49) Դեսպոտեաց-ի համար ասում է.  
«Դեսպոտեաց բանի մէջ յայտնապէս երևում է, որ յոյնը յաճախ  
հայ յատուկ անունները, մանաւանդ երկրների անունները,  
Թարգմանում է: Բնագրի շարայարութեան համեմատ այս գա-  
ւառը պէտք է զուգադիպէր հայ Ծովդեսայք-ին, սակայն Ծով-  
դեսայք անունը չկայ նոյն իսկ հայերէնից Թարգմանուած յոյն  
բնագրում:

Դեսպոտեաց-ըստ պ. Մառի՝ հայ Շահապիվան բանի  
յոյն Σαπτιανών-ի Թարգմանութիւնն է: Շահապ նշանակում  
է սատրապ, իշխող, տէր, և Շահապիվանը յունարէն  
δεσποτειών կամ δεσπότων-է դարձրել, որը մտել է և արաբ. վեր-  
սիայի մէջ: (Ռուս հրատ. եր. 202. կէտ, 5:)

5. Կ. սատ-ն. (ուրև հրատ. 117, 42. սոյն թարգմ. 51,  
45). պ. Մառը ծանօթութեան մէջ (եր. 206, § 11) համարում  
է հետեւանք նման տառերի շիթութեան և ասում է «Ս-սատ-ն  
արաբական փոխադրութեան մէջ (116, 7) թերևս նոյնպէս  
տառերի շիթութեան հետեւանք է, որ կարելի է բացատրել զա-  
նազան կերպով, բայց մի և նոյն մտքով, յատկապէս կարելի է  
ընթեռնուել Կասալտոն, այս դէպքում՝ հայերէն Քասաղ—տուն  
բանի իսկական փոխադրութիւն, որ նշանակում է Քասաղի շըր-  
ջան, [տառացի տ ու ն]: Կարելի է կարգալ նաև Քասալէտին  
փոխ. Քասալէտոն: Այս դէպքում Քասալէտոն պէտք է ընդու-  
նել երկրի անուն յունական հայցական կամ սեռական հոլովով  
վրացական «ք» (кв) յօդով. Касалетին—Касалетоն: Հայերէնում  
Քասաղ յայտնի է որպէս գետի անուն, որի մօտ էր Վարդգէտի  
Արտիմէդ ամուր քաղաք, որը կարող է աղաւաղուելով լինել,  
կամ Ἀσουήνον, ինչպէս կարգացում է յունական արգի  
բնագրում համապատասխան տեղում (de Lagarde եր. 81, 4),  
և կամ Աշոց, որ հայ ձևի յունական տառացի Թարգմանու-  
թեան [Ἀζων], ձեռք ընթերցումն է, որովհետև, յերաւի, հայե-  
րէն բառերը յոգ. սեռ. «ոց» վերջանում են, որը արաբերէնում  
տառերի և կէտերի շիթութեամբ գօտար չէ ան-ի հետ նոյնաց-  
նել Ἀ[ρ]τ[ε]ροονών (այժմեան յունական բնագրում Ἀρσορουονών -է):  
Եթէ թիւրքերի լինի նոյնացումն, (ուրև հրատ. եր. 115, 9.  
սոյն թարգ. եր. 49. 10.) М-т-э-НОВ-т-а-а-а-а-а-а, կարելի է  
«А(р)прүтєвѣ—Արթրունեաց»-կարդալ:

Անունների կարգում Կարգալէթ (ուրև հրատ. եր. 139, 9.

Սոյն թարգ. եր. 72 22, և սոյն ծանօթութեան մէջ) պ. Մառը համարում է Կորճէք կամ Կորճայքը: «Կ-մ-ը-դ-լ-ա» (Ռուս. հրատ. եր. 115, 43. Սոյն թարգ. 49, 17) նոյն ընթերցումն ունի. (տես Ռուս. հրատ. եր. 106. § 11, a): «Կ-մ-ը-դ-լ-ա», ասում է պ. Մառը, պէտք է կարդալ „Кордая“ փոխ. „Корчайка“ «Կորդայ—Կորճայք»:

6. Ի տաճարն Ապօղոնի (Ռուս. հրատ. եր. 117, 14: Սոյն թարգ. եր. 15, 16) բացատրութիւն անս Ռուս. հրատ. եր. 64, 9. 19 և 177, 1. 9: Սոյն թարգ. եր. 84, 15—26. և 119 15—25:

7. Ափրուջիա, պ. Մառը (Ռուս. հրատ. ծանօթ. եր. 202 կէտ. 6) ասում է. «Ես չկարողացայ Ափրուջիան նոյնացնել Անի ամրոցի հետ: Փռիւզիան արաբերէն այդպէս է կոչւում: Այստեղ ի հարկէ Փռիւզիայի մասին խօսք լինել չի կարող. բայց շատ հաւանական է, որ արտագրողները հայ քաղաքի, իրանց անձանօթ, անունը շփոթել են յայտնի աշխարհագրական անունի հետ: Սակայն այդ էլ կարծել է տալիս, որ բնագրում չէ եղել յունական Ἀνί—փոխ. Ἀνία անունի արաբ պարզ փոխադրութիւնը, որից դժուարին կը լինէր Ափրուջիա շինել . . . » Թերևս Ափրուջիա բառը առաջ եկած լինի արտագրողի մասամբ աղաւաղումից և մասամբ էլ «սրբագրութիւնից, համարելով այդ բառը Փռիւզիա, և այդ իւր կարգում բարեխիղճ փոխադրութիւն է յունական ἀραχ. Ἀνία (յամուրն Անի) ընթերցման, երբ թարգմանիչը բացի ἀραχ-բառը յատուկ անուն համարելուց, որպէս նրա մասն, կարող էր շփոթել v-u-ի հետ և ըստ այնմ էլ արաբերէնը տառագրել:

—Ափրուջիա արդեօք Ախուրեան կամ լաւ ևս Արփաչաք անունների հետ առնչութիւն չունի. գուցէ քաղաքի անունը արաբ թարգմանիչը կամ արաագրողները նոյնացրել են գետի անունի հետ:

8. Երկոքին սոքա-տես սոյն թարգ. եր. 57, 19. և 99, 13-16: Ռուս հրատ. 123, 20. 159, 53:

9. Բուսաց-տես սոյն թարգ. 67, 27. 99-100: Ռուս հրատ. 133, 24-25. 160:

10. Ա-դ-ի-թ.-տես սոյն թարգ. 70 13. Ռուս հրատ. 137 2: Պ. Մառը որ և է բացատրութիւն չէ տուել: Իսկ հայ ազգային Ագաթանգեղոսում ցոյց տրուած տեղը խօսուում է մանուկների մասին, որոնց ժողովեց Տրդատ յոյն և ասորի դըպրութեան վարժեցնելու, որոնց մէջ էին և քրմերի մանուկները:

Generated for alium (Columbia University) on 2013-01-16 16:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041479752 Public Domain in the United States; Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-us-google

**11.** Գ-ը-զ-կ-ի-տ. տես սոյն թարգմ. եր 70 և <sup>100</sup>. Ռուս հրատ. եր. 137, 9 և 160:

**12.** «Յղեաց նա զԱղբիանոս ի գաւառս Բագրևանդայ և առ ամենայն բնակիչս կողմանց Եփրատայ (սոյն թարգ. 71, <sup>23-24</sup>; Ռուս հրատ. 137, 30-31):—Ազաթանգեղոսի հայ բնագրում կարգում ենք. . . . առեայ ձեռնադրութիւն ի նմանէ, որ առաջնոյն Աղբիանոս անուն, որ ապա կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու (եր. 487):

Աղբիանոսին ընդհանրապէս մեծ դեր է յատկացւում արաբական վերսիայում (սոյն թարգ. եր. 73) գրելով, . . . զսուրբն Աղբիանոս կացոյց (ս. Լուսաւորիչ) գլուխ ամենեցուն ի կառավարել զերկիրն . . . .

Աղբիանոսը Հայաստանի հարաւակողման եպիսկոպոսն էր «կողմանցն Եփրատական գետոյն» աւելի ընդարձակ մտքով ընդունելով: Հայրապետական աթոռի գահակալութեան վերաբերութեամբ նրա սերունդը Լուսաւորչի սերնդի հետ մրցում էր:

Աւելորդ չենք համարում դնել այստեղ պ. Ն. Մառի հետեւեալ բացատրութիւնները.

—**Պ.** Մառը Դրունք Կեսարիոյ բառը չի կարողանում պարզել. մի արուարձան է այն, թէ՛ Կեսարիայի հռովմէական հին անունն է Porta Caesarea, (Ռուս հրատ. եր. 199. § 7. կէտ 3):

—**Պ.** Մառը ասում է, չը կարողանալով սկզբում ճշգրել արաբերէնը թարգմանեցի *благочестивель* (Ռուս հրատ. եր. 81, 37—38.) այդպէս և մենք թարգմանել ենք աւետարանիչ (սոյն թարգ. եր. 17, 49.) պէտք է լինի ռուսերէնը «и сдѣлалъ его прославленнымъ передъ врагами» (ռուս հրատ. եր. 191. 32-38). ուրեմն սոյն թարգմանութեան մէջ (եր. 17, 49) պէտք է ուղղել. «և արար զնա փառաւորեալ առաջի թշնամեաց» կամ «և փառաւորեաց զնա առաջի թշնամեաց»:

—Երրորդութիւն (Ռուս հրատ. 131, 22. սոյն թարգ. եր. 65, 20) տեղը կամ թաղը այդպէս էր կոչւում, ըստ պ. Մառի, (Ռուս հրատ. եր. 211. կէտ. 6.) այդտեղը հաւանօրէն Ս. Երրորդութեան եկեղեցի լինելու պատճառով: Հայաստանում առաջին եկեղեցին ևս ըստ հայ Ազաթ. (եր. 472) Ա. Գրիգորից կառուցուեց Ս. Երրորդութեան անունով:

—Տէրն Ցարօնի „Архонтъ Тарона“ (սոյն հրատ. եր. 49, 30. ռուս. հրատ. 115, 20) պ. Մառը ասում է (ռուս. հրատ. եր. 204—5) պէտք է փոխել Տէրն Արծրունեաց:

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.

- Աբխազք, Աբխազաց 48, 49, 68, 69, 71, 83, 100, 104, 105, 106,  
 Աբու-լ Վալիդ 103.  
 Աբրահամ Նահապետ 14, 42.  
 Աբրահամ քերական 91.  
 Ագաթանգեղիէ 122, 127.  
 Ագաթանգեղոս 83, 84, 87, 88, 90, 91, 97, 115—119. 121, 122, 124, 127. 132, 133  
 Ա-դ-ի-թ—70. 132.  
 Աթենաս 54.  
 Աթինոզէն-Աթանազինէ 66, 67, 99, 114, 115.  
 Ալանիա 105.  
 Ալանք 48, 49, 52, 67—71, 83, 100, 104—106.  
 Աղբիանիոս եպսկ, 71, 73. 133  
 Աղբիոս եպս. Մամիկ. 72.  
 Աղուանք, Ալուանք 105,  
 Անակ հայր Ս. Գրիգորի 120,  
 Անգել-Անգղ-Գիպս 49. 130  
 Անի. 94. 132.  
 Անտիոքոս եպիսկոպոս Կար-դալէթի 72.  
 Աշտիշատ (Ճատիսատ) 66.  
 Ապպոզոն 51. 132.  
 Ատիխէն (Աշխէն) 46, 59, 64, 67.  
 Ատոն (Աշոցք) 74. 131  
 Ասպետ 49.  
 Աստեանք (Հաշտեանք) 71.  
 Ատրապատական 72.  
 Արարատ գավառ 11, 55, 72.  
 Արարատ լեառն 47. 120.  
 Արևմտեան Հայաստան 116.  
 Արզէն (Երէզ) 53. 116.  
 Արևմտեան Կովկաս 110.  
 Արիստակէս 73, 74, 81, 118.  
 Արծրունիք 131—133.  
 Արմաթան 49.  
 Արսամունիք 72.  
 Արսուկ եպս. Սիրազայ 72.  
 Արսէն Կաթողիկոս Վրաց 92.  
 Արտանուջ 48, 126.  
 Արտասատ (Արտաշատ) 7, 26—28, 34, 51, 55, 72, 121. 129, 130  
 Արտաւազդ Մամիկոնեան 57.  
 Արտաւազդ պետ պատրկաց Հայոց 74.  
 Արտեմիդ չաստուածուհի 51, 53.  
 Արտիթ եպսկ. Մաղխազաց 72.  
 Արտիմէդ 131  
 Արփաշայ 132  
 Ափրոզիտէ 66.  
 Ափրուջիա 53.—132  
 Բաբելոն 17.  
 Բագաւան 68, 70.  
 Բագրևանդ 71. 133  
 Բաս եպս, Բեկուղաց 71.  
 Բասեանք 71.  
 Բարշամինա 119.  
 Բդեաշխ 49.  
 Բզուն 72.  
 Բիկուղաց 71  
 Բիւզանդացիք 91.  
 Բրբիշոյ Կաթողիկոս 94.  
 Գայեանէ կոյս 8, 11, 13, 14,



- 18—20, 24, 25, 35, 47, 79, 83.  
**Գեւոր** 100.  
**Գինաարեթիոս եշխան Մազ-  
խազաց** 72.  
**Գէորգ Եպիսկոպոս արարաց**  
91, 97, 101, 118, 120, 127.  
**Գիւանք** 71.  
**Գիպոս (Անգղ)** 49. 130  
**Գուրեհա** 106, 110.  
**Գուրգարք** 49.  
**Գութշմեհա** 122.  
**Գրեգոր Լուսաւորել** 4—8,  
26—30, 35, 36, 39, 40, 44,—  
48, 50—84, 86—105, 107, 114  
—125, 127, 130, 133  
**Գրեգորիոս** 120.  
**Դանիէլ** 17,  
**Դատիաս հազարապետ ար-  
քայի** 74.  
**Դարանաղիք** 53, 72, 73, 77,  
**Դեսպոտիք** 49. 131  
**Դերջան—Դերձան** 54, 71,  
100, 121.  
**Դը—Լապարգ** 97, 101 118,  
122, 127 131  
**Դիոկղետիանոս** 8, 11, 60,  
75, 79.  
**Դիոս** 53.  
**Դիւբուա** 113  
**Դմ. Բակրաձէ** 113,  
**Դուկն** 72. 115  
**Դը-ը-կ-ի-տ** 70, 100. 133  
**Դրունք Կեսարիոյ** 64. 133  
**Եգեր** 109, 110.  
**Եգիպոս—Մ'Եգիտ-էլ-ի** 109.  
**Եգիպոսոս** 33.  
**Եգը-իս** 110  
**Եզնիկ կողբացի** 90.  
**Եզնիկ քահանայ է. գարե**  
95, 96, 97.  
**Եզր կաթողիկոս** 93.  
**Եկատերինէի վանք** 127.  
**Եսայի մարգարէ** 42,  
**Եսթեր** 18,  
**Երասխ գետ** 129.  
**Երուսաղէմ** 84, 87, 89, 98,  
106 111.  
**Երրորդութիւն—Սեբաստիա-  
յի մօտ տեղ** 65, 133  
**Եւանգելիէ-Աւետարան** 122.  
**Եւթաղիոս Եպիսկոպոս** 71.  
**Եւսերիոս Եպիսկոպոս** 71.  
**Եւսերիոս Եպոս. Հռովմայ** 78,  
**Եփրատ** 54, 58, 68, 71. 133  
**Զարեանդ (Заридонъ)** 49.  
**Զաքարիա կաթողիկոս** 91  
**Զաքարիա-Հռետոր** 100  
**Զևս** 52, 53, 55. 119.  
**Զուարթնոց եկեղեցի** 93.  
**Թադէոս առաքեալ** 94. 130  
**Թիւ աւան** 54.  
**Թովմաս** 71.  
**Թորգան (Միթրոդան)** 53. 119  
**Իբակէրէթ** 71.  
**Իբիր-բ-զ-խուա** 70. 113  
**Իբն-Խորդազբէն** 99.  
**Իմերէլ** 108.  
**Իմեր, Իմեր-խււի** 108, 110  
**Իմերեթիա** 95, 106, 108, 110.  
114  
**Իսահակ նահապետ** 14,  
**Իսրայէլ (Երկեր)** 10.  
**Իվեր, Իվերիա** 106, 107, 110,  
113,—116  
**Իտալիա** 77.  
**Լազիք, Լազիստան** 52, 95,

99, 100, 105, 106, 110, 116

Լանգլուա 90,

Լիկինոս, Լիկինոս պատրիկ  
68, 78.

Luigi Carrer. 90.

Խաբիրա-Հաբիրա (Ագապէս)  
Եպսկ. Սուսբարետացոց 72.

Խոսրով հայր Տրդատայ 120.

Խորհուռունիք 49.

Մովզեայք 131

Մովք 49.

Կախի, (Կախեթիա) 107

Կաղմախ 126

Կապադովկիա 59, 71, 95.

Կասալտուն 131

Կարդալէթ 72. 132

Կարմիր Մով 17.

Կարրիէր Ա. 83, 84.

Կեսարիա (Մազակա Մա-  
ժակ) 56—59, 62, 64, 67, 74,  
76, 77, 95, 98, 99, 121. 129,  
130, 133

Կիրիակոս Եպիսկոպոս Ար-  
սամունեանց 72,

Կիւրիոն կաթողիկոս վրաց 92.

Կորիւն 125.

Կղարճք 127.

Կմ-ը-ը-լ. 49. 132

Կոլ-ի-ի-ի 107.

Կոմիտաս կաթողիկոս 90.

Կ. Պօլիս 105.

Կոստանտին կայսր 75, 77,  
78, 80, 81, 83, 84, 93 98. 114,  
115. 121, 126.

Կովկաս 52, 106.

Կորդուաց 49.

Կորճայք, կորճէք 131

Куликовскіи 104, 105.

Կուսարողուկտա Խոսրովի—  
դուխտ 26—28, 46, 59, 64, 67,

Կ-սատուն 51. 131

Կոլ-ի-ի 107

Կօսիք 49.

Կօրան 100, 101.

Համազասպ 89.

Հայաստան, Հայք 11, 12, 24,  
26, 36, 48, 49, 53, 59, 63—66,  
70, 71, 72, 74—84, 86, 87,  
89, 91—95, 97, 105, 110 112-  
115,—119, 121, 124

Հաշտեանք (Աստեանք) 71.

Հեղինէ դշխոյ 80, 84, 89. 114

Հնդիկք 33.

Հոնիսիմէ կոյս 8, 11, 13,  
14, 17—21. 23—26, 35, 37, 46,  
60, 79, 83, 90, 99, 101. 122

Հռովմ 8, 11 12, 24, 60, 75,  
77—79, 81, 120, 121

Ղազար Փարպեցի 89, 94,  
96, 97. 124

Ղևոնդեանց շարակ. 124

Ղևոնդիոս Եպիսկոպոս Կե-  
սարիոյ 57—59, 62—64, 66—68  
74, 76, 77, 98, 99, 121,

Ճան 110

Ճորոխ 109.

Ճրագալոյց Աստուածայայտ-  
նութեան, և Զատիկ 90

Մազակա, Մաժակ (Կեսա-  
րիա) 57

Մաղխազունիք, Մաղխազք  
49, 72.

Մամիկոնեանք 49, 72, 99.

Մայմոնիդ 103.

Մանիարէթ 73

- Մանուկ 74.  
 Մասիս գաւառ 47.  
 Մասրոպ, Մեսրոպ 96, 97,  
 125, 127.  
 Մարիամ Աստուածամայր 52,  
 113, 114  
 Մար-Աւգինա-Մարուգէ (Ս.  
 Եւգինէոս) 90.  
 Մարավէլի 113, 114, 115,  
 Մարզվարդ 99, 100.  
 Մելիտինէ 105,  
 Մեծ Սոփէնք 71.  
 Մես-խ-ի 107.  
 Միթրոզան (Թորզան) 53.119  
 Միջագետք 49.  
 Մնացորդաց գերք 87.  
 Մնգրեղիա 106, 108,—110.  
 113 114, 115,  
 Մոկսոն 71.  
 Մոսո-խ-ի 107  
 Մովսէս Եպս. Իբակլիբէթի 71.  
 Մովսէս Խորենացի 83, 84,  
 87, 107, 110. 117. 119.  
 Մուսլիմ Բ. Աբու-Մուսլիմ  
 99.  
 Մուրավիեմ 113, 114.  
 Մուքադդասի 103  
 Մ-տ-դ-ն. 49. 131.  
 Mrs Gibson 98  
 Մ-Ֆ-ն-ս 49  
 Յակոբիկ 91.  
 Յայէլ 18,  
 Յեխուդէ-իբն-Տիբբօն 103.  
 Յեսու Արենակեաց 91.  
 Յովհան Իմաստասէր 118  
 Յովհաննէս աւետարանիչ 32  
 Յովհաննէս Եպս. Կուանի-  
 տացւոց 72.  
 Յովհաննէս Մկրտիչ 41, 63,  
 66, 67, 99. 114, 115,  
 Յովհան Ոսկերերան 91.  
 Յովհան 17.  
 Յուստինիանոս 105,106, 111.  
 114.  
 Յունաստան 92.  
 Յուսիկ 129, 130  
 Եւրոպոզոնոսոք 26.  
 Եւքալաքեմ 113, 114  
 Եւրոէս Մեծ 89, 97.  
 Եւրէս Գ. Շինոզ 93.  
 Երկիայի ժողով 81, 97. 118,  
 Երկողաոս Ադոնց 90. 96  
 Ե. Մառ, բ, 83, 86, 111, 129  
 —133  
 Երկողայոս Միստիք 104.  
 Н. Кондаковъ 115  
 Եոյ 14, 15,  
 Եռնէ կոյս 86, 117, 118,  
 Nöldeke 103,  
 Շատիսատ (Աշտիշատ) 66  
 Շուշան 17.  
 Ոսկի-Հորդա 105.  
 Ուստիք 49.  
 Պարսկաստան 23.  
 Paul de Lagarde 91. 120.  
 Պետրոս առաքեալ 78.  
 Պետրոս Եպիսկոպոս Սեբաս-  
 տիոյ 65—68. 121,  
 Պետրոս Մայումացի 111.  
 Պոնդոս, պոնդացւոց աշխարհ  
 59, 80.  
 Պրուդենցիոս 99.  
 Պրօկոպիոս 104, 112, 114.  
 Ջաւախի. 107.

- Ռեքեկա 14, 17.  
Ռշտունիք 49.  
Ռուսաստան 120
- Սաքինա 98,  
Սահակ Պարթև 89, 96; 97.  
Սատաղ'ա 71.  
Սարրա 14, 18,  
Սաքարթվելո 107.  
Սեբաստիա 58, 65, 66, 70,  
71, 99, 113, 114, 121.  
Սեբաստիայի 40 մանկունք  
113, 114, 115, 121.  
Սեղբեսարոս Հռովմայ եպս.  
76, 83, 84.  
Սև ծով 106.  
Սիմէօն միտրոպոլիտ 105.  
Սինա, 83—85, 98, 103, 104,  
111, 123, 127  
Սինակսարեան բնագիր 84.  
Սիրագ 72.  
Սիւնիք 49, 71.  
Սոմխեթիա, Սոմե-խ-ի 107.  
Սուանեթիա 110.  
Սուանք 111, 112.  
Սուլրամ 108,  
Սուսբարետացիք 72  
Ս. Երկիր 111,  
Սուլբիաս Վ. Պարոնեան 90.  
Սոփրոնիոս 71.  
Սպեր 109, 110.
- Վաղարշապատ 12, 28, 48,  
72, 80,—81 121, 129, 130  
Վանական վարդապետ 89.  
Վարդգէս 131  
Վարդան վարդապետ 89.  
Վիրք, Վրաստան 48, 49, 52,  
68,—70, 84—87, 100, 105—  
—107, 110, 112, 117, 118
- Վ. Բ. Բօղէն 85.  
Վրթանէս—Վարդան 73, 74,  
120, 130
- Տայք 126, 127.  
Տայք Կղարճք 127.  
Տասատէս, Տաճատ 74.  
Տարօն 49, 66, 72, 133  
Տափիրայ կամուրջ 129  
Տեխուրա գետ 114  
Տիրիկէս եպիսկոպոս Ատրա-  
պատականի 72.  
Տրդատ Տրդատէս 5, 7, 11,  
12, 26, 37, 48, 50—52, 54—  
57, 59, 64, 67, 69, 72,—78,  
80, 81, 90, 98, 99, 119, 122,  
126, 132
- Բագիկ 100,  
Բուսք 66, 67, 99, 100, 132
- Ցաթիա, Ցաթա արքայորդի  
Լազաց 105.
- Փարեզ 90.  
Փաւստոս Բիւզանդացի 84,  
110, 129, 130  
Փիլոն 88.  
Փղշտացիք 14.  
Փոքր Սոփէնք 71  
Փռիւզիա 132  
Փօտ պատրիարք 91
- Քանան (երկիր) 14  
Քասախ գետ, Քասալտուն  
131,  
Քարթլ 107.  
Օդա 27, 28.  
Friedländer 103

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	Տող	սխալ	ուղիղ
	վեր • ներք		
3	— 3	փչեցեն	փչիցեն
6	— 17	զհեթանոս	զհեթանոսս
7	— 12	տանել	տանել
12	2-3 —	զարս [77]: Ե կանանց	զարս [77] Ե կանանց
15	— 7	տարակուսեմք	տարակուսիմք
17	— 12	տապոյ	տապոյ
25	— 9	նորա	նոցա
31	— 13	զխոր	զխորս
32	11 —	լրել Եւրով Հայր	լրել Եւրով: Հայր
36	1 —	անոքիկ	այնոքիկ
41	19 —	էի մեռեալ որպէս	էի որպէս մեռեալ
43	— 13	ընդ ոտիք	ընդ ոտիք
49	5-6 —	Անգելայ	Անգեղ
49	— 14	Գուրգարաց	Գուրգարաց
69	— 14	էառ ալիք	էառ, ալիք
71	6 —	Ե փոքու	Ե փոքու
72,	9 —	[132]	[139]
72,	— 14	Տերիկէս	Տիրիկէս
75,	— 15	Նա նմա (Տրդատ)	Նա (Տրդատ) նմա
109	19-20—	զուկորդ	զուգորդ
115	— —	215	115









